Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"
կայքի՝ www.freebooks.do.am
կողմից եւ ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"

Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...
For more info: www.freebooks.do.am

ԴՈՒՔ ԼՈՒՍԱԼՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ԼԵՌՈՒՄՆ ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԵՐԴ
ԷՈՒՄՈՊԱՏԵԼԱՀԱՆԵԼ ԳՐՔԵՐ:

ԹԿԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՆ՝

www.freebooks.do.am

ՀԱՐՀԱՎԱՆ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ:
ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱԿԵԼԻ ՀԱՂԹԵՑԱՆՈՒԹՅՈՒՆ:

ԳՐԵՔ ՄԵԶ՝ freebooks@rambler.ru

ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԸ ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

Լեռնային Ղարաբաղի հակամարտություն, հայ-թուրքական հարաբերություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ, ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԸ ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

Լեռնային Ղարաբաղի հակամարտություն, հայ-թուրքական հարաբերություններ

ԵՐԵՎԱՆ

2 0 0 9

Երաշխավորված է տպագրության ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

ՀՏԴ 341
ԳՄԴ 67.91
Թ 822

Թորոսյան Տ.Ս.
Թ 822 **Հարավային Կովկասը օգոստոսյան պատերազմից հետո**. Լեռնային Ղարաբաղի հակամարտություն, հայ-թուրքական հարաբերություններ:-Եր: «Տիգրան Մեծ» հրատ., 2009թ. - 124 էջ:

Քաղաքական գիտությունների դոկտոր, 2006-2008 թթ ՀՀ ԱԺ նախագահ Տիգրան Թորոսյանի նոր գիրքը նվիրված է Հարավային Կովկասում 2008թ օգոստոսյան ռուս-վրացական պատերազմից հետո ստեղծված աննախադեպ իրավիճակի և դրա արդյունքում Հայաստանի համար խիստ կենսական երկու հիմնախնդիրների՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության և հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման զարգացումների վերլուծությանը.

ԳՄԴ 67.91

ISBN 978-99941-0-331-7

© Տ Թորոսյան, 2009թ
© Հեռանկարային հետազոտությունների և նախաձեռնությունների կենտրոն, 2009թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 5

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԸ ՌՈՒՍ-ՎՐԱՑԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

Նահանջ երգով 8

Օտար խաղեր 21

Գոդոյին սպասելիս. կրկին պատմության քառուղիներով . 49

Մադրիդյան սկզբունքներ. հին սխալներն ուղղելու նոր հնարավորություն 63

Ղարաբաղյան խնդրի լուծումը հնարավոր է միայն ինքնորոշման իրավունքի հիման վրա . . 76

ՀԱՎԵԼՎԱԾ 1 ՄԻՆՉ ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ՌՈՒՍ-ՎՐԱՑԱԿԱՆ ՊԱՏԵԱԶՄԸ 83

Հարաբերությունների կարգավորման հիմքը պետք է լինի արժեքային համակարգը . 84

ՀՀ Ազգային ժողովի լսումներ հայ-թուրքական հարաբերությունների հարցով, 19 դեկտեմբերի, 2007թ

Ղարաբաղյան խնդրի կարգավորում՝ իրավիճակը, անելիքները, հեռանկարները 91

ՀՀ Ազգային ժողովի լսումներ Ղարաբաղյան խնդրի կարգավորման հարցով, 29մարտի, 2005թ

Ինչու պատահեց Ցեղասպանությունը և կճանաչվի՞ արդյոք այն 101

Ազգայնական մատենաշար, թիվ 8, 1997թ

ՀԱՎԵԼՎԱԾ 2 ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 111

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հայտարարությունը Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ, 29 ապրիլի, 2008թ 112

Հայաստանի Հանրապետության, Ադրբեջանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության հռչակագիրը, Մոսկվա, 2 նոյեմբերի, 2008թ 115

Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունների և Շվեյցարիայի արտաքին գործերի դաշնային դեպարտամենտի հայտարարությունը, Ժնև, 23 ապրիլի, 2009թ 118

Մինսկի խմբի համանախագահ երկրների հայտարարությունը, Լ'Աքիլա, 10 հուլիսի, 2009թ 121

ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԳԱՐՅԱՆԻ,

ԱՇՈՏ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ,

ՎԱՉԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ

ՀԻՇԱՏԱԿԻՆ

ՆԱԽԱԲԱՆ

2008թ. օգոստոսյան ռուս-վրացական պատերազմը Հարավային Կովկասի ռազմավարական լանդշաֆթի վերաձևման տեսակետից ունի բացառիկ նշանակություն, քանզի ոչ միայն բացահայտեց ռուս-ամերիկյան տևական դիրքային պայքարը տարածաշրջանում ազդեցության գոտիների համար, այլև խթան դարձավ բոլոր դերակատարների ակտիվացման և բոլոր ուղղություններով գործընթացների արագացման համար: Համաձայն պատմության զարգացման ցիկլային տեսության, այդ պատերազմը նաև ազդարարեց այն տասնամյակի սկիզբը, որի ընթացքում հաստատված իրողությունները դառնալու են 21-րդ դարում տարածաշրջանում ձևավորվող հավասարակշռության հիմնատարրերը: Ահա թե ինչու այդ գործընթացները հաջողությամբ հաղթահարելու ցանկություն ու ձգտում ունեցող տարածաշրջանի յուրաքանչյուր երկրից ու ժողովրդից պահանջվում է կարողությունների ու ջանքերի կենտրոնացում՝ բարդ մարտահրավերները հաղթահարելու համար: 20-րդ դարում նման իրավիճակին անպատրաստ գտնվելով՝ հայ ժողովուրդն ունեցավ ահռելի կորուստներ. ցեղասպանություն՝ հայրենիքի ու ազգի զգալի մասի կորստով, մտավորականության երկու իրարահաջորդ սերունդների(1915թ., 1937թ.) ջարդ, բնականոն զարգացման հնարավորությունները բացառող 70-ամյա ընթացք: Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի համար մերօրյա իրավիճակը եզակի է: Մի կողմից՝ երկար ու ձիգ դարերից հետո անկախ պետականության վերականգնման 18 տա-

րիներ, կամքի ու նվիրումի հրաշք՝ երկրորդ հայկական պետականության հաստատում Արցախում, մյուս կողմից՝ բարոյահոգեբանական ծայրահեղ անկում, թանկարժեք ժամանակի անխոհեմ կորուստ, ներքին ու արտաքին խիստ վտանգավոր մարտահրավերների առկայություն, և 21-րդ դարում ամենակարևորի՝ պետության կայացման համար անհրաժեշտ փորձի ու գիտելիքների գրեթե իսպառ բացակայություն: Մինչդեռ պահանջվում է առավելագույն շրջահայացություն և արդյունավետ գործունեություն, քանզի տարածաշրջանում ազդեցության գոտիների վերաբաժանման արդի փուլում ավանդական գործոններին՝ հայրենիքում լիարժեք կենսագործունեության անհրաժեշտություն (Հայաստան), կենսական տարածքի ապահովում (Թուրքիա, Ադրբեջան), հակամարտությունների առկայություն (Լեռնային Ղարաբաղ, Աբխազիա, Հարավային Օսեթիա) կայսերապաշտական հիշողություն (Ռուսաստան), ավելացել են լրացուցիչ, բայց ոչ երկրորդական գործոններ՝ միաբևեռ գերիշխանության թելադրանք (ԱՄՆ), էներգետիկ պաշարների փոխադրման ուղիներ(Եվրամիություն, Իրան, կասպյան ավազան), ռազմա-քաղաքական թատերաբեմերից(Աֆղանստան, Իրաք) ոչ հեռու տեղադրություն և այլն: Ակնհայտ է, որ նման բարդ և բազմավեկտոր գործընթացներում որևէ երկիր հաջողություն կարող է ակնկալել միայն քաղաքական, գիտական, քարոզչական կառույցների արդյունավետ, ներդաշնակ աշխատանքի պարագայում, ինչի բացակայությունը Հայաստանում դառնում է խրոնիկական հիվանդություն՝ հղի ծանր հետևանքներով: Նման մտահոգությունն է պատճառը, որ փորձ է արվել ուշադրություն հրավիրել ռուս-վրացական պատերազմով սկսվող լայնածավալ գործընթացի և դրանում Հայաստանի դերակատարության ու մատահրավերների վրա՝ նախ չորս ծավալուն հոդվածներով ներկայացնելով թե հիմնախնդիրները, և թե լուծումները, ապա դրանք ամբողջացնել գրքով: Հավելված 1–ում ընդգրկվել են հեղինակի նախորդ տարիների մի քանի հրապարակումներ, որոնք վկայում են, որ հոդվածների հիմքը կազմող մոտեցումներն ու սկզբունքները ներկայացվել են տարիներ շարունակ՝ անկախ

քաղաքական իրավիճակից, իշխանությունների կազմից և այլն: Այդ շարքում կարևոր տեղ ունի նաև Ազգային ժողովի հայտարարությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման ընթացքի մասին, որի նախագիծը ներկայացրել է գրքի հեղինակը:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԸ ՌՈՒՍ-ՎՐԱՑԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

ՆԱՀԱՆՋ ԵՐԳՈՎ.
Վերջին զարգացումները Հարավային Կովկասում[1]

Հոդվածը նպատակ ունի ուրվագծել այն պատկերը, որը ձևավորել է Հայաստանի արտաքին քաղաքականությունը «նոր» շրջանում՝ Հայաստանում 2008թ. ապրիլի 9–ից և օգոստոսյան ռուս-վրացական պատերազմից հետո Հարավային Կովկասում տեղի ունեցող բուռն զարգացումների արդյունքում:

Առաջին հայացքից ընդամենը վեց ամիս ընդգրկող ժամանակը կարող է շատ կարճ թվալ վերլուծությունների համար, բայց այն առանձնացել է աննախադեպ ակտիվությամբ ու հագեցվածությամբ Հայաստանի արտաքին քաղաքական հետաքրքրությունները ներառող բոլոր հիմնական ուղղություններով՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորում, հայ-թուրքական հարաբերություններ, այդ թվում՝ Ցեղասպանության ճանաչման խնդիր, տարածաշրջանային հակամարտություններ, աշխարհաքաղաքական վերադասավորումներ և այլն: Առավել ևս, որ ապրիլին՝ նոր կառավարության ձևավորումից հետո, Հայաստանն ունեցավ արտաքին քաղաքական գործունեության երկու նոր հիմնական

1 «Ազգ» օրաթերթ, 14 հոկտեմբերի, 2008 թ

դերակատարներ՝ Հանրապետության Նախագահն ու արտաքին գործերի նախարարը, և նոր շեշտադրումների սպասելիքները դարձան միանգամայն իրական:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորում

Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող այս խնդրի վերաբերյալ առավել ուշագրավը Նախագահ Ս. Սարգսյանի ելույթն է ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 63-րդ նստաշրջանում: Ցավոք, ելույթի այդ հատվածը ոչ միայն ամենաանհաջողն է, այլև խիստ խնդրահարույց են դրանում օգտագործված երեք հիմնական դրույթներն էլ: Ըստ դրանցից առաջինի, «միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկը հանդիսացող ինքնորոշման իրավունքը դարձել է ժողովուրդների արտաքսման, էթնիկ զտումների, ցեղասպանությունների պատճառ» (այս և հետագա մեջբերումները՝ ըստ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի սեպտեմբերի 26–ի համարի): Դժվար է ասել, թե ով է պատրաստել ելույթի տեքստը՝ արտգործնախարարությունը, թե՞ Նախագահի աշխատակազմը, սակայն ակնհայտ է, որ իրականությունը շրջված է գլխիվայր: Ոչ թե ինքնորոշման իրավունքն է դառնում էթնիկ զտումների ու ցեղասպանության պատճառ, այլ ինքնորոշման իրավունքի չճանաչումն ու չկիրառումը: Երբ Ինդոնեզիան տևական ժամանակ չէր ճանաչում Արևելյան Թիմորի ինքնորոշման իրավունքը և հալածանքների էր ենթարկում ինքնորոշման հայտ ներկայացրած ժողովրդին, ՄԱԿ-ը Ինդոնեզիային պարտադրեց ոչ միայն ճանաչել այդ իրավունքն, այլև չխոչընդոտել դրա կիրառմանը, սպառնալով, որ Ինդոնեզիան կճանաչվի ցեղասպանություն իրականացրած երկիր: Մինչդեռ ինքնորոշման իրավունքը էթնիկ զտումների ու ցեղասպանության պատճառ հայտարարելը միանգամայն համահունչ է աղրբեջանական հանրահայտ տեսակետին:

Հանրապետության Նախագահի ելույթում օգտագործված երկրորդ

դրույթը, ըստ որի «Մենք հեռու ենք այն մտքից, որ ինքնորոշման յուրաքանչյուր հայտ պետք է հանգուցալուծվի անջատման տեսքով», ուղղակիորեն հակասում է ոչ միայն հայկական կողմերի շահերին, այլև միջազգային իրավունքի շրջանակներում ինքնորոշման իրավունքի կիրառման նորմերին: Ինքնորոշման իրավունքը անվերապահ և համապարտադիր՝ **erga omnes** և **jus cogens** կարգավիճակներով օժտված միջազգային իրավունքի նորմ է և, ըստ «ՄԱԿ կանոնադրության համաձայն երկրների միջև բարեկամական կապերի ու համագործակցության վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների մասին» հռչակագրի, «այդ իրավունքի կիրառման նպատակը կարող է լինել **ինքնորոշվող ժողովրդի կողմից ազատորեն ընտրված** հետևյալ երեք դեպքերից մեկը. ա) ինքնիշխան և անկախ պետության ստեղծում, բ)ազատ միացում անկախ պետությանը կամ նրա հետ միավորում, գ) որևէ այլ քաղաքական կարգավիճակ»: Այսինքն, միջազգային իրավունքի նորմերը սահմանում են, որ **միայն ինքնորոշվող ժողովուրդը կարող է որոշել, թե ինքնորոշման դեպքերից որն է ցանկանում ընտրել:** Որևէ երկիր կամ միջազգային կազմակերպություն դրան միջամտելու լիազորություն չունի[2]:

Երրորդ դրույթը, որն օգտագործվել է այդ ելույթում՝ Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման առնչությամբ, ամենաանհաջողն է. «Արդյունավետ և կայուն լինելու համար անջատման միջոցով ինքնորոշման իրավունքի իրականացումը պետք է ստանա ներգրավված բոլոր կողմերի համաձայնությունը»: Հեշտ է նկատել, որ այս մոտեցումը ևս սկզբունքորեն հակասում է միջազգային իրավունքի վերը բերված նորմերին: Ավելին, այն Ադրբեջանի համաձայնությամբ է պայմանավորում ինքնորոշման իրավունքի արդյունավետ իրականացումը և այդ տրամաբանությամբ Լեռնային Ղարաբաղի անջատման իրավունքի իրականա-

2 Միջազգային իրավունքի շրջանակներում ինքնորոշման իրավունքի կարգավիճակի, իրացման հնարավորությունների համապարփակ վերլուծությունը տես **Թորոսյան Տ.** Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը միջազգային իրավունքի շրջանակներում -Երևան, 2008, մենագրությունում

ցումը երբեք արդյունավետ չի լինի, քանզի Ադրբեջանը երբեք դրան համաձայնություն չի տա: Ավելի ցանկալի ձևակերպում Հայաստանի կողմից Ադրբեջանը դժվար թե երազի:

Ի՞նչն է այս կոպիտ սխալների պատճառը: Ելույթի տեքստը պատրաստողների անտեղյակությո՞ւնը միջազգային իրավունքի նորմերին ու այդ շրջանակում Լեռնային Ղարաբաղի անկախության անխոցելի փաստարկներին, միջազգային հանրության առջև «հանդուրժողականության» ու «լայնախոհության» անհարկի դրսևորումների ձգտո՞ւմը, մակերեսային ու անփույթ վերաբերմո՞ւնքը երկրի համար կենսական նշանակություն ունեցող հարցերին:

Հայ-թուրքական հարաբերություններ

Նման հարցեր են առաջանում նաև հայ-թուրքական հարաբերություններում վերջին շրջանում նկատվող զարգացումների վերաբերյալ: Թուրքիայի նախագահ Գյուլը սեպտեմբերի սկզբին Երևան այցելելուց մի քանի օր անց Բաքվում հայտարարեց, որ նախագահ Սարգսյանի հետ հանդիպումից տպավորություն է ստացել, որ «հայերը պատրաստ են վերադարձնել Ադրբեջանի գրավյալ տարածքները»: Հայկական կողմը որևէ կերպ դրան չարձագանքեց: Մինչդեռ նման կարևոր խնդիրների առնչությամբ երկկողմ հանդիպումներից հետո կամ կողմերը հանդիպումները մեկնաբանում են շատ մոտ ձևակերպումներով, կամ, եթե կողմերից մեկը ներկայացրել է մյուսի համար անընդունելի մեկնաբանություն, այն ժխտվում է կամ տրվում է սեփական տեսակետը: Լռությունը տվյալ դեպքում ոչ միայն ընկալվում է որպես համաձայնության նշան, այլև նոր հարցեր է առաջացնում. ո՞ր տարածքների մասին է խոսքը, ինչի՞ դիմաց, ե՞րբ և այլն: Եթե կարգավորման բանակցությունների պարագայում խորհրդապահությունը հասկանալի և ընդունված սկզբունք է, ապա երկկողմ հանդիպումներից հետո կողմերից մեկի մեկնաբանու-

թյուններն անպայման պետք է ունենան համարժեք արձագանքներ: Հավանաբար հենց լռության պատասխանն էր Գյուլի ավելի ուշ արած հայտարարությունը, որ Թուրքիան կարող է բարելավել իր հարաբերությունները Հայաստանի հետ միայն այն բանից հետո, երբ վերջինս կազատի Ադրբեջանի տարածքները.

Անշուշտ, Հայաստանը պետք է նախաձեռնող քաղաքականություն իրականացնի և այդ համատեքստում Գյուլին Հայաստան հրավիրելը կարող է դիտվել հաջող քայլ: Սակայն թեև այդ քայլը որակվեց որպես «ֆուտբոլային դիվանագիտություն», այն չպետք է սկսվեր ու վերջանար ֆուտբոլային հանդիպումով: Մինչդեռ Գյուլի այցին հետևած զարգացումները վկայում են, որ ոչ միայն նախապատրաստական հանդիպումներ չեն եղել (խոսքը ոչ թե այցի իրականացման տեխնիկական խնդիրների լուծմանը վերաբերող հանդիպումների մասին է, այլ երկու նախագահների քննարկելիք հարցերի ու հնարավոր համաձայնությունների), այլև դրանք չեն էլ լինելու, քանզի թուրքական կողմի նախապայմանները մնում են անփոփոխ: Ավելին, հայկական կողմը ևս մեկ ռևերանս արեց՝ հայտարարելով, որ դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ու սահմանների բացումից հետո կարելի է նաև հանձնաժողով ստեղծել Ցեղասպանության խնդիրները քննարկելու համար: Ցավալի է, սակայն պետք է արձանագրել, որ Հայաստանը կուլ է տալիս խայծը:

Հանձնաժողովի ստեղծումը ինքնին անիմաստ է, քանզի գիտական շրջանակներում տարաբնույթ հարցեր քննարկելու համար կան հանդեսներ, հրավիրվում են սեմինարներ, խորհրդաժողովներ և այլն: Գիտական քննարկումները միջպետական կառույցների ստեղծման անհրաժեշտություն չունեն: Միաժամանակ, ակնհայտ է, որ եթե անգամ նման հանձնաժողով ստեղծվի, ապա այն լինելու է անպտուղ. երկու պետություններն այնտեղ ներգրավելու են իրենց տեսակետները ներկայացնող գիտնականների, որոնք իրենց(իրենց պետությունների) դիրքորոշումները պահպանելու են մինչև վերջ: Նման հանձնաժողովը կարող է ունենալ միայն մեկ իմաստ ու նպատակ. դրա գոյության ողջ ընթացքում Թուրքի-

ան ստանալու է Ցեղասպանության հետագա ճանաչումը կասեցնելու զորեղ մի գործոն՝ այլ պետություններին ներկայացնելու համար. եթե Հայաստանն է պատրաստ քննարկելու այդ «դեպքերին» վերաբերող խնդիրները, ո՞ր տրամաբանությամբ եք դուք պառրաստվում ճանաչել Ցեղասպանությունը:

Հայաստանի համար անպտուղ նախաձեռնությունների մեջ ներգրավման օրինակ է և Նյու-Յորքում տեղի ունեցած արտգործնախարարների եռակողմ հանդիպումը: Երեք պետությունների ներկայացուցիչներ սովորաբար հանդիպում են, երբ նրանցից մեկը միջնորդ է դառնում մյուս երկուսի խիստ լարված հարաբերությունների պարագայում, կամ եթե կան երեքին հավասարապես վերաբերող բարդ խնդիրներ: Դժվար թե որևէ մեկը լրջորեն վերաբերվի Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման հարցում Թուրքայի միջնորդությանը, ոչ միայն վաղօրոք հայտարարված և մինչ օրս պահպանվող իր նախապայմանների առկայության, այլ նաև Ադրբեջանից ոչ պակաս շահագրգռության պատճառով Ղարաբաղյան խնդրի ադրբեջանահաճո լուծմամբ: Գաղտնիք չէ նաև, որ մինչ Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծումը, ըստ Ադրբեջանի պաշտոնական տեսակետի, Բաքուն բացառում է ցանկացած այլ բնույթի խնդրի քննարկում Հայաստանի հետ: Ուրեմն, ո՞րն էր այդ քննարկումների առարկան, ո՞ր սկզբունքների շրջանակում, ո՞րն էր Հայաստանի դիրքորոշումը քննարկվող խնդիրների լուծումների վերաբերյալ: Եթե քննարկվել է Ղարաբաղյան խնդիրն, ապա որտեղ էր ամենաշահագրգիռ կողմի՝ Լեռնայի Ղարաբաղի ներկայացուցիչը: Ընդհանուր, հերթապահ բացատրությունները այս հարցերից որևէ մեկի պատասխանը չեն տալիս: Նման հանդիպումները ոչ միայն անպտուղ են Հայաստանի համար, այլև արժեզրկում են Հայաստանի հայտարարությունները Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի հարգման մասին. Այդ իրավունքին առնչվող դիրքորոշման ներկայացման բացառիկ իրավունքը պատկանում է Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչներին: Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման գործընթացում Հայաս-

տանի իշխանությունների գործողությունները հակասում են ոչ միայն միջազգային իրավունքի նորմերին, այլև Ազգային ժողովի ապրիլի 29-ի հայտարարությանը, որով խորհրդարանն այլ առաջարկների շարքում նշել է նաև կարգավորման գործընթացին ԼՂՀ ներկայացուցիչների մասնակցության ապահովումը՝ որպես միջազգայնորեն ճանաչված կողմ: Քանի դեռ Հայաստանում չի գիտակցվել այս ակնհայտ ճշմարտությունը և գործնական քայլեր չեն արվել Լեռնային Ղարաբաղին բանակցությունների սեղանի մոտ վերադարձնելու ուղղությամբ, տարբեր տրամաչափի բրայզաներ շարունակելու են ամեն օր բարբաջել, որ խնդիրը կարգավորվելու է Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում և Հայաստանի պաշտոնական ներկայացուցիչներն էլ «լայնախոհությամբ» լռելու են: Թուրքիան էլ շարունակելու է տարածաշրջանային լիդերի կամ գոնե կարևոր «խաղացողի» իր կերպարը ձևավորող խճապատկերի բաղադրիչները հավաքել: Այդ մոտեցման շրջանակում է միայն իմաստ ստանում թե Գյուլի այցը Երևան, թե արտգործնախարարների եռակողմ հանդիպումը Միացյալ Նահանգներում և թե «Կայունության և համագործակցության պլատֆորմի» ստեղծման թուրքական նախաձեռնությունը, որի վերնագրից բացի ոչինչ չկա և չի լինելու, քանզի հարևանի դեմ սահմանները փակ պահող, նորմալ հարաբերությունների հաստատման համար նախապայմաններ թելադրող երկիրը նման նախաձեռնությամբ հանդես գալու անկեղծությունը հաստատելու նպատակով գոնե կհրաժարվեր նախապայմաններից: Բայց դա կլիներ միայն այն դեպքում, եթե Թուրքիան տեսներ, որ իր ջանքերը կարող են ի դերև ելնել Հայաստանի լուրջ և հիմնավոր փաստարկումների արդյունքում: Կոչերը՝ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու և ապագա սերունդներին ծանր ժառանգություն չթողնելու վերաբերյալ, չեն կարող փափկացնել Թուրքիայի «սիրտը»: Ճիշտ հակառակը: Թուրքիան իրեն զգում է ինչպես ձուկը ջրում հատկապես տարածաշրջանում ազդեցության գոտիների սահմանագծերի վերանայման ժամանակ: 20-րդ դարասկզբին, երբ գրեթե նույն դերակատարներով

նույն գործընթացներն էին տեղի ունենում Հարավային Կովկասում, պատերազմում Անտանտայից ջախջախված Թուրքիան կարողացավ իր կարևոր դերակատարության կեղծ «վավերագրեր» ներկայացնել Ռուսաստանին ու ապահովել իր համար առավել բարենպաստ լուծումներ: Այսօր էլ, երբ Հարավային Կովկասում միմյանց հրմշտում են այստեղ տեղավորվել ցանկացող Միացյալ Նահանգներն ու իր արժանապատվությունը վերագտնել ձգտող Ռուսաստանը, Թուրքիան ակտիվորեն հյուսում է տարածաշրջանում իր կարևոր դերակատարությունը հաստատող պատկերը: Դրա վառ վկայությունն է Թուրքիայի նախագահի ելույթը ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 63-րդ նստաշրջանում: Սակայն ի՞նչ է շահում Հայաստանը՝ մանակցելով այդ ամենին: Ոչինչ՝ բացառությամբ կարճատև PR-ակցիայից և մի քանի օտարերկրյա միջին աստիճանի պաշտոնյաների «քաջալերիչ» հայտարարություններից: Ժամանակն է հասկանալու, որ որևէ այց, հանդիպում ու բանակցություն իմաստ ու նպատակ է ստանում այն ժամանակ, երբ նախապես մշակվում է դրանց ժամանակ քննարկվող խնդիրների շրջանակը, նախապատրաստական խմբերը փոխհամաձայնեցնում են դրանցից մի քանիսի եթե ոչ վերջնական լուծումներն, ապա գոնե դրան տանող քայլերը և այդ ամենը ներկայացվում է հասարակությանը:

Աշխարհաքաղաքական վերադասավորումներ և հայ-վրացական հարաբերություններ

Ռուս-վրացական օգոստոսյան պատերազմը ոչ միայն դարձավ Հարավային Կովկասում Ռուսաստանի և Միացյալ Նահանգների միջև ազդեցության գոտիների բաժանման համար տևականորեն մղվող դիրքային պայքարի քողազերծման առիթ (բավական է միայն ծանոթանալ այդ և հաջորդող օրերին ռուս և ամերիկացի բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարություններին), այլև աշխարհաքաղաքական լուրջ

խնդիր, քանզի այդ բաժանումից զատ առնչվում էր համաշխարհային քաղաքականության մեջ Ռուսաստանի դերակատարության վերանայմանը, հակամարտությունների կարգավորմանը և այլն: Թեև անցած ժամանակահատվածում ներկայացվել են նախագահ Սահակաշվիլու կողմից պատերազմ նախաձեռնելու դրդապատճառների տարատեսակ վարկածներ ու մեկնաբանություններ, սակայն առավել հավանական է թվում, որ այդ նախաձեռնության հիմքում եղել է հետևյալ պարզեցված սխեման: Համաշխարհային օլիմպիական խաղերի բացման նախօրյակին Վրաստանը սկսում է պատերազմ, որը կարող էր ունենալ երկու հնարավոր ելք. կամ Խաղերի գործոնը դառնում է վճռորոշ և միջազգային հանրության ուժեղ ճնշման ներքո դադարեցվում է պատերազմն ու Վրաստանն ունենում է խորհրդանշական ձեռքբերում (Սահակաշվիլին մասնակիորեն կատարում է հողահավաքի իր խոստումը) կամ այն, ինչ տեղի ունեցավ: Վրաստանը «ազատվեց» Աբխազիայից և Հարավային Օսեթիայից, որոնք խանգարում էին, մասնավորապես, ՆԱՏՕ-ին անդամակցությանը, ստացավ մեծածավալ ներդրումների իրական հեռանկար, Ռուսաստանը ձեռք բերեց այդ երկու տարածքները և համաշխարհային գործընթացներում նոր դերակատարության հայտ ներկայացրեց, Միացյալ Նահանգները Վրաստանն ամբողջությամբ «պոկեց» Ռուսաստանից և ստացավ Հարավային Կովկասում լիարժեքորեն հաստատվելու իրական տարածք: Իհարկե, դեռ անհրաժեշտ է, որ Վրաստանի ժողովուրդը «հասկանա», որ սա իր համար լավագույն հեռանկարն ունեցող տարբերակն էր, որ տարածքային ամբողջականության սկզբունքի հարգման և գերտերությունների կողմից ազգերի ինքնորոշման սկզբունքի փաստացի կիրառման հետ կապված անհարթությունները վերացվեն, սակայն այդ հարցերի լուծումը սոսկ ժամանակի հետ կապված տեխնիկական խնդիր է: Ինչպիսի՞ն էին այդ պատերազմի հետևանքները Հայաստանի համար: Մինչ այժմ տարբեր վերլուծաբաններ մատնանշել են միայն մեկ օգտակար արդյունք. Աղրբեջանը կարծես թե հասկացավ, որ հակամարտությունները ռազմական ճանապարհով հնարա-

վոր չէ լուծել: Բայց մարդկության պատմությունը վկայում է, որ պատերազմներից արված հետևությունները միայն սահմանափակ կյանք ունեն Ավելին, իրականում Վրաստանին առնչվող հակամարտություններն, այնուամենայնիվ, հենց ռազմական լուծում ստացան՝ ի օգուտ ավելի ուժեղ Ռուսաստանի: Հետևաբար որևէ օգտակար արդյունքի մասին խոսելը լուրջ չի լինի, մինչդեռ Հայաստանի կորուստներն ավելի քան ակնհայտ են. խաթարված ու դեռևս մինչև վերջ չվերականգնված տրանսպորտային հաղորդակցություն, 670 միլիոն դոլարի կորուստներ (ըստ Հայաստանի կառավարության գնահատման), հանուն տարածքային ամբողջականության սկզբունքի պաշտպանության խաչակրաց արշավանք Արևմուտքի կողմից, ինչը տևական բարդություններ է ստեղծելու Ղարաբաղյան խնդրի կարգավորման համար: Իհարկե, պետք է հաշվի առնել օբյեկտիվ դժվարությունները՝ աշխարհագրական անբարենպաստ դիրք, ռուս-վրացական դիմակայության զույգի ամենաանբարենպաստ համադրումը և այլն· Այդուհանդերձ, այդ գործոնները Հայաստանը չի կարող փոխել և պետք է լուծումներ գտնել դրանց առկայության պարագայում: Որպես այդպիսին ընտրվեց պասիվ չեզոքությունը՝ լռությունը, ի տարբերություն մյուս հարևանի՝ Թուրքիայի, որն ընտրեց ակտիվ չեզոքությունը: Իրադարձությունների հետագա զարգացումը դարձավ ևս մեկ վկայություն այն բանի, որ պասիվությունը լավագույն դեպքում կարող է նվազեցնել կորուստները, սակայն չի կարող ձեռքբերումներ ապահովել, առավել ևս այնպիսի նուրբ հարաբերություններում, ինչպիսին հայ-վրացականն է, որտեղ արտաքին ձևն ու խորքային բովանդակությունը կտրուկ տարբերվում են: Հայ և վրացի ժողովուրդների դարավոր բարեկամության մասին վաղուց մաշված արտահայտությունները արդեն ժպիտ էլ չեն առաջացնում: Հարևան պետությունների միջև հարաբերությունները չեն կարող կառուցվել նման պարզունակ բանաձևերի վրա: Մի՞թե ժամանակը չէ տեսնելու, որ Վրաստանը ցանկացած այլընտրանքի դեպքում նախընտրում է գործ ունենալ ոչ Հայաստանի հետ: Չնակերպվե՞լ են արդյոք փոխադարձ հետաքրքրություն

ներկայացնող հարցերը, ո՞րն է Վրաստանի շահը, որը պետք է վերջինիս մղի Հայաստանի հետ ակտիվ համագործակցության: Ե՞րբ է վերջ տրվելու Ջավախքի հարցում գավառական մտածողությանն ու պարզունակ քաղաքականությանը:

Առանձին խնդիր է հայ-ռուսական հարաբերությունների զարգացումը ռուս-վրացական պատերազմից հետո, որի վերաբերյալ միանգամայն նոր, կարևոր շեշտադրումներ է արել Ռուսաստանի արտգործնախարար Ս. Լավրովը «Ռոսիյսկայա գազետայում» հոկտեմբերի 7–ին հրապարակված հարցազրույցում: Ընդ որում, նկատելի է զգալի փոփոխություն նաև Թուրքիայի և Ադրբեջանի նկատմամբ դիրքորոշումներում:

Երկրորդ ամիսն է, ինչ Ռուսաստանը խիստ զգուշավոր վերաբերմունք ունի Ադրբեջանի նկատմամբ: Նախ, Աբխազիայի և Հարավային Օսեթիայի անկախությունը ճանաչելուց անմիջապես հետո պարոն Լավրով շտապեց հայտարարել, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն այլ դեպք է, քանի որ առաջին երկուսի առնչությամբ տեղի է ունեցել պատերազմ, էթնիկ զտումներ, ցեղասպանության փորձ: «Ռոսիյսկայա գազետայում» տպագրված հարցազրույցում, բավական մանրամասնորեն անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանը, գրեթե ոչինչ չի ասում Ադրբեջանի մասին: Իհարկե, Վրաստանը «կորցնելուց» հետո հասկանալի է Ռուսաստանի խիստ զգայնությունը Ադրբեջանի նկատմամբ, քանզի վերջինիս կորստով ոչ միայն լիովին կվերանա ադրբեջանական էներգակիրների փոխադրման վրա Մոսկվայի ազդեցությունը, այլև Ռուսաստանը ստիպված կլինի հրաժարվել Կովկասից հարավ իր ազդեցության ընդլայնման գաղափարից: Ռուսաստանի համար այս պահին առանձնապես նշանակություն չունի անգամ այն հանգամանքը, որ Հայաստանը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ է, Ադրբեջանը՝ ոչ: Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման մասին խոսելիս Ս. Լավրովը մի քանի անգամ շեշտում է «Հայաստանի ահռելի դժվարու-

թյունները արտաքին աշխարհի հետ շփումների հարցում», ընդգծելով, որ այդ իրավիճակից «աշխարհագրական և քաղաքական ելքերն իրականում շատ չեն: Հենց որ դարաբաղյան խնդրի կարգավորումը դառնա փաստ, Թուրքիան պատրաստ է Հայաստանին օգնելու արտաքին աշխարհի հետ նորմալ կապեր հաստատելու հարցում»: Ռուսաստանի արտգործնախարարը սրա կողքին նաև հիշեցնում է, որ Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման համար մնացել է լուծել երկու-երեք հարց, նախ՝ Լաչինի միջանցքին առնչվող: Փորձառու դիվանագետի պարագայում ակնարկն ավելի քան թափանցիկ է. այդ երկու-երեք հարցը լուծեք ձեր հարևանների համար ընդունելի ձևով ու կստանաք թուրքական «կյանքի ճանապարհը»: Բայց ինչո՞ւ է Ռուսաստանի արտգործնախարարը Հայաստանին հրում դեպի Թուրքիան: Միգուցե իսկապե՞ս Լավրովը հավատում է «Անկարայի ավանդական գծին, որի համաձայն պետք է ապահովել տարածաշրջանի երկրների իրավունքը՝ Կովկասի և հարակից շրջանների խնդիրների լուծումներն ինքնուրույնաբար որոնելու վերաբերյալ» կամ թուրքական «Կայունության և համագործակցության պլատֆորմի» ապագային: Վստահաբար՝ ոչ: Ռուսաստանը չի կարող չտեսնել, որ դա նույնպիսի «բլեֆ» է, ինչպիսին էր անցած դարասկզբին կոմունիստական գաղափարախոսությունը Թուրքիայի միջոցով Արևելքում տարածելու ծրագիրը: Բուն նպատակը շատ պարզ է Թուրքիան խնդիրներ ունի Հայաստանի հետ, որի վրա մեծ ազդեցություն ունի Ռուսաստանը, վերջինս ակնկալիքներ ունի Ադրբեջանից, որի վրա մեծ է Թուրքիայի ազդեցությունը: Թուրքիայի խնդիրների լուծումը չի հակասում Ռուսաստանի շահերին, Ռուսաստանի խնդիրների լուծումը՝ Թուրքիայի շահերին: Հետևաբար, Ռուսաստանն ու Թուրքիան ունեն իրական, միմյանց շահերից բխող համաձայնության հնարավորություն, որն էլ փորձում են իրականացնել: Հայաստանի համար դրա գինը լինելու է ոչ այնքան Ցեղասպանության խնդիրը, որքան Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման սխեման, որի յուրաքանչյուր տարր ու մանրամասն ստանում է բացառիկ, աննախադեպ նշանա-

կություն: Հայաստանը սխալվելու իրավունք չունի: Նոր յոթանասունամյա դաժան փորձությանը Արցախը կարող է չդիմանալ: Իսկ այդ դեպքում Հայաստանի հարցերը կլուծվեն առանց լուրջ դժվարության:

Տարածաշրջանում Միացյալ Նահանգների անշրջելի հաստատումով, Եվրամիության աննախադեպ ակտիվացումով և ռուս-թուրքական հերթական մերձեցումով Հարավային Կովկասում իրավիճակը ստանում է նոր որակ և կտրուկ փոխվում են հետագա զարգացումների հեռանկարները: Այդ պարագայում Հայաստանից պահանջվում է նոր որակի արտաքին քաղաքականություն՝ թե տարածաշրջանային զարգացումներում, թե Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման հարցում՝ ոչ միայն հաջողություններ արձանագրելու, այլև անգամ անհաջողություններից խուսափելու համար: Վերջին վեց ամիսների արդյունքները վկայում են, որ Հայաստանի արտաքին քաղաքականությունում նկատվող փոփոխությունները կրում են սոսկ քարոզչական, PR բնույթ և չեն կարող առաջիկա մարտահրավերներին դիմակայելու հիմք դառնալ: Եթե կարճ ժամանակի համար դա կարող է գրավիչ լինել, ապա տևական ժամանակահատվածի համար՝ ծանր կորուստներով հղի Մինչդեռ այսօր տարածաշրջանում դրվում են երկարաժամկետ զարգացումների հիմքերը:

ՕՏԱՐ ԽԱՂԵՐ.
Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման ֆոնը, հնարավորություններն ու հեռանկարները[3]

Ռուս-վրացական հնգօրյա պատերազմից հետո արձանագրվեց Լեռնային Ղարաբաղի հակամարտությանն առնչվող հետաքրքրությունների, քննարկումների ու կանխատեսումների աննախադեպ ակտիվություն, ինչը պայմանավորված էր մի շարք գործոններով: Ստորև վերլուծվում է այդ գործոնների ազդեցությունը թե կարգավորման գործընթացի, թե ապագա հնարավոր զարգացումների վրա:

Կարգավորման ֆոնը

Ընտրական շքերթ

2008 թվականը Հարավային Կովկասի համար դարձավ յուրատեսակ տարածաշրջանային ընտրական «մոլորակների շքերթ»-ի[4] տարի: Նախագահական ընտրություններ տեղի ունեցան ինչպես տարածաշրջանի

3 «Ազգ» օրաթերթ, 26, 27 մարտի, 2009թ

4 Արեգակնային համաստեղության մոլորակներն Արևի շուրջ իրենց պտույտի ընթացքում որոշակի պարբերականությամբ հայտնվում են ուղիղ գծի վրա Այդ դիրքը կոչվում է «մոլորակների շքերթ» և նպաստավոր է ոչ սովորական երևույթների ի հայտ գալու համար

բոլոր ճանաչված երկրներում՝ Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում, այնպես էլ տարածաշրջանում ռազմավարական շահեր հետապնդող գերտերություններում՝ Ռուսաստանում և Միացյալ Նահանգներում: Ընդ որում, բացի Վրաստանից ու Ադրբեջանից, մյուս երկրներում նախագահների փոփոխությունը սահմանադրական պահանջ էր, հետևաբար և անխուսափելի: Ակնհայտ է, որ նոր նախագահները, որպես կանոն, արագ ինքնահաստատման խնդիր են ունենում, հետևաբար փորձում են նախագահության առաջին տարում աչքի ընկնել ուշադրություն գրավող նախաձեռնություններով: Հատուկ հիմնավորման կարիք չունի նաև այն ենթադրությունը, որ նման իրավիճակներն առավել նպաստավոր են կտրուկ քայլերի կամ արմատական փոփոխությունների համար, որոնց մեկնարկի համար պահանջվում է մի կայծ: Այդպիսին դարձավ «վրացական մեծ սադրանքը»՝ օգոստոսյան հնգօրյա վրաց-ռուսական պատերազմը:

Աշխարհաքաղաքական և տարածաշրջանային գործոն

Հարավային Կովկասի պատմության ուսումնասիրությունը հաստատում է պատմական իրադարձությունների ցիկլային տեսության[5] հավաստիությունը: Այլ՝ ավելի մանրակրկիտ ուսումնասիրության թողնելով ավելի վաղ ժամանակահատվածը, վերջին երեք դարերի համար հեշտ է նկատել ցիկլային տեսությանը բնորոշ երկու օրինաչափություն: Օրինաչափություն առաջին. մեկ դար պարբերությամբ Հարավային Կովկասում արձանագրվում են ազդեցությունների վերանայման նպատակ հետապնդող տեղաշարժեր: Դրանց արդյունքում 19-րդ դարի սկզբին Ռուսաստանը վերջնականապես հաստատվեց Հարավային Կովկասում, 20-

5 Пантин В., Лапкин В Философия исторического прогнозирования. Ритмы истории и перспективы мирового развития в первой половине XXI века.Дубна, 2006

րդ դարասկզբին կարողացավ չեզոքացնել Բրիտանական կայսրության նկրտումները, 21-րդ դարասկզբին փորձում է դիմակայել Միացյալ Նահանգների նմանատիպ փորձերը: Օրինաչափություն երկրորդ. ազդեցությունների վերանայման առավել ակտիվ փուլի՝ դիմակայությունների տևողությունը 20–25 տարի է:

Խորհրդային Միության փլուզումով սկսվեց այդ փուլերից վերջինը, ինչպես նաև ազդարարվեց «սառը պատերազմի» ավարտը: Միգուցե ԽՍՀՄ անհերևակայելի հեշտ փլուզման առաջացրած խանդավառությունն էր պատճառը, որ Արևմուտքում ձևավորվեցին հետագա զարգացումների խիստ լավատեսական սպասումներ: Հայտնի փորձագետները, մասնավորապես Ս. Հանթինգթոնը[6], սկսվող գործընթացը որակեցին որպես ժողովրդավարացման երրորդ ալիք, բացառելով դրանից որևէ շեղում: Թերևս այդ բացառիկ լավատեսությունն էր պատճառը և հավատը, որ արևմտյան արժեքներն ինքնաբերաբար դառնալու են տիրապետող հետխորհրդային ողջ տարածքում (այդ թվում և Ռուսաստանում), որ առաջին՝ անկումային փուլում, որը տևեց մինչև 90-ականների վերջը, Միացյալ Նահանգները չփորձեց ակտիվ քայլեր ձեռնարկել այդ տարածքում հիմնավորապես հաստատվելու համար: 90-ականների ավարտին պարզ դարձավ, որ երկրների մի խումբը (Լեհաստան, Չեխիա, Սլովակիա, Սլովենիա, Հունգարիա, բալթյան երկրներ) իսկապես ընտրել է կանխատեսվող ուղին, մյուս խումբը (նախկին Հարավսլավիայի երկրներ, Ալբանիա, Ռումինիա, Բուլղարիա, Հայաստան, Վրաստան, Մոլդովա, Ադրբեջան) դեռ վերջնականորեն կողմնորոշված չէ, իսկ երրորդ խումբը(Բելառուս, միջինասիական երկրներ) ընտրել է բոլորովին այլ ճանապարհ: Ակնհայտ է, որ երկրորդ խմբի երկրներում ցանկալի ընթացք և ազդեցություն ապահովելու համար Արևմուտքը պետք է դիմեր վճռական քայլերի: «Գունավոր» հեղափոխությունների շարքը փոփո-

6 Huntington S The Third Wave Democratization in the Late Twentieth Century Norman 1991

խակի հաջողություններ արձանագրեց: Մասնավորապես, Հարավային Կովկասում միայն Վրաստանում իշխանության եկավ Արևմուտքի հովանավորությունը վայելող Սաակաշվիլին, որը թեև ակնհայտորեն նախընտրում էր Արևմուտքը՝ որպես գործընկեր, և պարբերաբար գրգռում էր Ռուսաստանին իր հայտարարություններով, սակայն չէր խզում հարաբերությունները վերջինիս հետ: Մինչդեռ, ըստ վերոհիշյալ ցիկլային տեսության, ազդեցությունների վերաբաժանման ներկա փուլի ավարտին մնում է 6-7 տարի ժամանակ: Հետևաբար, կամ Միացյալ Նահանգները պետք է Հարավային Կովկասում հաստատվելու իր պատվախնդրական ձգտումները հետաձգեր մինչ հաջորդ փուլի սկիզբը՝ մոտ մեկ դար հետո, կամ պետք է տարածաշրջանում առաջանար լուրջ ճգնաժամ: Վերջին նախագահական և խորհրդարանական ընտրություններում լուրջ խնդիրների բախված Սաակաշվիլու համար էլ իրական թշնամու կերպարը շատ տեղին կլիներ: Այսօր որևէ մեկն այլևս չի կասկածում, որ ռուս-վրացական պատերազմը սկսել է Վրաստանը՝ թվում է ցանկացած դեպքում շահած դուրս գալու նկատառումներով: Ըստ անձնական զրույցի ժամանակ մի վրացի բարձրաստիճան պաշտոնյայի հայտնած տեղեկության, Վրաստանը ենթադրում էր, որ պատերազմը սկսելով արագորեն կհասնի Ռոկիի թունելին, ակտիվ ռմբակոծությամբ թույլ չի տա, որ թունելով Ռուսաստանը լրացուցիչ զինուժ մտցնի Հարավային Օսեթիա, իսկ այնտեղ գտնվող ռուս խաղաղապահները չեն կարողանա լուրջ դիմադրություն ցուցաբերել: Վրաստանը նաև որոշ հույսեր ուներ, որ Ռուսաստանը Պեկինի օլիմպիական խաղերի ընթացքում դժվար թե սկսեր լայնամասշտաբ պատերազմ: Թեև այս պլանը չգործեց, սակայն հավանաբար Սաակաշվիլին պատրաստ էր նաև իրականացած սցենարին, որի արդյունքում «ազատվեց» առանց այդ էլ վերահսկողությունից դուրս մնացած Հարավային Օսեթիայից ու Աբխազիայից, Արևմուտքից ստացավ մի քանի միլիարդ դոլարի աջակցություն, եվրոատլանտյան կառույցներին քաղաքական նկատառումներով, հետևաբար և հնարավոր կարճ ժակետում անդամակցելու հեռանկար,

Միացյալ Նահանգների հետ կնքեց ռազմավարական համագործակցության համաձայնագիր: Պատերազմական և հետպատերազմական գործողությունների զարգացման այս սխեման զարմանալիորեն ձեռնտու էր նաև Միացյալ Նահանգներին ու Ռուսաստանին: Առաջինն իրականացրեց իր մինիմում ծրագիրը՝ լիարժեքորեն ամրապնդվեց տարածաշրջանի մի հատվածում, իսկ Ռուսաստանը հնարավորություն ստացավ հետխորհրդային շրջանում առաջին անգամ ցուցադրելու, թե ով ով է այս տարածաշրջանում, կրկին համաշխարհային «խաղացողի» հայտ ներկայացնելու և գոնե մեկ անգամ պատասխանելու Արևմուտքի այն բոլոր քայլերին, որոնք տևական մի ժամանակահատված ոտնահարում էին իր շահերն ու վիրավորում ինքնասիրությունը: Միջազգային հանրության գրեթե միաձայն աջակցությունը Վրաստանին այս դեպքում Ռուսաստանի համար ավելի շուտ «զգացմունքների» դրական, քան բացասական խթան դարձավ: Արդյունքում տարածաշրջանում ստեղծվեց բացառիկ իրավիճակ, որում աննախադեպ կարևորություն ստացան Հայաստանի և Ադրբեջանի դիրքորոշումները՝ որպես հետևանք Վրաստանի միանշանակ կողմնորոշման: Ակնհայտ է, որ Ռուսաստանը տարածաշրջանում կհայտնվի «խաղից դուրս» իրավիճակում, եթե Հայաստանը կամ Ադրբեջանը հետևի Վրաստանի օրինակին: Դժվար չէ համոզվել, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման որևէ տարբերակի դեպքում նման իրավիճակի ստեղծման հավանականությունը կտրուկ կմեծանա այս կամ այն երկրի համար: Դրանից անմիջապես օգտվեց Թուրքիան՝ ասպարեզ նետելով «Կայունության և համագործակցության պլատֆորմի» գաղափարը և ցուցադրաբար դրա քննարկումն սկսելով ոչ թե մերձավոր դաշնակցի՝ Միացյալ Նահանգների, այլ Ռուսաստանի հետ: Պատեհ առիթը օգտագործելու՝ Միացյալ Նահանգների փորձերը՝ փոխնախագահ Դ. Չեյնիի և մի շարք այլ բարձրաստիճան պաշտոնյաների այցերը Բաքու, ցանկալի արդյունք չտվեցին: Կարճ ժամանակ անց ռուս-թուրքական համատեղ ջանքերը երկու երկրների համար տվեցին պտուղներ, որոնք այս կամ այն չափով առնչվում են

կամ կարող են առնչվել Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանը. Թուրքիան դարձավ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ժամանակավոր անդամ, Ռուսաստանի հովանավորությամբ ու մասնակցությամբ Ադրբեջանի և Հայաստանի նախագահները ստորագրեցին հռչակագիր Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման վերաբերյալ: Մինչ այդ Ռուսաստանն արդեն միակողմանիորեն ճանաչել էր Աբխազիայի և Հարավային Օսեթիայի անկախությունը՝ Արևմուտքում առաջացնելով հակազդեցության և Վրաստանի տարածքային ամբողջականության ճանաչման վերաբերյալ հայտարարությունների ուժգին ալիք, որպես դասական օրինակ, թե ինչպես ընդամենը մի քանի ամսվա ընթացքում (Կոսովոյի անկախության ճանաչումից ի վեր) կարող է տրամագծորեն փոխվել ազդեցիկ պետությունների դիրքորոշումը նույն երևույթի վերաբերյալ: Ընդ որում, ռուս-ամերիկյան դիմակայությունը հետխորհրդային տարածքում հետագայում ևս իրադարձությունների զարգացման ամենաազդեցիկ գործոնը եղավ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի ստեղծում, ամերիկյան «Մանաս» ռազմաօդային բազայի փակում Բիշքեկում և այլն.

Ներքաղաքական գործոն

Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում վերջին ամիսներին նկատվող տեղաշարժերը հետաքրքրություն են ներկայացնում նաև Հայաստանի ներքաղաքական արձագանքների տեսակետից: Ցավոք դրանք խիստ պարզունակ էին և հիասթափեցնող՝ որպես առավել հնարավոր սցենար այն զարգացումների, որոնք կարող են տեղի ունենալ, եթե մի օր հնարավոր լինի մշակել կարգավորման փաստաթուղթ: Ամենամտահոգիչ հանգամանքը՝ գրեթե բացակայում էր մասնագիտական, փորձագիտական գնահատականը, սոսկ քաղաքա-

կան հակառակորդները ներկայացնում էին իրարամերժ գնահատականներ: Թերևս կարելի է առանձնացնել Լ. Տեր-Պետրոսյանի ելույթը հոկտեմբերի 17–ի հանրահավաքում՝ որպես իրավիճակի վերլուծության և հետագա զարգացումների կանխատեսման փորձ: Ընդդիմության զգալի հատվածը ներկայացնող Տեր-Պետրոսյանի գլխավորած ուժերի դիրքորոշման առանցքը հետևյալ դրույթն էր. «Ս. Սարգսյանը Լեռնային Ղարաբաղը ծախում է Արևմուտքին իր լեգիտիմությունը ճանաչելու դիմաց»: Վերոհիշյալ հանրահավաքում Տեր-Պետրոսյանն իր ելույթի զգալի մասը նվիրեց կարգավորման գործընթացի վերլուծությանը՝ այդ դրույթի ճշմարտացիությունը ապացուցելու նպատակով: Ինչ վերաբերում է կարգավորմանն անչվող հատվածին, ապա հեշտ է նկատել, որ Տեր-Պետրոսյանի ուրվագծած կարգավորման ծրագրի հիմնական կետերի շրջանակը կառուցված է համանախագահների, «Քրայսիս գրուփ»-ի(ի դեպ, Տեր-Պետրոսյանի գլխավորած ՀԱԿ-ի հիմնական ներկայացուցիչներից մեկը՝ Լևոն Զուրաբյանը մի քանի տարի աշխատել է հակամարտությունների կարգավորման ընթացքն ուսումնասիրող այս կազմակերպությունում) և մի շարք այլ կազմակերպությունների կարծիքների ու դիրքորոշումների համադրման միջոցով: Կարելի է համաձայնել ԼՂ կարգավիճակի ճշգրտման հանրաքվեի վերաբերյալ Տեր-Պետրոսյանի հնչեցրած առաջարկներին: Սակայն այդ վերլուծությանը մանրամասն անդրադառնալը ավելորդ է ոչ միայն այն պատճառով, որ այն մեծապես կրում էր իշխանություն-ընդդիմություն պայքարի դրոշմը, այլև ընդամենը երեք ամիս անց պազ դարձավ, որ դրա մի շարք հիմնադրույթներ արդեն իսկ ժամանակի քննությանը չեն դիմացել. «Ս. Սարգսյանը երես է թեքել Ռուսաստանից և լիովին ապավինել է Արևմուտքին՝ հանձինս ԱՄՆ-ի... Այսօր վտանգի տակ է Մինսկի խմբի գոյությունը... Այդ ձևաչափի խախտման և դրանից Ռուսաստանի դուրսմղման վտանգը միանգամայն իրական է... Մենք կանգնած ենք Ղարաբաղյան հակամարտության մոտալուտ հանգուցալուծման շեմին... Ղարաբաղյան հակամարտության հանգուցալուծումը ընդամենը երկու-երեք ամիսների

հարց է...» («Հայկական ժամանակ», 18 հոկտեմբերի 2008թ.): Հենց վերջին չորս ամիսներին տեղի ունեցած իրադարձությունները վկայում են, որ Տեր-Պետրոսյանի վերլուծությունների հիմնադրույթներից և կանխատեսումներից գրեթե ոչ մեկը չհաստատվեց:

Տեր-Պետրոսյանի վերլուծությունն ունի ևս մեկ լուրջ թերություն: Նա խուսափել է իր ներկայացրած կարգավորման սխեմայի՝ «մադրիդյան սկզբունքներ»-ի գնահատականը տալուց. արդյոք հիմնավոր և արդարացի՞ է այն, ինքը պաշտպանու՞մ է այդ մոտեցումը, որո՞նք են սխեմայի թերությունները և հայկական կողմի բացթողումները (եթե համարում է, որ դրանք եղել են) այդ սխեմայի մշակման ընթացքում: Այդուհանդերձ, հեշտ է նկատել, որ եթե արվել են սոսկ առաջարկություններ հանրաքվեին առնչվող մի քանի կոնկրետ հարցերի վերաբերյալ, ապա Տեր-Պետրոսյանը սկզբունքային առարկություններ չունի կարգավորման սխեմայի վերաբերյալ, հակառակ դեպքում դրանք ևս կներկայացվեին: Իսկ այդ պարագայում փլվում է Տեր-Պետրոսյանի՝ Ղարաբաղյան խնդրին առնչվող ամբողջ կոնցեպցիան:

Պատահական չէ, որ ավելի ուշ, տարեվերջին Տեր-Պետրոսյանի ներկայացուցիչները հրապարակեցին խիստ ընդհանրական դիրքորոշում հակամարտության կարգավորման վերաբերյալ. «ինչ որոշի Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը մեզ համար կլինի ընդունելի»: Առաջին հայացքից սա ինքնորոշման իրավունքի գերակայությունից բխող, հետևաբար ոչ միայն անխոցելի, այլև իշխանության համեմատ շահեկան դիրքորոշում է: Սակայն նման դիրքորոշումը միանգամայն հասկանալի կարող է լինել միայն որպես վերաբերմունք ակնկալվող հանրաքվեի արդյունքների նկատմամբ, մինչդեռ այս շրջանում յուրաքանչյուր քաղաքական ուժ իր պատասխանատվությունն արդարացնելու, և թե Հայաստանի (խնդրի լուծումն անմիջականորեն առնչվում է Հայաստանի Հանրապետության անվտանգությանը), թե Լեռնային Ղարաբաղի ժողովրդին ճիշտ կողմնորոշման հնարավորություն ապահովելու համար պետք է հստակորեն ներկայացնի իր գնահատականներն ու մոտեցումները, իր պատ-

կերացումները խնդրի իրավական ու քաղաքական հիմքերի վերբերյալ, կարգավորման սխեմայի հիմնական մոտեցումների վերաբերյալ՝ փոխզիջումներ, տարածքների վերադարձ, Լեռնային Ղարաբաղի կարգավիճակ և այլն:

Բովանդակային քննարկումներից խուսափում են նաև իշխանության ներկայացուցիչները: Նրանք սոսկ փորձում են ժխտել «ծախելու» վարկածը՝ միաժամանակ պնդելով, որ լավագույն լուծում կարող են ապահովել ներկայիս իշխանությունները, քանի որ երկրի նախագահը եղել է ղարաբաղյան պատերազմի հիմնական դերակատարներց մեկը Լեռնային Ղարաբաղում: Մինչդեռ իշխանությունները մինչ օրս չեն ներկայացրել այն ռազմավարական հիմքը, որի վրա կառուցում են բանակցությունները. Բազմիս կրկնված եռադրույթ մոտեցումը՝ «1)Լեռնային Ղարաբաղը չպետք է լինի Ադրբեջանի ենթակայության տակ, 2)Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը պետք է ունենան ցամաքային սահման, 3)պետք է ապահովվի Լեռնային Ղարաբաղի բնակչության անվտանգությունը», ճշմարտացի լինելով, այսօր բավարար չէ այդ ռազմավարական հիմքը ներկայացնելու համար: Ահա թե ինչու քննարկումները կամ բանավեճերը վերածվում են «ոչ մի թիզ հող» կամ «Ադդամը մեր հայրենիքը չէ, անհրաժեշտ են զիջումներ» անպտուղ լեզվակռվի, քանզի առաջինի կողմնակիցները չեն ներկայացնում իրենց դիրքորոշումը իրականացնելու և իրավական ճանաչման հասցնելու հիմքերը, իսկ երկրորդի կողմնակիցները ոչ միայն չեն նշում մեր հայրենիքի սահմանները, այլև որևէ հիմք չունեն պնդելու համար, որ դրանք նախկին ԼՂԻՄ-ի սահմաններն են: Հայաստանի իշխանությունները հստակ պատասխան չեն տալիս ևս մեկ հինարար հարցադրման. որո՞նք են իր հիմնական մոտեցումները բանակցությունների ընթացքում: Եթե բանակցությունների ընթացքի և մշակվող փաստաթղթի բովանդակության վերաբերյալ խորհրդապահական մոտեցումը միանգամայն հասկանալի և ընդունելի է, ապա հիմնական մոտեցումների ու դրանց հինավորումների ներկայացումը հանրությանը նման կենսական խնդրի վերաբերյալ պարզապես անհրաժեշ-

տություն է: Իհարկե, կարող է առարկություն հնչել. վերջին 4-5 տարիներին Հայաստանի իշխանությունները հայտարարում են, որ խնդրի կարգավորումը հնարավոր է միայն Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի հիման վրա: Սակայն դիրքորոշումները ևս զարգացման կարիք ունեն և այսօր դա այլևս բավարար չէ, հարկ է ներկայացնել ավելի ամբողջական և կոնկրետ հիմք: Մինչդեռ «Ազգ»-ում տպագրված(16.10.2008թ.)՝ իշխանության ներկայացուցչի «Tertium non datur» հոդվածից ակնհայտորեն երևում է, որ այսօր էլ իշխանության մեջ տիրապետող է դեռևս 90-ական թվականների սկզբին ձևավորված այն թյուր և վտանգավոր կարծիքը, որ ինքնորոշման իրավունքի իրացումը անկախ պետության հռչակման միջոցով հատուկ է միայն «իրականությունից կտրված իդեալիստներին» կամ «անջատողական ծայրահեղականներին», եթե մյուս կողմի համաձայնությունը չկա: Եթե 90-ականների սկզբին նման կարծիքը կարող էր հասկանալի լինել (խորհրդային շրջանում օբյեկտիվորեն Հայաստանում միջազգային իրավունքի փաստաթղթերին տեղյակ մասնագետներ չկային), բայց ոչ արդարացված, ապա այսօր նման անտեղյակությունը ոչ միայն գավառական մտածողության հետևանք է, այլև չափազանց վտանգավոր: Գոյություն ունի հակամարտությունների լուծման երկու ճանապարհ՝ իրավական կամ ուժային: Վերջինս հատուկ է գերտերություններին, ինչի ցայտուն օրինակը դարձան Կոսովոյի և Աբխազիայի ու Հարավային Օսեթիայի անկախությունների ճանաչման գործընթացները: Հայաստանի կամ Լեռնային Ղարաբաղի նման երկրների դեպքում կարևոր կռվան են միջազգային իրավունքի նորմերը, թեև ակնհայտ է, որ դրանց լիարժեք կիրառմանը հասնելու համար պահանջվում է հսկայական աշխատանք: Սակայն հարկ է նշել, որ առանց հստակ ու հիմնավոր ուղենիշների, սոսկ ընթացիկ իրավիճակից բխող կողմնորոշումների վրա հիմնված գործունեությունն անպտուղ է: Ըստ Ս. Հանթինգթոնի[7], «մենք կարող ենք ժխտել

7 **Huntington S.** The Clash of Cıvılızatıons ad the Remakıng of World Order 1996

նման ուղենիշների անհրաժեշտությունը և ձևացնել, որ գործում ենք ինչ-որ «օբյեկտիվ» գործոնների շրջանակում, ամեն անգամ կողմնորոշվելով «ըստ էության»: Սակայն, եթե նման դիրքորոշում որդեգրենք, մենք մեզ կխաբենք»:

ԼՂՀ գործոն

Վերջին ամիսների զարգացումներում ամենազուսպը առավել շահագրգիռ կողմն էր՝ Լեռնային Ղարաբաղը: Այն աստիճանի, որ ոմանց սկսեց թվալ, որ ԼՂՀ իշխանությունները կորցրել են հետաքրքրությունը խնդրի կարգավորման նկատմամբ կամ այն լիովին թողել են ՀՀ իշխանությունների հայեցողությանը: Մինչդեռ հակամարտության հիմնական կողմն առանց ավելորդ շտապողականության ու արժանապատվությամբ վերաբերվեց այդ զարգացումներին, թերևս ընդգծելով Ս. Հանթինգթոնի[8] այն դիտարկումը, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության տեսակետից գլխավոր դերակատարը Լեռնային Ղարաբաղն է, իսկ Հայաստանը և անգամ Ադրբեջանը երկրորդ մակարդակի երկրներ են: ԼՂՀ նախագահի և ապա Ազգային ժողովի տարեվերջյան արձագանքները միանգամայն համարժեք էին մոսկովյան հռչակագրի իրավական կարգավիճակին. ԼՂՀ խնդրի կարգավորման վերաբերյալ որևէ որոշում, որն ընդունված կլինի առանց ԼՂՀ ներկայացուցիչների մասնակցության, չի կարող պարտադրվել Լեռնային Ղարաբաղին և լուծումը հնարավոր է միայն ԼՂՀ ներկայացուցիչների մասնակցության պարագայում: Այդուհանդերձ, այն , ինչ տեղի ունեցավ ԼՂՀ Ազգային ժողովում 2009-ի հունվարին, հղի է ավելի լուրջ հետևանքներով, քան հռչակագիրը: Դեռևս դժվար է ասել, թե ինչն էր ԼՂՀ Ազգային ժողովում ներկայացված քաղաքական ուժերի հավասարակշռությունը խախտող՝ մեծամասնություն կազմող խմբակցությունից հինգ պատգամավորի հեռանալու պատճա-

8 **Huntington S.** The Clash of Cıvılızatıons ad the Remakıng of World Order. 1996

ոը՝ Ազգային ժողովի տարեվերջյան հայտարարությո՞ւնը, թե՞ ինչ-ինչ խմբերի համոզվածությունը, որ Լեռնային Ղարաբաղում էլ, ինչպես Հայաստանում, եկել է հատվածական շահերի գերակայության ժամանակը: Հրապարակավ ներկայացվող դրդապատճառները՝ կապված 2009-ի բյուջեի նախագծի նկատմամբ խմբակցության դիրքորոշման խիստ տոնի հետ, կարող են ճշմարտանման թվալ միայն անտեղյակների ու երեսպաշտների համար: Իհարկե, ինչ-ինչ հակասություններ նախկինում էլ ծագել են դարաբաղյան իշխանության ներսում, սակայն այս դեպքը վտանգավոր է երկու պատճառով: Նախ, խարդավանքներն ակնհայտորեն ուղղված էին ԼՂՀ ԱԺ նախագահի դեմ, որը թե Երևանում, թե Ստեփանակերտում քիչ հանդիպող քաղաքական գործիչներից է, ովքեր ի զորու են և զբաղվում են զուտ քաղաքական գործունեությամբ: Երկրորդ հանգամանքը խարդավանքների իրականացման համար ընտրված ժամանակահատվածն է, երբ աշխուժացել են կարգավորմանն առնչվող գործընթացները: Ի պատիվ ԼՂՀ ղեկավարության, կարծես թե վտանգավոր զարգացումների առաջն առնվել է, սակայն շատ կարևոր է, որ վերացվեն դրանց պատճառները, քանի որ դրանք կարող են կրկին դրսևորվել՝ վտանգելով Լեռնային Ղարաբաղի ապագան: Առավել ևս, որ մոտ մեկ տարի անց սպասվում են ԼՂՀ խորհրդարանական ընտրություններ.

Կարգավորման գործընթաց

Մոսկովյան հռչակագիրը

Նոյեմբերի սկզբին Մոսկվայում Հայաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի նախագահների ստորագրած հռչակագիրը բացահայտեց մի շարք պոտենցիալ վտանգներ: Փաստաթուղթը, չնայած ոչ մեծ ծավալին, ամբողջությամբ չտպագրվեց հայաստանյան տպագիր մամուլում, չունեցավ մասնագիտական բովանդակային վերլուծություն, գնահատվեց

սոսկ քաղաքական շրջանակների կողմից՝ իրարամերժ որակումներով: Ընդ որում, այդ գնահատականները (թե կողմ, թե դեմ) ոչ միայն պարզունակ էին, հետապնդում էին զուտ քարոզչական նպատակ, այլև հաճախ լապես աղավաղված էին ներկայացնում փաստաթղթի բովանդակությունը: Նման վերաբերմունքը վտանգավոր է առաջին հերթին որպես մոտեցում, քանզի այն կարող է կրկնվել նաև այն ժամանակ, երբ ձևակերպվի կարգավորման ինչ-որ մի փաստաթուղթ, որում առկա խութերը չբացահայտելու դեպքում այն կդառնա անշրջելի կորուստների հիմք:

Որևէ փաստաթղթի վերլուծությունը սկսվում է դրա կարգավիճակի ճշգրտումից: Մոսկովյան հռչակագիրը շատ հաճախ բնորոշվում է որպես հակամարտության կարգավորման փաստաթուղթ, ինչը կոպիտ սխալ է: Այն ստորագրել են այդ գործընթացի երկու կողմ և մեկ միջնորդ երկրի նախագահները: Մինչդեռ հակամարտության միջազգայնորեն ճանաչված կողմերը, ինչպես նաև միջնորդ կողմերը երեքական են: Հետևաբար փաստաթուղթը չի կարող հակամարտության կարգավորման իրավական փաթեթի մաս համարվել, քանզի այն ստորագրողների կազմը ամբողջական չէ: Միաժամանակ, հռչակագրից ակնհայտորեն երևում է, որ այնտեղ չի խոսվում ոչ հակամարտող կողմերի, ոչ միջնորդների ձևաչափի փոփոխության մասին: Ճիշտ հակառակը, երկրորդ կետով հաստատվում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդական ջանքերի շարունակման կարևոր նշանակությունը: Հետևաբար, հռչակագիրը սոսկ երեք երկրների ղեկավարների ընդհանուր մոտեցումներն արտահայտող փաստաթուղթ է և հակամարտության կարգավորման տեսակետից էական նշանակություն չունի: Այդ առումով Լեռնային Ղարաբաղի ներկայացուցչի ստորագրության բացակայությունը հռչակագրի տակ ունի սոսկ բարոյական, սակայն ոչ իրավական նշանակություն: Այդուհանդերձ, կարևոր է նաև փաստաթղթի բովանդակությունը՝ որպես մոտեցումների մի համախումբ, որի վերաբերյալ Հայաստանի և Ադրբեջանի նախագահները համամիտ են:

Հայաստանում շատ թմբկահարվեց այն կարծիքը, թե այս փաստաթուղթը հակամարտության կարգավորման համար սահմանում է միայն խաղաղ միջոցներ: Միջազգային իրավունքի նորմերին քիչ թե շատ ծանոթ յուրաքանչյուր ոք հասկանում է, որ «քաղաքական միջոցները», որոնց միջոցով փաստաթուղթը ստորագրած կողմերը, ըստ առաջին կետի, պետք է նպաստեն հակամարտության կարգավորմանը, համարժեք չէ «խաղաղ միջոցներին»: Խաղաղ կարգավորման մասին խոսվում է միայն երրորդ կետում: Ընդ որում, ոչ թե որպես կարգավորման սկզբունք, այլ գործընթացի առանձին մաս: Հետևաբար հռչակագիրը որևէ արժեք չունի որպես խաղաղ կարգավորում երաշխավորող փաստաթուղթ: Պատահական չէ, որ հռչակագրի ստորագրումից կարճ ժամանակ անց Ադրբեջանը վերսկսեց ռազմատենչ հայտարարությունները, իսկ փաստաթուղթը ստորագրած մյուս կողմերը որևէ ձևով չեն արձագանքում դրան:

Հռչակագիրն ունի երկու արժանահիշատակ արձանագրում: Դրանցից առաջինը ներառված է փաստաթղթի նախաբանում և նախատեսում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը «Հայաստանի և Ադրբեջանի նախագահների միջև ուղիղ երկխոսությամբ՝ Ռուսաստանի, ԱՄՆ և Ֆրանսիայի միջնորդության պարագայում՝ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ»: Հենց այս հաստատագրումն է խիստ վտանգավոր և լուրջ բացթողում հայկական կողմի համար, քանզի ստորագրելով հռչակագիրը, Հայաստանը ակամա ընդունել է, որ Լեռնայի Ղարաբաղը հակամարտության կողմ չէ: Պատահական չէ, որ հռչակագրի ստորագրումից անմիջապես հետո Ի. Ալիևը շտապեց օգտագործել այդ հանգամանքը՝ հայտարարեց, որ հռչակագիրը վկայում է, որ Լեռնային Ղարաբաղը հակամարտության կողմ չէ: Իհարկե, դա անվերապահ իրավական հիմք ունեցող հայտարարություն չէ՝ շնորհիվ հռչակագրի ստորագրման ձևաչափի, սակայն ևս մեկ վկայություն է այն բանի, որ հայկական կողմը փաստաթղթերի վրա աշխատանքի հմտության զգալի պակաս ունի, ինչը հղի է այնպիսի հետևանքներով, որոնք ավելի լուրջ փաստաթղթերի ստորագրման ժամանակ կարող են

ճակատագրական լինել: Պետք է հուսալ, որ գոնե այս անգամ կընկալվի խնդրի լրջությունը և իշխանության որևէ ներկայացուցիչ դիտարկումը չի ընկալի որպես մահացու անձնական վիրավորանք ու չի փորձի անհաջող աճպարարությամբ ու սոփեստությամբ վերաիմաստավորել միարժեք ձևակերպումները, ինչպես դա տեղի ունեցավ «Նահանջ երգով» հոդվածին («Ազգ», 14.10.2008թ.) արձագանքելիս:

Հռչակագրում ներառված երկրորդ ուշագրավ ձևակերպումը երկրորդ կետի վերջում է.«քաղաքական կարգավորման հիմնական սկզբունքների հետագա մշակում»: Դա վկայում է, որ այդ սկզբունքները դեռևս մինչև վերջ մշակված էլ չեն: Ի դեպ, թեև այդ մասին ևս շատ է խոսվում, սակայն այսպես կոչված «մադրիդյան սկզբունքներին» փաստաթղթում ուղղակի անդրադարձ չկա: Հիշատակվում է միայն 2007թ. նոյեմբերի 29-ին Մադրիդում տեղի ունեցած՝ համանախագահների և կողմերի հանդիպումը հաշվի առնելու անհրաժեշտությունը:

Հելսինկյան հանդիպում

Մոսկովյան հռչակագրի ստորագրումից մեկ ամիս անց Հելսինկիում տեղի ունեցած ԵԱՀԿ անդամ երկրների արտաքին գործերի նախարարների հերթական հանդիպումը Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման տեսակետից նշանակալից էր մի քանի առումներով: Դեկտեմբերի 4-ին Մ. Բրայզան հայտարարեց, որ «տարածքային ամբողջականությունը կարգավորման գլխավոր սկզբունքն է»: Հայաստանի արտգործնախարարի արձագանքը դրան առաջին հայացքից սննախադեպ կոշտ էր. «ես կցանկանայի հավատալ, որ Մեթյու Բրայզան այդպիսի հայտարարություն չի արել, որովհետև դա համանախագահի մակարդակի հայտարարություն չէ»: Թեև Բրայզան ավելի ուշ լրացուցիչ մեկնաբանություն ներկայացրեց՝«կարգավորման հարցում կարևոր են Հելսինկյան ակտի բոլոր երեք սկզբունքները», սակայն հե-

տագայում պարզ դարձավ, որ հայկական կողմի արձագանքը սոսկ անտեղյակության հետևանք էր, քանզի հաջորդ օրը՝ դեկտեմբերի 5-ին Բրայզայի խոսքերը կրկնեց ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Դ. Ֆրիդը, որին հայկական կողմը չարձագանքեց: Հայաստանը չարձագանքեց նաև այդ հավաքի ընթացքում Ադրբեջանի տարածած փաստաթղթին՝ կարգավորման ադրբեջանական պատկերացումների վերաբերյալ, բավարարվելով սոսկ մեղադրանքով, որ Ադրբեջանը «կամայականորեն է մեկնաբանում մոսկովյան հռչակագիրն ու կարգավորման գործընթացը»: Վաղուց արդեն տխուր ավանդույթ է դարձել ամերիկյան համանախագահի ադրբեջանահաճո հայտարարություններն ու դրանց հաջորդող լղոզված «մեկնաբանությունները», Ադրբեջանի ռազմատենչ հայտարարություններն ու կարգավորման գործընթացի վերաբերյալ «բացահայտումները», որոնց Հայաստանը հակադրում է թվացյալ «քաղաքակիրթ», «լուրջ», բայց իրականում սոսկ դիրքորոշման խեղճության մասին վկայող կեցվածք: Իհարկե, վերջին շրջանում արտգործնախարարությունը փորձում է ինչ-որ կերպ արձագանքել նման դրսևորումներին, սակայն այդ փորձերը դեռևս շատ վարանոտ են և չեն ունենում որևէ հետևանք: Մինչդեռ դրանք լավ առիթ են Հայաստանի դիրքորոշման կոշտացման հնարավորությունները ներկայացնելու համար:

Մադրիդյան սկզբունքներ, կարգավորման հիմքը և բանաձևը

2007թ. մադրիդյան հանդիպումից հետո շրջանառության մեջ դրված «մադրիդյան սկզբունքներ» արտահայտությունը համանախագահների մի շարք հայտարարություններից, մի քանի միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների, հակամարտության կողմերի որոշ արձագանքներից ու մի շարք «արտահոսքերից» հետո այս կամ այն չափով մատչելի են կարգավորման խնդրով լրջորեն հետաքրքրվողների համար: Սովորաբար հակամարտությունների կարգավորման ցանկա-

ցած տարբերակի գնահատականը հիմնականում ձևավորվում է ըստ հետևյալ երկու բաղադրիչի.

- ծրագրի իրավական հիմքը,
- կարգավորման ծրագրում վստահելի մեխանիզմների առկայությունը, որոնք ապահովում են, որ եթե դրա իրականացման որևէ փուլում (օրինակ, ադրբեջանցի փախստականների վերադարձից հետո) կողմերից մեկը (Ադրբեջանը) հրաժարվի մասնակցել հաջորդ փուլերի իրականացմանը, ապա ծրագիրն իր ավարտին (մասնավորապես, հանրաքվեի և դրա արդյունքների ճանաչմանը) կհասցվի առանց նրա կամ կվերադառնա ելման կետին:

«Մադրիդյան սկզբունքներ»-ին մանրամասն անդրադառնալը անիմաստ է ոչ միայն այն պատճառով, որ դրանք պաշտոնապես չեն հրապարակվել, այլև որ այդ փաստաթղթում ներառված մոտեցումները տարբեր կարևորություն ունեն: Ստորև կանդրադառնանք միայն վերոհիշյալ երկու բաղադրիչներին առնչվող մի քանի մոտեցումների՝ առավել կարևորելով դրանք:

Մինսկի խմբի համանախագահները բազմիցս նշել են, որ «մադրիդյան սկզբունքների» հիմքում տարածքային ամբողջականության և ազգերի ինքնորոշման իրավունքի համադրումն է: Միջազգային իրավունքի տեսակետից դա ոչ միայն ընդունելի, այլև անհրաժեշտ մոտեցում է: Ընդ որում, այդ հայտարարությունը անելով, համանախագահները ոչ միայն հակամարտության կողմերից որևէ մեկին «լավություն» չեն արել, այլ պարզապես փորձել են իրենց առաջարկությունները տեղավորել միջազգային իրավունքի շրջանակներում: Այդուհանդերձ, նրանք չեն արել հաջորդ՝ կարգավորման տեսակետից առանցքային նշանակություն ունեցող քայլը՝ չեն հստակեցրել դրանցից յուրաքանչյուրի կիրառման շրջանակները և մեխանիզմները, արդյունքում ձևավորելով անորոշության միջակայք: Դա բանակցությունների ժամանակ լայնորեն կիրառվող հայտնի հնարք է, որը որոշ ժամանակի համար ապահովում է ճկունություն և տալիս է հնարավորություն՝ հետագա առաջընթացն ապահովող

մանրամասների մշակման համար: Այդուհանդերձ, ԼՂ խնդրի կարգավորման ժամանակ այդ «անորոշությունը» հակամարտության կողմերին հնարավորություն է տալիս անգամ հակոտնյա մեկնաբանություններ ներկայացնել կարգավորման սկզբունքների վերաբերյալ: Դա ոչ միայն խաթարում է կարգավորման գործընթացի իրավական հիմքը, այլև նոր լուրջ խոչընդոտներ է ստեղծում կարգավորման համար: Ավելին, դա էապես մեծացնում է այն բանի հավանականությունը, որ երբ մոտենա կարգավորման փաստաթղթի մշակման աշխատանքների ավարտը և շատ մոտ լինի այն հրապարակելու օրը, կողմերից որևէ մեկը կհրաժարվի գործընթացը շարունակել, ինչպես դա արդեն եղել է Քի Ուեսթում: Այդ առումով բացարձակապես անհիմն են թվում լավատեսական հայտարարությունները, թե մնացել է համաձայնություն ապահովել մի քանի կետում: Ակնհայտ է, որ Ադրբեջանի ղեկավարները չեն ստորագրի որևէ փաստաթուղթ, որը պարունակում է Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչման մեխանիզմներ, հայկական կողմերն էլ չեն համաձայնի Լեռնային Ղարաբաղի ենթակայությանը Ադրբեջանին: Հետևաբար մնում է սոսկ մեկ տարբերակ. Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցում պահպանվում է ներկայիս ձևակերպումների անորոշությունը, որը կողմերին թույլ է տալիս ներկայացնել սեփական ցանկություններից բխող մեկնաբանություններ, այդ հարցի լուծումը հետաձգվում է, սակայն մյուս հարցերի կարգավորումը սկսվում է անմիջապես: Ակնհայտ է, որ դա դիվանագիտական աճպարարությամբ փաթեթավորված ծուղակ է Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի համար: Դրանում չհայտնվելու համար հայկական կողմերը պետք է հասնեն այն բանին, որ նախապատրաստվող փաստաթղթում որպես իրավական հիմք հստակորեն սահմանված լինեն կարգավորման այս գործընթացում ազգերի ինքնորոշման իրավունքի կիրառման շրջանակներն ու մեխանիզմները:

Ակնհայտ է, որ այդ փաստաթուղթը կարող է դառնալ կարգավորման իրական հիմք միայն մեկ դեպքում՝ եթե կարգավորման բանաձևը պարունակի հետևյալ մոտեցումները, որոնք, ըստ հայաստանյան կողմի,

«մադրիդյան սկզբունքների» ուղղակի հետևանք են, ըստ արբեջանական կողմի՝ ոչ.

- Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը որոշվելու է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման հիման վրա, հանրաքվեի միջոցով,
- հանրաքվեին մասնակցում են Լեռնային Ղարաբաղում ապրող քաղաքացիները,
- հանրաքվեի դրվող՝ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակին վերաբերող հարցադրումը պետք է պարունակի Լեռնային Ղարաբաղի անկախ պետության հռչակման մասին դրույթ,
- Լեռնային Ղարաբաղի կարգավիճակին վերաբերվող հանրաքվեի անցկացման ժամկետը պետք է լինի խիստ հիմնավորված, հանրաքվեն պետք է իրականացվի հնարավոր նվազագույն ժամկետում,
- Լեռնային Ղարաբաղի կարգավիճակին վերաբերվող հանրաքվեի արդյունքները միջազգային հանրությունը պետք է ճանաչի անվերապահորեն, անկախ Ադրբեջանի դիրքորոշումից:

Հաշվի առնելով Հայաստանի իշխանությունների շտապողականությունը՝ «Հանրաքվեի մասին» օրենքի փոփոխությունների նախագծի՝ անցած տարեվերջին ընդունման ժամանակ, կարելի է ենթադրել, որ ցանկություն կա հանրաքվեի դնելու ոչ թե կարգավորման վերջնական, այլ շրջանակային փաստաթուղթը: Եթե դրանով ավարտվելու է ժողովրդի կամարտահայտությունը խնդրի կարգավորման վերաբերյալ, ապա դա ոչ միայն էապես կսահմանափակի հայկական կողմերի ճկունությունը, այլև կարող է հանգեցնել չվերականգնվող կորուստների:

Փոխզիջումներ, պարտածքներ, չօգտագործվող հնարավորություններ

Այն հանգամանքը, որ ցանկացած բանակցություն ենթադրում է փոխզիջումներ, Ղարաբաղյան հակամարտության դեպքում մեծապես շահարկվում է, և ինչքան էլ տարօրինակ է, հատկապես հայաստանյան քննարկումներում: Ցավոք, Հայաստանի իշխանությունները միջազգային իրավունքի մասին թյուր պատկերացումների արդյունքում այդպես էլ չեն կարողանում օգտագործել այն հանգամանքը, որ Լեռնային Ղարաբաղը էական զիջում արդեն արել է, հայտարարելով, որ ընտրում է ինքնորոշման իրավունքի կիրառման այն տարբերակը, որի նպատակը անկախությունն է: Ըստ «ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն պետությունների միջև բարեկամական հարաբերություններին և համագործակցությանն առնչվող միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրի[9]», Լեռնային Ղարաբաղը լիարժեք իրավունք ունի անջատվելու և միանալու Հայաստանին, ինչի պարագայում, եթե անգամ ԼՂՀ վերադառնային խորհրդային շրջանում այնտեղ բնակված աղրբեջանցիներ, նրանք պակաս մասնակցություն կունենային երկրի քաղաքական կյանքին: Սա չափազանց լուրջ գործոն է փոխզիջումների համատեքստում: Լեռնային Ղարաբաղը, չմերժելով նոր հանրաքվեի անցկացումը, արել է ևս մեկ կարևոր զիջում, քանզի 1991թ. անցկացված հանրաքվեն եղել է անթերի: Փաստերը վկայում են, որ հայտարարությունները, թե Լեռնային Ղարաբաղի աղրբեջանցիներն այդ ժամանակ հեռացած են եղել, չեն համապատասխանում իրականությանը. Հանրաքվեի տվյալների պարզ վերլուծությունը վկայում է, որ նրանց մի մասը մասնակցել է հանրաքվեին, իսկ մյուս մասը, անսալով Բաքվի կոչերին, բոյկոտել է այն: Լեռնային Ղարաբաղը արել է և երրորդ՝ ամենամեծ զիջու-

9 Declaration on Principles of International Law concerning Friendly Relations and Co-operation among States in accordance with the Charter of the United Nations (A 8082)- http://daccessdds un org/doc/RESOLUTION/GEN/NR0/348/90/IMG/NR034890 pdf?

. չցանկանալով խաթարել հակամարտության լուծման որոնման ջանքերը, համաձայնել է, որ ժամանակավորապես Ադրբեջանի ներկայացուցիչների հետ հանդիպումների ժամանակ իր դիրքորոշումները ներկայացնի պաշտոնական Երևանը: Մինչդեռ Ադրբեջանը ոչ միայն դեռևս ոչ մի զիջում չի արել, այլև շարունակաբար նախապայմաններ է առաջադրում:

Հայաստանի իշխանությունների պատկերացմամբ հայկական կողմից զիջում կարող է լինել «հող՝ ԼՂՀ անկախության հանրաքվեի դիմաց» բանաձևի կիրառումը, եթե Ադրբեջանը համաձայնի Լեռնային Ղարաբաղում հանրաքվեի անցկացմանը, ինչը կոպիտ սխալ է մի քանի առումներով: Նախ, հանրաքվեի անցկացումը չի կարող դիտարկվել որպես Ադրբեջանի զիջում, քանզի այն Լեռնային Ղարաբաղի անօտարելի ինքնորոշման իրավունքի իրացումն է, որը բացարձակապես որևէ ձևով չի կարող կախված լինել Ադրբեջանի ցանկությունից: Ադրբեջանը չի կարող զիջել այն, ինչն իրեն չի պատկանում, ինչի նկատմամբ որևէ իրավունք չունի: Երկրորդ, խնդրի կարգավորման ժամանակ հնարավոր չէ անտեսել այն հանգամանքը, որ ԼՂՀ-ի և Ադրբեջանի միջև այսօր գոյություն ունեցող սահմանագիծը հաստատվել է որպես հետևանք Ադրբեջանի դաժան ագրեսիայի: Ընդ որում, այդ ագրեսիայի առաջին ալիքը դիմագրավելիս Լեռնային Ղարաբաղի զինված ուժերը բավարարվեցին ադրբեջանական զորքերը ԼՂԻՄ-ի սահմաններից դուրս մղելով(1992թ.): Հետագա զարգացումներն ապացուցեցին, որ այդ սահմանները հնարավոր չէ հուսալիորեն պաշտպանել նոր ագրեսիայից՝ դրանց արհեստական բնույթի և խիստ կտրտվածության պատճառով: Ադրբեջանը ստիպված եղավ համակերպվել խաղաղության հետ միայն ներկայիս սահմանագիծը հաստատվելուց հետո, համոզվելով, որ այն իր համար անառիկ է: Այդուհանդերձ, որևէ մեկը չի կարող երաշխավորել, որ իր ռազմական ծախսերն անգուսպ մեծացնող Ադրբեջանը երբևէ կրկին չի դիմի ագրեսիայի: Միակ զսպող հանգամանքը, շարունակական խաղաղության ու Լեռնային Ղարաբաղի անվտանգության երաշխիքը կարող են լինել

պաշտպանելի սահմանները: Այս հանգամանքը իրավունք չունեն երբևէ մոռանալու ոչ Հայաստանի Հանրապետության, ոչ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իշխանությունները: Ղարաբաղյան պատերազմը իրողություն է, որը չի կարելի անտեսել: Միջազգային իրավունքը նախատեսում է պատժամիջոցներ ռազմական ագրեսիա իրականացրած երկրի նկատմամբ և հայկական կողմը պարտավոր է այն սահմանող փաստաթղթերին քաջածանոթ լինել և պահանջել դրանց կիրառումը:

Այսօր իրավիճակը գլխիվայր է ներկայացվում հակամարտությանն առնչվող երկու այլ՝ գրավյալ տարածքների և փախստականների գործոնների պարագայում, ինչը ևս էապես աղավաղում է պատկերը: Իհարկե, հայկական կողմը գրավյալ տարածքների մասին պետք է խոսի՝ ԼՂՀ Շահումյանի շրջանի, Մարտակերտի և Մարտունու շրջանների գրավյալ հատվածների առնչությամբ: Ընդ որում, Շահումյանի շրջանը ոչ միայն ԽՍՀՄ օրենսդրությանը համապատասխան մասնակցել է հանրաքվեի և դարձել ԼՂՀ անբաժանելի մասը, այլև հետագայում ենթարկվել է Ադրբեջանի ագրեսիային և մինչ օրս գրավված է Ադրբեջանի կողմից: Իրական «գրավյալ տարածքը» հենց Շահումյանի շրջանն է, Մարտակերտի և Մարտունու շրջանների գրավյալ հատվածները, մինչդեռ հայկական կողմը միայն ժամանակ առ ժամանակ թույլ և հուսահատ ճիգեր է գործադրում դրա մասին խոսելիս:

Փոխզիջումների ենթատեքստում Հայաստանը չի օգտագործում նաև փախստականների խնդիրը: Այնպիսի տպավորություն է ստեղծվել, որ գոյություն ունեն միայն ադրբեջանցի փախստականներ: Մինչդեռ ոչ միայն հայ փախստականների թիվը համեմատելի է ադրբեջանցի փախստականների թվի հետ, այլև հայ փախստականների նյութական կորուստները շատ ավելի մեծ են, քանի որ ադրբեջանցի փախստականների հիմնական մասը հեռացել է Հայաստանից՝ նախապես վաճառելով բնակարանները և գույքը:

Կարգավորման հեռանկարները- երեք սցենար

Տեսականորեն հնարավոր է խնդրի լուծման երկու ճանապարհ՝ ռազմական և խաղաղ կարգավորման: Թեև վերջին շրջանում ավելի հաճախ են հանդիպում ռազմական հնարավորությունը իրական համարող վերլուծությունները («Քրայսիս գրուփ»-ի, Թ. դե Վաալի և այլն), սակայն դրանք, ամենայն հավանականությամբ, սոսկ ինչ-ինչ գործընթացներ խթանելու նպատակ են հետապնդում: Ռուս-վրացական պատերազմը ցույց տվեց, որ ռազմական լուծման ճանապարհը հղի է ինչպես ակնկալվածին հակառակ հետևանքներով, այնպես էլ համաշխարհային լուրջ անկայունության հրահրման մեծ պոտենցիալով: Ավելին, ՀԱՊԿ օպերատիվ արձագանքման ուժերի ստեղծումը տարածաշրջանում ռազմական բախումների ժամանակ իրավական պաշտպանություն ունեցող միջամտությունների իրական հիմքեր է ստեղծում: Առավել ևս, որ, ինչպես վերը նշվեց, ղարաբաղյան հարցում «ստատուս-քվո»-ի խախտման փորձերը բոլորովին չեն բխում Ռուսաստանի շահերից: Հետևաբար տեսանելի ապագայի համար ղարաբաղյան խնդրի լուծման ռազմական ճանապարհը գործնական նշանակություն չունի:

Միաժամանակ, Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման հավանականությունը «մադրիդյան սկզբունքների» հիման վրա նույնպես չափազանց փոքր է, քանզի փաստաթղթի ձևակերպումների անորոշությունը չափազանց մեծ է: Այն իմաստ կունենա գնահատել որպես կարգավորման իրական հիմք միայն այն բանից հետո, երբ հստակորեն սահմանվեն կարգավորման մեխանիզմները և հակամարտության երեք կողմերն ու բոլոր համանախագահները սկսեն խոսել նույն «լեզվով»: Մինչ այդ «լուծմանն առավել քան երբևէ մոտ լինելու» և անգամ «բանակցությունների առաջընթացի» մասին որևէ հայտարարություն լուրջ վերաբերմունքի արժանի չէ: Ընդ որում, հեշտ է նկատել, որ եթե Լեռնային Ղարաբաղի, Հայաստանի և Ադրբեջանի նպատակները կամ առավելագույն ծրագրերը իրարամերժ են (մի դեպքում՝ ԼՂՀ ան-

կախություն, մյուս դեպքում՝ ընդգրկում Ադրբեջանի կազմում), ապա նվազագույն ծրագրերը լիովին համընկնում են՝ «ստատուս-քվո»-ի պահպանում (ի դեպ, բարդ իրավիճակներում որոշումներ ընդունողները հաճախ հակվում են այն տարբերակներին, որոնք հնարավորություն են տալիս պահպանել գոյություն ունեցող իրավիճակը[10]):

Խնդրի կարգավորման իրական հնարավորություն կարող է ստեղծվել հետևյալ մեխանիզմներից որևէ մեկով «ստատուս քվո»-ն խախտվելու դեպքում.

- միջազգային հանրության ներսում փոխշահավետ համաձայնության առկայության դեպքում այդ հանրության ստիպողական գործողություններ (քանի որ արևմտյան որևէ կառույցի կողմից զինուժի գործադրումը Լեռնային Ղարաբաղում պետք է բացառել, ապա մնում է միայն մեկ գործնական նշանակություն ունեցող դեպք՝ միջազգային իրավունքի հիման վրա ԼՂՀ անկախության ճանաչում, քանի որ առանց զինուժի միջամտության ԼՂՀ վերադարձը Ադրբեջանի ենթակայության տակ պարզապես անհնար է),
- հակամարտության կողմերի շահագրգռում ռազմավարական նշանակության փոփոխություններով (օրինակ, ինչքան էլ այսօր դա անհավանական թվա, անդամակցություն Եվրոպական միությանը), թեև նման մեխանիզմն, օրինակ, Կոսովոյի կամ Կիպրոսի դեպքերում մեծ արդյունավետություն չունեցավ,
- աշխարհաքաղաքական հավասարակշռության կտրուկ փոփոխություն տարածաշրջանում, որի արդյունքում տարածաշրջանը կհայտնվի մեկ կենտրոնի լիակատար ազդեցության տակ և այն կթելադրի խնդրի լուծումը:

10 Эффективное принятие решений Harvard Business Review on Decision Making. Пер. с англ.2006.

Ակնհայտ է, որ առաջին երկու սցենարները տեսանելի ապագայում իրագործելու հիմքեր չկան, իսկ երրորդ սցենարի իրականացումը գործնականում հնարավոր է Ռուսաստանի կամ Միացյալ Նահանգների կողմից: Սակայն ինչքան էլ այդ սցենարը Ռուսաստանի համար գրավիչ ու ցանկալի է, սակայն խնդիրը ներկայումս չափազանց բարդ է, քանի որ Հայաստանի և Ադրբեջանի միաժամանակյա անվերապահ աջակցությունը ստանալուն խանգարում է թե Վրաստանի առաջացրած բարդությունների առկայությունը, թե Ղարաբաղյան խնդրի գոյությունը, որի որևէ լուծում չի կարող միաժամանակ բավարարել երկու երկրներին էլ: Հետևաբար այս փուլում Ռուսաստանի համար առավել նախընտրելին և հնարավորը իրավիճակի չվատթարացումն է: Միացյալ Նահանգների խնդիրն ավելի պարզ է թվում. ցանկալի իրավիճակը՝ Վրաստանից բացի տարածաշրջանի ևս մեկ երկրի արևմտյան անվերապահ կողմնորոշումը ստանալու համար անհրաժեշտ է միայն սադրել հարցի կարգավորում ցանկացած տարբերակով (թեև ադրբեջանահաճո տարբերակը կարող է ավելի ցանկալի լինել նավթի, միջինասիական տարածաշրջանի առումով ավելի նախընտրելի դիրքի և մի շարք այլ գործոնների պատճառով): Այդուհանդերձ, կա երկու լուրջ բարդություն: Դիմակայության խորացում նախաձեռնողի հաջողությունը երաշխավորված չէ և նա կարող է կորցնել նաև ունեցածը: Միաժամանակ, քանի որ, ինչպես վերը նշվեց, ազդեցության գոտիների վերաբաշխման ներկայիս փուլի ակտիվ դիմակայության շրջանի ավարտին մնացել է մեկ տասնամյակից էլ պակաս ժամանակ, ապա ամենայն հավանականությամբ **կարգավորման գործընթացը տեսանելի ապագայում էական զարգացումներ չի ունենա, իսկ ավելի ուշ կթևակոխի «ստատուս քվո»-ի տևական պահպանման մի շրջան (ինչպես կիպրական հակամարտության դեպքում)**, որի խախտումը կարող է անկանխատեսելի և անշրջելի հետևանքներ ունենալ ազդեցության գոտիների վերաբաշխման մասնակիցների համար: Անուղղակիորեն դրա մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ եթե ամռան սկզբին խոսվում էր կարճ ժամանակում կարգավորման

փաստաթղթի ստորագրման իրական հնարավորությունների մասին, ապա տարեվերջին լավատեսությունն էապես մարել է և արդեն խոսք է գնում միայն շրջանակային համաձայնագրի, այսինքն միայն մինչև վերջ համաձայնեցված «մադրիդյան սկզբունքների» մասին, որոնց հիման վրա հետագայում պետք է մշակվի կարգավորման համապարփակ փաստաթուղթ:

Այդ սցենարից շեղումը հնարավոր է միայն մեկ դեպքում (որպես Միացյալ Նահանգների վերոհիշյալ սադրանք), որն առավել վտանգավորն է հայկական կողմերի համար և որի տարրերը նկատելի են Մինսկի խմբի առաջարկությունների մեջ: Հայկական կողմերից ստացվում է համաձայնություն մի փաստաթղթի վերաբերյալ, որը պարունակում է ինքնորոշման իրավունքի վերաբերյալ անորոշ մեխանիզմներ ու ժամկետներ ունեցող ձևակերպումներ և այնպիսի առաջնային իրականացման զիջումներ, որոնցից հետո ներկայիս «ստատուս-քվո»-ի վերականգնումը դառնում է անհնարին: Այդ սցենարից խուսափելու համար հայկական կողմերից պահանջվում է մեծածավալ և մանրակրկիտ աշխատանք արվող առաջարկությունների վերլուծության ժամանակ՝ նրբորեն ձևակերպված խութերը շրջանցելու համար: Կարգավորման որևէ իրական մեխանիզմ պետք է պարունակի հակակշիռների և զսպումների գործուն մեխանիզմ, որի ազդեցությամբ գործընթացը պետք է վերադառնա ներկայիս «ստատուս-քվո»-ի վիճակին, եթե կարգավորման մեխանիզմի գործարկումից հետո կողմերից մեկը հրաժարվի կատարել հաջորդ քայլերը: Սակայն հայկական կողմերը հաջողություն ակնկալելու համար չեն կարող սահմանափակվել սոսկ բանակցային գործընթացին ուղղակիորեն առնչվող այդ խնդիրներով: Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը բարդ իրավական և աշխարհաքաղաքական խնդիրների լուծում է պահանջում, որի համար Հայաստանի իշխանությունները պետք է ձեռնամուխ լինեն համալիր ծրագրի իրագործմանը, որը ներառում է ՀՀ Ազգային ժողովի՝ ապրիլի 29–ին ընդունված հայտարարությունում ձևակերպված առաջարկությունները.

-Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորմանն ուղղված հայաստանյան քաղաքականությանը հաղորդել ավելի նախաձեռնողական բնույթ,

-ակտիվացնել և ընդլայնել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի վերաբերյալ միջազգային հանրությանը լիարժեք տեղեկացնելուն ուղղված միջոցառումների մշակման և իրականացման ջանքերը՝ այդ նպատակով ներգրավելով համահայկական ներուժը, հնարավորություններն ու միջոցները,

-միջազգային իրավունքի շրջանակներում մշակել այն իրավական հիմքերը, որոնք կապահովեն առավել արդյունավետ համագործակցություն Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջև, ինչպես նաև Ադրբեջանի կողմից ռազմական ագրեսիայի կամ այլ բռնի միջոցների կիրառման դեպքում Հայաստանի Հանրապետությանը՝ որպես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անվտանգության երաշխավորի, հնարավորություն կտան ապահովել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության լիարժեք անվտանգությունն ու պաշտպանությունը,

-բանակցությունների արդյունավետության ապահովման նպատակով ամեն ջանք գործադրել՝ վերականգնելու համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ներկայացուցիչների լիարժեք մասնակցությունն այդ գործընթացին՝ որպես հակամարտության միջազգայնորեն ճանաչված կողմ,

-նախապատրաստել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության միջազգային ճանաչման այլընտրանքային հնարավորություններ, որոնք պետք է գործադրվեն Մինսկի խմբի շրջանակներում ընթացող բանակցությունների տապալման դեպքում:

Հայտարարության ընդունումից անցել է մոտ մեկ տարի, սակայն դրա իրագործման ուղղությամբ որևէ քայլ չի արված, մինչդեռ հակամարտության բնույթի աղավաղմանն ուղղված Ադրբեջանի հետևողա-

կան ջանքերն ավելի ու ավելի են հաջողվում: Հապաղումը ոչ միայն շարունակաբար թուլացնում է Լեռնային Ղարաբաղի անխոցելի դիրքերը կարգավորման գործընթացում, այլև վտանգում է արդարացի լուծման հնարավորությունը:

ԳՈԴՈՅԻՆ ՍՊԱՍԵԼԻՍ.
կրկին պատմության քառուղիներով[11]

Պատմության քառուղիներով մենք քայլել ենք երկար՝
Անդեկ, ցաքուցրիվ, անգաղափար .
Եղիշե Չարենց

Ինչպես և սպասվում էր, ապրիլի 24-ը դարձավ շրջադարձային կետ հայ-թուրքական հարաբերությունների զարգացման մեջ՝ որպես տրանսաբանական հանգրվան նախընթաց ութամսյա իրադարձությունների: Այդ օրը, իսկ ավելի ճշգրիտ՝ նախորդ օրը, Հայաստանի և Թուրքիայի արտգործնախարարների համատեղ հայտարարությամբ ի չիք դարձավ հայ-թուրքական և հայ-ամերիկյան հարաբերություններում հայանպաստ սրբագրումներ անելու այն բարեպատեհ հնարավորությունը, որը հայաստանյան իշխանություններն ակամա ստացել էին Միացյալ Նահանգների նախագահական ընտրություններից հետո՝ որպես հետևանք հայ ընտրողներին թեկնածու Օբամայի տված խոստման: Հայտարարությունը դարձավ այդ գործընթացի միջանկյալ եզրագիծ, որից հետո գործընթացի և դրա առաջին փուլի արդյունքների ամփոփումն անհրաժեշտություն է:

11 «Առավոտ» օրաթերթ, 30 մայիսի, 1 հունիսի, 2009 թ

Խնդիրը

1993թ., նպատակ ունենալով օգտագործել Հայաստանում առկա չափազանց բարդ սոցիալ-տնտեսական վիճակը, Ղարաբաղյան պատերազմում իրավիճակի կտրուկ փոփոխությանը՝ պատերազմական գործողությունների տեղափոխմանը ԼՂՀ հարակից շրջաններ, Թուրքիան արձագանքեց՝ միանալով ադրբեջանական շրջափակմանը, Հայաստանի հետ սահմանը հայտարարեց փակ և հետագայում բազմիցս կրկնեց, որ այն կարող է բացվել, եթե Հայաստանը.

-հրաժարվի Ցեղասպանության ճանաչման գործընթացից,

-ազդի Սփյուռքի վրա՝ դադարեցնելու համար Հայ դատի լոբբինգային գործունեությունը,

-ճանաչի Թուրքիայի սահմանները,

-զորքերը դուրս բերի Լեռնային Ղարաբաղից և Ադրբեջանին հանձնվեն ԼՂՀ հարակից տարածքները.

Անցած մեկ և կես տասնամյակում պաշտոնական Հայաստանն անգամ փորձ չարեց պարզելու, թե ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի, ավելի ուշ՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ երկիրը իրավունք ունի՞ նման պահանջներ ներկայացնելով իր սահմանները փակ պահել հարևան, այդ կազմակերպությունների անդամ երկրի առաջ: Մինչդեռ նման խնդիրների արդյունավետ լուծումն անհնարին է առանց դրանց համակողմանի ուսումնասիրման, փորձագետների կողմից համապարփակ դիրքորոշման և գործողությունների ծրագրի մշակման ու դրա իրագործմանն ուղղված ակտիվ քաղաքականության իրականացման: Դրա բացակայության պայմաններում ընտրվեց չարիքի փոքրագույնը. Թուրքիայի ագրեսիվ քայլին Հայաստանը հակադրեց թեև անխոցելի, բայց պասիվ դիրքորոշում՝ «Հայաստանը պատրաստ է հարաբերությունների կարգավորմանն առանց նախապայմանների», որը տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով պահպանվեց մեկ և կես տասնամյակ: Այդ ընթացքում գաղտնի հանդիպումների մի քանի

փորձ արվեց՝ «հարաբերությունները կարգավորելու» նպատակով, սակայն դրանք երբեք բանակցությունների չհանգեցրին:

Իհարկե, յուրաքանչյուր երկիր և այդ երկրի յուրաքանչյուր ողջամիտ քաղաքացի ցանկանում է հարևան երկրների հետ ունենալ բնականոն և փոխշահավետ հարաբերություններ: Սակայն, միաժամանակ, յուրաքանչյուր գրագետ մարդ հասկանում է, որ դրա անհրաժեշտ պայման է հարևանների կողմից հայտնի «խաղի կանոնների» հարգումը, որոնք պետությունների համար սահմանված են միջազգային իրավունքի շրջանակներում՝ համաձայնագրերի, միջազգային կազմակերպությունների կանոնադրությունների և այլ փաստաթղթերի տեսքով: Այդ կանոնները խախտողների հետ բանակցություններ չեն վարվում, այնպես, ինչպես բանակցություններ չեն վարվում պատանդներ վերցրած ահաբեկիչների հետ՝ նրանց ցանկությունները կատարելու նպատակով: Նրանցից պահանջվում է նախ կատարել ստանձնած միջազգային պարտավորությունները՝ չեղյալ համարել շրջափակումը, ապա միայն դրանից հետո՝ քննարկել հարաբերությունների կարգավորմանն առնչվող հարցեր:

Նոր իրավիճակ և նոր գործընթաց

2008թ. ամռան սկզբին նախագահ Ս. Սարգսյանը որոշեց փոխել մարտավարությունը՝ անցնելով նախաձեռնողական գործունեության՝ Թուրքիայի նախագահին հրավիրելով Երևան: Դրան հաջորդած մի քանի իրադարձություններ՝ Հարավային Կովկասում միանգամայն նոր աշխարհաքաղաքական իրավիճակի ձևավորում, Միացյալ Նահանգներում նոր նախագահի ընտրություն և այլն, խթան դարձան հայ-թուրքական հարաբերությունների ակտիվ գործընթացի ձևավորման համար: Դեռևս անցած աշնանը ակնհայտ դարձավ, որ Հայաստանի իշխանությունները նախաձեռնել են մեկ քայլանի կոմբինացիա. բացակայում են

նախապատրաստական աշխատանքն ու այն ապահովող մասնագիտական միջավայրը, հետևաբար և հայեցակարգը, Հայաստանը գործընթացը սկսել է առանց սրբագրելու «առանց նախապայմանների կարգավորման» սկզբունքը՝ որպես դրա մեկնարկային անհրաժեշտ քայլ ձևակերպելով Հայաստանի շրջափակման վերացումը:

Ինչ վերաբերվում է Թուրքիայի գործողություններին, ապա առաջին հայացքից կարող է թվալ, որ «թուրքական կողմի համար գործընթացը եղել և մնում է նպատակ, այլ ոչ թե միջոց», ինչպես նշվում է վերջին վերլուծություններից մեկում: Մինչդեռ միջանկյալ արդյունքները վկայում են, որ ճիշտ հակառակն է՝ ութ ամսվա տևողություն ունեցող այս գործընթացը Թուրքիայի համար արդյունավետ միջոց է եղել իր հետևյալ նպատակներին հասնելու համար.

1. ցեղասպանության ճանաչման գործընթացի սառեցում,
2. Միացյալ Նահանգների նորընտիր նախագահի առաջին ապրիլքսանչորսյան ուղերձում «ցեղասպանություն» բառի օտագործման արգելափակում,
3. Հայաստանի իշխանությունների ու Սփյուռքի միջև աննախադեպ լարվածություն Ցեղասպանության հարցում,
4. ՄԱԿ Անվտանգության խորհրդի ժամանակավոր անդամություն,
5. աննախադեպ կարևոր դերակատարություն տարածաշրջանում,
6. Ռուսաստանի, Միացյալ Նահանգների և Եվրամիության հետ հարաբերությունների էական բարելավում:

Ընդ որում, այս ամենին Թուրքիան հասել է առանց որևէ քայլ ընկրկելու՝ սոսկ հերթապահ հայտարարություններ անելով հարաբերությունների նորմալացման մասին և դրանք զուգակցելով բարձրաստիճան պաշտոնյաների փոխլրացնող դիրքորոշումներին՝ հարաբերությունների կարգավորման նախապայմանների վերաբերյալ: Ինչ վերաբերում է այդ գործընթացի դեմ ադրբեջանական կամ թուրքական «ընդվզումներին», ապա Թուրքիան բազմիցս է ապացուցել, որ քաղաքական ներկայացումներ կազմակերպելու անուրանալի հմտություններ ունի:

Միակ բանը, որը որպես ձեռքբերում մատնանշում են Հայաստանի իշխանությունները, միջազգային լրահոսի ծավալն է՝ որպես արձագանք Գյուլի այցին և եռակողմ հայտարարությանը: Հետևաբար առաջին միջանկյալ փուլի արդյունքներով հենց Հայաստանի իշխանությունների համար է գործընթացը եղել նպատակ, այլ ոչ թե միջոց: Դա են վկայում թե «պինգ-պոնգյան դիվանագիտության», թե դը Գոլի և Աղենաուերի հետ պարզունակ, մակերեսային համեմատությունները, թե հայ-թուրքական գործընթացում հայկական կողմի համար դրական գործնական արդյունքների բացարձակ բացակայությունը: Խնդիրը միայն այն չէ, որ բացարձակապես այլ որակի են քննարկվող խնդիրները, կողմերի նպատակները, մտածելակերպն ու գործելակերպը: Առանցքային տարբերությունն այն է, որ այդ «դեպքերի» պարագայում բարձրաստիճան հանդիպումները մանրակրկիտ նախապատրաստվել են, դրանց նախորդել են վերջնական արդյունքն ապահոված խորհրդապահական աշխատանքային քննարկումներ փորձագետների մակարդակով և մինչ համաձայնությունների հրապարակումը որևէ կողմ չի փորձել մյուսի հաշվին խնդիրներ լուծել:

Հարկ է անդրադառնալ գործընթացի ևս երկու արդյունքի: Արտգործնախարարների համատեղ հայտարարությունը ստորագրելով՝ Հայաստանի իշխանությունները Օբամայի համար տրամաբանական հիմք ապահովեցին իր հայ ընտրողներին տված խոստումը չկատարելու համար: Հայաստան-Սփյուռք հարաբերություններում սա աննախադեպ երևույթ է և պատահական չէր սփյուռքահայության խոր հիասթափության և դժգոհության ալիքը:

Այդ հայտարարությունը բացահայտեց ևս մեկ աննախադեպ երևույթ. առաջին անգամ Հայաստանի Հանրապետության միջպետական հարաբերություններում հայտարարվում է ավարտուն փաստաթղթի գոյության մասին, որի բովանդակությունը չի հրապարակվում: Խոսքը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման «ճանապարհային քարտեզի» մասին է:

«Ճանապարհային քարտեզը»

Ըստ արտգործնախարարների ապրիլի 23-ի համատեղ հայտարարության, Հայաստանը և Թուրքիան «համաձայնության են հանգել իրենց երկկողմ հարաբերությունների կարգավորման համապարփակ շրջանակի շուրջ երկու կողմերին գոհացնող կերպով: Այս համատեքստում սահմանվել է ճանապարհային քարտեզ»: Ակնհայտ է որ խոսքը Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ ամբողջական և ավարտուն փաստաթղթի մասին է, որը սահմանում է այդ հարաբերությունների կարգավորման նպատակով երկու կողմերի գործողությունների ծրագիր: Եթե ընթացիկ քննարկումների և բանակցությունների խորհրդապահական բնույթը միանգամայն հասկանալի և ընդունելի է, ապա ավարտուն փաստաթղթերի չհրապարակումը ոչ միայն անընդունելի է, այլև հակասում է նման խնդիրներին առնչվող արարողակարգերին ու ավանդույթներին: Բացատրությունները, թե շուտով այն հասանելի կլինի հանրությանը, դրա հիման վրա մշակվող հանաձայնագիրը ստորագրումից հետո անպայման կներկայացվի Ազգային ժողովին և այլն, պարզապես խուսանավելու անհաջող փորձեր են: Ավելի անհաջող են արտգործնախարարի բացատրությունները, թե «քարտեզը» ոչ մի դրույթ կամ սկզբունք չի պարունակում, այլ՝ միայն ժամկետներ և քայլեր: Որևէ մեկը լիազորություն չունի միջպետական փաստաթղթի կառուցվածքի հիման վրա որոշելու՝ ինչը պետք է հրապարակել, ինչը՝ ոչ: Ավելին, երբ հասարակությունում, Ազգային ժողովում, փորձագետների կողմից հնչում են փաստաթուղթը հրապարակելու ապարդյուն պահանջներ, արտաքին գործերի նախարարի համառությունը դառնում է խիստ կասկածելի:

«Ճանապարհային քարտեզը» չհրապարակելը կարող է ունենալ երկու պատճառ.

-այն պարունակում է գործողությունների այնպիսի ցանկ, որը դժգոհության մեծ ալիք կարող է առաջացնել,

-կամ այն պարզապես գոյություն չունի՝ չի հաջողվել որևէ համաձայնեցված փաստաթուղթ ձևավորել մինչև ապրիլի 23–ի առավոտյան, և թուրք-ամերիկյան հարաբերություններում բարդություններ չառաջացնելու, նախագահ Օբամայի դեմքը փրկելու նպատակով հայտարարություն է արվել այն հույսով, որ հետագայում նման ինչ որ բան հնարավոր կլինի կազմել:

Այս վարկածներից որևէ մեկը չի կարող պատվաբեր լինել Հայաստանի իշխանությունների համար, սակայն դա հիմք չէ «քարտեզը» հասարակությունից թաքցնելու համար: Ավելին, այդ հանգամանքը հմտորեն օգտագործում է թուրքական կողմը, որը թուրք բարձրաստիճան պաշտոնյաների փոխլրացնող հայտարարություններին ավելացնելով «քարտեզի» վերաբերյալ տեղեկատվական «արտահոսքերը» (թուրքական «Սաբահ» թերթ և այլն) ոչ միայն ձևավորում է իր համար բարենպաստ կարծիք, այլև էլ ավելի է խորացնում Հայաստանի իշխանությունների նկատմամբ անվստահությունը թե երկրի ներսում, թե Սփյուռքում: Մինչդեռ Հայաստանի իշխանությունների զինանոցը խիստ աղքատիկ է. «քարտեզը» թաքցնում են ու սոսկ «երդվում», որ դրանում նախապայմաններ չկան:

Նախապայմանների մասին

Հայաստանի իշխանությունների պնդումները՝ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման համար նախապայմանների բացակայության վերաբերյալ, վերջին շրջանում ստացել են հետաքրքիր ձևակերպումներ: Մասնավորապես, ըստ արտգործնախարար Նալբանդյանի, «երբ որ ասում ենք առանց նախապայմանների են կարգավորվում հարաբերությունները, մենք նկատի ունենք՝ որևէ նախապայման չկա Ղարաբաղի հարցի լուծման հետ կապված և որևէ նախապայման չկա Ցեղասպանության ճանաչման հետ»(Հայաստանի Հանրապետություն, 28 ապրիլի, 2009թ.): Դիվանագետի խոսքում որևէ երանգ կամ

շեշտադրում չի կարող պատահականություն լինել: Հետևաբար հարց է առաջանում. եթե նախապայմանների բացակայությունը կապվում է երկու կոնկրետ խնդիրների հետ, ապա միգուցե կա որևէ ա՞յլ նախապայման և «քարտեզը» հենց այդ պատճառով չի գաղտնազերծվում:

Կա ևս մեկ հանգամանք՝ նախապայմաններին առնչվող: Այն բանից հետո, երբ մեկնարկել է գործընթացը, Թուրքիայի երկու նախապայման այս կամ այն չափով իրականություն է դարձել. Ցեղասպանության ճանաչման ուղղությամբ ոչ միայն սառեցվել են Հայաստանի Հանրապետության ջանքերը, այլև օտարերկրյա պետական ատյանների ածագանքները: Միաժամանակ, ապրիլքսաներեքյան հայտարարության հետևանքով ամերիկահայության ջանքերի խափանումը կարող է նախադեպ դառնալ հետագա զարգացումներում: Հետևաբար, Թուրքիայի շահերից բխում է ոչ թե նման խնդիրների ներառումը «քարտեզում», այլ գործընթացի ձգձումը հնարավորինս երկար, վստահ լինելով, որ այդ ընթացքում իր երկու նախապայմաններն ինքնաբերաբար կկատարվեն:

Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղին առնչվող նախապայմանին, ապա դրա ձևակերպումը՝ որպես Թուրքիայի վարչապետի բազմիցս կրկնված հայտարարություն, թե փաստաթղթային դրույթ, սոսկ նախընտրության և նպատակահարմարության հարց է: Թուրքիայի թիվ մեկ քաղաքական պաշտոնը զբաղեցնող վարչապետ Էրդողանը բազմիցս հայտարարել է Թուրքիայում, Ադրբեջանում և արտասահմանում(վերջինը՝ Լեհաստանում, մայիսի երկրորդ կեսին), որ «սահմանը չի բացվի, քանի դեռ չի կարգավորվել ղարաբաղյան հակմարտությունը և Ադրբեջանին չեն վերադարձվել գրավյալ տարածքները»: Ավելին, մայիսի վերջին, Բաքու կատարած առաջին այցի ժամանակ, նշանակումից մեկ ամիս էլ չանցած նույնը կրկնեց Թուրքիայի նոր արտգործնախարարը՝ Դավուդօղլուն: Մի՞թե դրանից հետո էլ հնարավոր է չտեսնել, որ Թուրքիան, գործընթացի առաջին փուլում ապահովելով լուրջ ձեռքբերումներ, երկրորդ փուլում ռևերանսներ անելու կարիք չի զգում և վերադառնում է ի շրջանս յուր:

Հայ-թուրքական հարաբերությունները և Լեռնային Ղարաբաղի խնդիրը

Թուրքիան երբեք չի թաքցրել իր հետաքրքրությունները Լեռնային Ղարաբաղի նկատմամբ և միշտ էլ հիանալի հասկացել է, որ այն բախտորոշ նշանակություն ունի թե Հայաստանի ապագայի, թե տարածաշրջանում ուժերի հարաբերակցության տեսակետից: Դեռևս անցած դարասկզբին, երբ թուրքական պետության գոյությունն իսկ խիստ կասկածելի էր, այդ երկիրը ոչ միայն հսկայական ջանքեր գործադրեց «Ադրբեջան» պետության ձևավորման համար, այլև ռազմական ուժեր ուղարկեց Լեռնային Ղարաբաղ: 90-ականների սկզբին էլ Թուրքիան ոչ միայն Լեռնային Ղարաբաղի դեմ ռազմական ագրեսիա սանձազերծած Ադրբեջանին աջակցում էր զինամթերքով և Բաքու ռազմական հրահանգիչներ ուղարկելով, այլև պատրաստ էր ներխուժելու նորանկախ Հայաստանի Հանրապետություն՝ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի հաշվեհարդարն ապահովելու նպատակով, եթե Ռուսաստանի միջամտելու սպառնալիքը չլիներ:

Հետագայում էլ, թե մինչ հայ-թուրքական շփումների ակտիվացումը, թե դրանից հետո Անկարան երբեք չի թաքցրել իր հետաքրքրությունը հակամարտության կարգավորման նկատմամբ և այս կամ այն ձևով միշտ փորձել է ազդել իրադարձությունների ընթացքի վրա: Դրան նպաստել է նաև այն հանգամանքը, որ Հայաստանը կարգավորման գործընթացում պատշաճ ուշադրությամբ չի վերաբերվել թուրքական գործոնին: Լեռնային Ղարաբաղի ենթակայությունն Ադրբեջանին բացառվում է ոչ միայն այն պատճառով, որ անթերի են ԼՂՀ անկախության հռչակման իրավական և գործնական հիմքերն, այլև հաշվի առնելով թե Օսմանյան կայսրության իրականացրած Ցեղասպանության, թե Նախիջևանի հայության լիակատար ոչնչացման ու դուրս մղման (Ցեղասպանության մեկ այլ դրսևորման) փաստերը:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման նկատ-

մամբ պաշտոնական Անկարայի հետաքրքրությունը վերջին շրջանում թեև առավել ընդգծված արտահայտվել է վարչապետ Էրդողանի հայտարարություններում, սակայն դա այս կամ այն ձևով դրսևորվել է նաև Թուրքիայի նախագահի ու արտգործնախարարի հայտարարություններում: Ընդ որում՝ անգամ ապրիլքսաներեքյան հայտարարությունից հետո. «Մեր առաջադրանքը սոսկ Թուրքիա-Հայաստան հարաբերությունների նորմալացումը չէ: Ձգտում ենք նաև Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների լիակատար նորմալացման» (Ա. Բաբաջան, 29.04.2009), «Այն դիվանագիտությունը, որ ծավալում ենք, և Թուրքիայի օգտին է, և Ադրբեջանի» (Ա. Գյուլ, 29.04.2009): Ցավոք Հայաստանի իշխանությունների արձագանքները, իսկ ավելի ճիշտ՝ դրանց բացակայությունը, երկու կաթիլ ջրի նման հիշեցնում է արձագանքներն ադրբեջանական հայտարարություններին: Ճիշտ է, Անկարան ավելի նուրբ է գործում. ոչ թե որոշ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ են խոսում հայտարարությունների ներքին օգտագործման բնույթի մասին, այլ թուրքական թերթերն են «արտահոսք» կազմակերպում վարչապետ Էրդողանի վրա բարձրագույն սպայական կազմի «ճնշումների» մասին: Եվ դա բնական է, Անկարան քաղաքական ներկայացումներ կազմակերպելու ավելի մեծ փորձ ունի:

Կեղծ գաղափարների անգերազանցելի անպարարը

Թուրքիան բազմիցս ապացուցել է, որ հիանալի է օգտագործում կեղծ գաղափարներն իր նպատակներին հասնելու համար: Անցած դարասկզբին, շատ լավ հասկանալով կոմունիստական գաղափարախոսության սնանկությունը, հենց այն օգտագործելով Թուրքիան կարողացավ ոչ միայն դուրս գալ հոգեվարք ապրող Օսմանյան կայսրության փլատակների տակից, այլև նրա ամենակենսունակ հատվածի վրա ձևավորել լուրջ ներուժ ունեցող պետություն: Անցած օգոստոսին ռուս-վրացական պա-

տերազմը նոր էր սկսվել, երբ Անկարան հրապարակ նետեց անվտանգության և համագործակցության պլատֆորմի կեղծ և հիմնազուրկ գաղափարը, որն ինն ամիս հաջողությամբ շահարկում է առանց փաստաթղթային ձևակերպման: Գրեթե միաժամանակ սկսվեց հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը՝ հիմքում ունենալով վերացական հայտարարություններ «սահմանը բացելու» մասին: Ընդ որում, թուրքական կողմն առանց որևէ գործնական քայլի առաջին միջանկյալ եզրագծին հասավ վերոհիշյալ էական արդյունքերով՝ սոսկ ապավինելով տարածաշրջանային բեմադրիչի ու ածպարարի իր ավանդական հմտություններին: Այս ներկայացումներում զանգվածային տեսարաններն ապահովում էին Ադրբեջանն ու թուրքական «հասարակությունը», իսկ գլխավոր գործող անձինք երեքն էին՝ Թուրքիայի արտգործնախարարը, նախագահն ու վարչապետը՝ ճշգրիտ դերաբաշխումով: Նրանցից առաջինի՝ Ալի Բաբաջանի հեռացումը բեմահարթակից (պաշտոնափոխությունը) ևս մեկ խորհրդանիշ է, որ գործընթացի, իսկ ավելի ճիշտ՝ ներկայացման առաջին մասն ավարտվեց ապրիլի 24–ով:

Առաջին արարում Հայաստանի իշխանությունների համար նախատեսված էր երկրորդ պլանի դերակատարություն՝ հատկապես արարողակարգային ձեռքսեղմումների ու ժպիտների փոխանակման տեսարաններում:

Ի՞նչ է պալու «սահմանի բացումը»

Հիմնական փաստարկը, որն այսօր բերվում է Հայաստանի իշխանությունների վարած քաղաքականությունը արդարացնելու համար, հայ-թուրքական «սահմանի բացման» շահավետությունն է: Այս մոտեցումը հարկ է դիտարկել երեք տեսանկյունից՝ իրավական, տնտեսական և բարոյական: Իրավական խնդիրը վերաբերվում է «սահմանի բացում»

արտահայտությանը, որը կոպտորեն աղավաղում է իրողությունը: Թուրքիան շրջափակել է Հայաստանը և այդ երևույթի նենգափոխումն ինքնին դատապարելի քայլ է, ինչպես անընդունելի է «ցեղասպանություն» եզրույթի փոխարեն «ոճիր», «նախճիր», «զանգվածային սպանություններ» և այլ արտահայտությունների օգտագործումը, քանզի «շրջափակումը» միջազգային իրավունքի նորմերի համաձայն հանցագործություն է:

Որպես «սահմանի բացման» սպասվող արդյունք հիմնականում նշվում է, որ

-Հայաստանը կստանա այլընտրանքային, ավելի վստահելի և արդյունավետ տրանսպորտային հաղորդակցության ուղի,

- 700-800 միլիոն դոլարով կաճի Հայաստանի առևտրաշրջանառությունը (հիմնականում՝ արտահանումը)

Հատկանշական է, որ նման «կանխատեսումներ» արվում են առանց փաստարկված վերլուծությունների ու հաշվարկների: Մինչ այժմ չի ուսումնասիրվել Թուրքիայի օրենսդրությունը հայաստանյան բեռնափոխադրումների տեսակետից: Արտաքին առևտրաշրջանառության և հատկապես սարտահանման աճի վերաբերյալ ներկայացվող թվերը ևս չունեն որևէ հիմնավորում. Հայաստանում ո՞ր ապրանքների արտադրությունն է դառնալու նման աճի հիմքը, ո՞ր շուկաներում են այդ ապրանքներն իրացվելու, ինչի՞ շնորհիվ, և այլն:

Ինչ վերաբերում է հաղորդակցության ավելի վստահելի և արդյունավետ ուղու հեռանկարներին, ապա նման «կանխատեսումներ» անողների համար տեղեկությունների միակ աղբյուրը հավանաբար որոշ միջազգային կազմակերպությունների պարզամիտ պաշտոնյաներն են: Արդյունավետության և վստահելիության գլխավոր երաշխիքը կանխատեսելիությունն է, ընդունված կանոնների հարգումը: Թուրքիան ոչ միայն Հայաստանի տասնհինգամյա շրջափակման մասնակից է, այլև բազմիցս է ապացուցել, որ երբեք չի վարանում միջազգային իրավունքի նորմերը խախտել, եթե տեսնում է դույզն ինչ օգուտ: Եթե անգամ մի օր

Թուրքիան վերացնի շրջափակումն, ապա մի՞թե կարող է լինել որևէ ողջամիտ մարդ, որը կասկածի, որ առաջին իսկ պատեհ առիթով այդ ճնշումը կամ դրա սպառնալիքը կիրառելու է Հայաստանի դեմ:

Կա նաև կարծիք, որ թուրքական սահմանը պետք է ամեն գնով «բացել», քանի որ միայն դա կարող է ապահովել Հայաստանի տնտեսության զարգացումը, չէ որ «մենք էլ ենք ուզում լավ ապրել» և դրա համար «պետք է Սփյուռքին բացատրենք, որ մենք չենք կարող մշտապես երկրնտրանքի առաջ լինել. մեր երեխաների ապագա՞ն, թե՞ Սփյուռքի հարցադրումները»: Դժվար է հիշել որևէ ժամանակահատված, երբ Հայաստանում գտնվել են մարդիկ, ովքեր ոչ միայն իրենց թույլ են տվել հրապարակավ Ցեղասպանության խնդիրը համարել «Սփյուռքի հարցադրում», այլև Հայաստանի զարգացման դժվարությունները բացատրել «Սփյուռքի հարցադրումներին» տուրք տալով: Միգուցե նրանք, ովքեր մտահոգ են Հայաստանի զարգացման խնդիրներով, Թուրքիային ուղղված իրենց հայացքը շրջեին Հայաստան և տեսնեին տնտեսությունը խեղդող կոռուպցիան, հովանավորչությունը, օրենքի անսանձ ոտնահարումը, քաղաքական ու հասարակական կյանքի աննախադեպ քրեականացումը: Իսկ միգուցե մտածում են, որ Թուրքիան «կբացի» սահմանն ու կգա լուծելու նաև այդ խնդիրները:

Եզրակացություն

1. 2009թ. Ապրիլի 23-ին արտգործնախարարների համատեղ հայտարարությունով ավարտվեց հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացի առաջին փուլը, որը սկսվել էր գրեթե մեկ տարի առաջ Հայաստանի արտաքին քաղաքականության այս բաղադրիչի կտրուկ ակտիվացումով՝ Թուրքիայի նախագահին Երևան այցելելու հրավերով:

2. Այդ փուլում

-Թուրքիան կարողացել է իրագործել իր մի շարք նպատակներն՝ առանց որևէ զիջման կամ կորստի,

-Հայաստանի ակտիվ քաղաքականությունը հայ-թուրքական հարաբերությունների առաջին փուլում լիովին ձախողվել է՝ նման բարդ գործընթացին անհարիր պարզունակ մոտեցումների, փորձագիտական նախապատրաստական աշխատանքի ու հայեցակարգի բացակայության պատճառով:

3. Ապրիլի 24-ից հետո սկսված նոր փուլում Թուրքիայի հիմնական նպատակն է գործընթացի ձգձգումը, ինչի արդյունքում սառեցված է մնալու Ցեղասպանության ճանաչման գործընթացը:

4. Հայաստանի իշխանությունները արտգործնախարարների համատեղ հայտարարությունից հետո չհրապարակելով «ճանապարհային քարտեզը՝» կոպտորեն խախտում են միջպետական փաստաթղթերի համար հաստատված արարողակարգերն ու ավանդույթները:

5. Հայաստանի իշխանությունները «կարգավորման» գործընթացի երկրորդ փուլը ևս սկսել են լուրջ բացթողումով, հայտարարելով, որ «սահմանի բացման» վերջնաժամկետ են համարում հոկտեմբերը:

6. Իրավիճակի հետագա վատթարացումից խուսափելու համար Հայաստանը պետք է անհապաղ դադարեցնի գործընթացը՝ թուրքական կողմից պահանջելով պաշտոնական հրապարակային հերքում վարչապետ Էրդողանի բազմաթիվ հայտարարությունների վերաբերյալ, ըստ որոնց Հայաստանի հետ սահմանը Թուրքիան կբացի միայն Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումից հետո: Հարաբերությունների կարգավորման բանակցությունները կարող են իրական ընթացք ստանալ միայն Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակումը վերացնող հայտարարությունից հետո:

ՄԱԴՐԻԴՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ.
հին սխալներն ուղղելու նոր հնարավորություն[12]

Հուլիսի 10–ին իտալական Լ'Աքիլա քաղաքում, «մեծ ութնյակի» գագաթաժողովի ընթացքում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երեք երկրների՝ ԱՄՆ, Ռուսաստանի և Ֆրանսիայի նախագահները հանդես եկան Ղարաբաղյան խնդրի կարգավորման վերաբերյալ հայտարարությամբ: Թեև մինչ գագաթաժողովը բավական բարձր էր գնահատվում նման հայտարարության հավանականությունը, սակայն մեկ հանգամանք հայտարարությունը դարձրեց առանձնահատուկ: Այն ոչ միայն պարունակում էր նման հայտարարություններին բնորոշ աջակցություն խնդրի կարգավորմանն ու հորդորներ Հայաստանի և Ադրբեջանի նախագահներին՝ «լուծել իրենց միջև առկա սակավաթիվ տարաձայնությունները և ավարտուն տեսքի բերել Հիմնարար սկզբունքների վերաբերյալ իրենց համաձայնությունը, ինչը կուրվագծի համապարփակ կարգավորում», այլև կից՝ որպես փաստացի նյութ, մադրիդյան հիմնարար սկզբունքները: Թեև հակամարտության կարգավորման ընթացքում նշակվել է չորս փաստաթուղթ, սակայն առաջին անգամ է, որ մինչ փաստաթղթի հետ կապված գործընթացների ավարտը(նախկինում՝ տապալումը) այն հրապարակվում է: Հետևաբար, հետագա զարգացումների տրամաբանությունը կանխատեսելու առումով կարևոր է վերլուծել ոչ միայն սկզբունքների էությունը, այլև պարզել հայկական կողմերի վերա-

12 «Առավոտ» օրաթերթ, 23, 24 հուլիսի , 2009թ

բերմունքը ձևակերպված սկզբունքներին, ինչպես նաև դրանց աննախադեպ հրապարակման պատճառները:

Ինչու հրապարակվեցին մադրիդյան սկզբունքները

Օգոստոսյան ռուս-վրացական պատերազմից հետո տարածաշրջանում ազդեցության գոտիների վերաբաժանման գործընթացում արձանագրվեց արմատական տեղաշարժ՝ Հարավային Կովկասի երեք ճանաչված պետություններից մեկը՝ Վրաստանը գրեթե լիովին խզել է կապերը Ռուսաստանի հետ և ամբողջությամբ հայտնվել ԱՄՆ ազդեցության ներքո: Դա առանձնապես չի թաքցնում նաև Վրաստանի նախագահը, որը յուրաքանչյուր պատեհ ու անպատեհ առիթով իր երկրի բոլոր լուրջ խնդիրների լուծումը կապում է Միացյալ Նահանգների հետ: Այդուհանդերձ, տարածաշրջանի աշխարհաքաղաքական դիրքն այնպիսին է, որ Հարավային Կովկասում ամբողջական ազդեցություն ապահովելու համար անհրաժեշտ է լիարժեք ազդեցություն ունենալ երեք երկրներից առնվազն երկուսում (ավելի մանրամասն՝ **Տ.Թորոսյան**. Օտար խաղեր: «Ազգ», 26, 27 մարտի, 2009թ.): Այդ նպատակով օգոստոսյան պատերազմից հետո Ռուսաստանը կտրուկ ակտիվացրել է իր հարաբերությունները Ադրբեջանի և Հայաստանի հետ բոլոր ուղղություններով, այդ թվում և Ղարաբաղյան հակամարտության կարգավորման: Թեև անցած նոյեմբերին Մոսկվայում Ռուսաստանի, Ադրբեջանի և Հայաստանի նախագահների հրապարակած հռչակագիրը չէր հակադրվում Մինսկի խմբի գործունեությանն ու ձևաչափին, սակայն ակնհայտ էր, որ այն նպատակ ուներ ընդգծելու Ռուսաստանի առանձնահատուկ դերակատարությունը տարածաշրջանում: Մինչդեռ Ռուսաստանի և ԱՄՆ շահերը Ղարաբաղյան խնդրի կարգավորման տեսակետից հակոտնյա են. եթե Մոսկվայի համար նպաստավոր է կարգավորման ձգձգումը, ապա Վաշինգտոնը շահագրգիռ է արագ հանգուցալուծման կամ գոնե հավասա-

պակշռության անշրջելի խախտման մեջ՝ հարուցելով Հայաստանի կամ Ադրբեջանի լուրջ դժգոհությունը: Հետաքրքիր է, որ դա սկսել են նկատել նաև թուրք փորձագետները: Ըստ Ռազմավարական և միջազգային հետազոտությունների կենտրոնի (CSIS) Թուրքիային վերաբերող ծրագրի ղեկավար Բ. Ալիրիայի, «Մենք դեռևս շատ հեռու ենք պնդելու համար, որ ԱՄՆ և Ռուսաստանը պայմանավորվել են բոլոր հարցերի մասին և նրանք վեճեր չունեն, ինչն իհարկե կատարյալ կլիներ, բայց առայժմ այդպես չէ: Ռուսաստանը պետք է դարաբաղյան խնդիրը կարգավորելու ցանկություն դրսևորի»[13]:

Տարածաշրջանում ազդեցության վերաբաժանման տեսակետից Միացյալ Նահանգների համար մոսկովյան հռչակագրի պատասխան քայլը միայն նպատակահարմար պահի ընտրության խնդիր էր: Այդ քայլը պետք է լիներ ավելի բարձր մակարդակի իրադարձության ժամանակ, քան մոսկովյան հռչակագրի նպատակով կազմակերպված հանդիպումն էր, պետք է լիներ կարգավորման գործընթացում աննախադեպ, այդ գործընթացը խթանող և կողմերի նախնական պայմանավորվածությունները արձանագրող՝ ի նկատի ունենալով նման պայմանավորվածություններից հրաժարումների նախորդ դեպքերը, երբ գործընթացները մոտենում էին ավարտին: Մեծ ութնյակի գագաթաժողովի ժամանակ արված հայտարարությունը բավարարում է այդ բոլոր պայմաններին. Ավելին, քանի որ այն Մինսկի խմբի ձևաչափով է արված, ապա իր կարգավիճակով ակնհայտորեն գերազանցում է մոսկովյան հռչակագիրը: Թեև նման հայտարարության ընդունումը չէր բխում Ռուսաստանի նպատակներից, սակայն համանախագահողի կարգավիճակ ունեցող երկրի համար գործնականում անհնար էր ընդդիմանալ մի հայտարարության հրապարակմանը, որը կոչ է անում հաղթահարել տարաձայնությունները ու ձևավորել համապարփակ կարգավորման հիմքերը:

Լ'Աքիլայի հայտարարության հրապարակումն արձանագրեց, որ

13 www day az/print/news/politics/164716 html, 14 07 2009

Հարավային Կովկասում ազդեցության գոտիների վերաբաժանման նոր փուլում Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը դառնում է Ռուսաստան-ԱՄՆ դիմակայության հիմնական հարթությունը, ինչը նոր, ավելի բարդ մարտահրավերներ է առաջադրում հայկական կողմերին: Ներկայացված տրամաբանությանը միանգամայն համահունչ է Եվրասիայի հարցերով ամերիկյան հայտնի փորձագետ, "Heritage Foundation"-ի եվրասիական ուղղության ղեկավար Ա. Կոհենի արձագանքը ընդունված հայտարարությանը.« Բաքվի, Երևանի և Մոսկվայի միջև կոնտակտների ինտենսիվացումը, որը նկատելի է վերջին շրջանում, ևս արդյունք է Վրաստանում Կրեմլի ուժի ցուցադրության: Շատ բան կախված է Վաշինգտոնից, Բրյուսելից և եվրոպական մայրաքաղաքներից, որոնք իրապես պետք է ներգրավվեն տարածաշրջանի անվտանգության խնդիրների «ղեկավարման» մեջ: Առանց դրա կարող է թվալ, որ մենք կանաչ լույս ենք տվել տարածաշրջանում առանձնահատուկ հետաքրքրությունների կառուցմանը»[14]:

Մադրիդյան սկզբունքներն՝ ըստ էության

Ինչպես հայտնի է, 2007թ. նոյեմբերին, Մադրիդում համանախագահող երկրների ներկայացուցիչները Հայաստանին ու Ադրբեջանին ներկայացրել էին հիմնարար սկզբունքները: Թեև դրանք անցած ժամանակահատվածում չեն հրապարակվել, սակայն տարբեր ուղիներով այս կամ այն չափով հայտնի են դարձել: Այդուհանդերձ, հուլիսի 10-ի հայտարարության բովանդակությունը[15] հատուկ հետաքրքրություն է ներկայացնում երկու առումով. այն մադրիդյան սկզբունքների առաջին պաշտոնական հրապարակային հաստատագրումն է և, որպես ապագա իրավական փաստաթղթի հիմք, կարևոր է ձևակերպումների ոչ միայն

14 www day az/print/news/politics/164714 html, 14 07 2009
15 www osce org/item/38731 html, 11 07 2009

իրավանդակության, այլև մանրամասների տեսակետից: Ընդ որում, կարևոր է հատկապես հայտարարության երկրորդ մասը, որը ներառում է ոչ միայն ներկայացված սկզբունքներն, այլև դրանց նախորդող հետևյալ արձանագրումը՝ «հիմնարար սկզբունքները արտահայտում են ողջամիտ փոխզիջում, որը հիմնված է Հելսինկյան եզրափակիչ ակտի հետևյալ սկզբունքների վրա՝ ուժի չկիրառում, տարածքային ամբողջականություն, ժողովուրդների հավասար իրավունքներ և ինքնորոշում» **Անշուշտ կարևոր է, որ նշվում է ինքնորոշման իրավունքը՝ որպես հակամարտության կարգավորման հիմնատարր, սակայն դա որևէ կերպ չպետք է ներկայացվի կամ ընկալվի որպես հայկական կողմերին տրված զիջում:** ԵԱՀԿ ստեղծման կանոնադրական հիմքը Հելսինկյան եզրափակիչ ակտն է, որն անդամ երկրներից յուրաքանչյուրը պարտավոր է հարգել անվերապահորեն: Այդ փաստաթուղթը սահմանում է կազմակերպության համար հիմնարար 10 սկզբունք և, որ «բոլոր այդ սկզբունքներն էլ ունեն առաջնահերթ նշանակություն»: Այսինքն, համանախագահները սոսկ արձանագրել են այն, ինչն իրենց պարտադրում է Հելսինկյան եզրափակիչ ակտը՝ առանձնացնելով այդ 10 սկզբունքներից երեքը: Քանի որ առիթ եղել է[16] մանրամասն անդրադառնալու այն հարցին, որ տարածքային ամբողջականության սկզբունքը որևէ հակասություն չունի ինքնորոշման իրավունքի հետ, ստորև արձանագրենք միայն, որ ըստ սահմանման առաջինը գործում է Ադրբեջանի և Հայաստանի միջև հարաբերությունների կարգավորման դեպքում (որպես ԵԱՀԿ անդամ երկրներ), իսկ երկրորդը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Ադրբեջանի միջև:

Ինչ վերաբերում է մադրիդյան սկզբունքներին, ապա հուլիսի 10-ի հայտարարության համաձայն դրանք վեցն են: Հարկ է դրանք դիտար-

16 **Թորոսյան Տ.** Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը միջազգային իրավունքի շրջանակներում Տիգրան Մեծ, Երևան, 2008թ , 340 էջ **Torosyan T.** Imaginary Contradiction - "Russia in Global Affairs" № 4, October - December 2007, p p 168-179

կել առանձին-առանձին, քանի որ էական նշանակություն ունի դրանց ոչ միայն ընդհանուր գաղափարն, այլև ձևակերպման յուրաքանչյուր մանրամասն ու դրա իրավական հետևանքը:

1.Լեռնային Ղարաբաղի հարակից տարածքների վերադարձ Ադրբեջանի վերահսկողության ներքո:

Ակնհայտ է, որ այս ձևակերպումը չի կարող սկզբունք կոչվել: Սա միակողմանի քայլ է Ադրբեջանի օգտին: Պատահական չէ, որ օգտագործված է «Լեռնային Ղարաբաղ» անորոշ ձևակերպումը: Ի՞նչ է դա՝ աշխարհագրակա՞ն, թե՞ վարչական տարածք: Եթե անգամ նկատի ունեն վարչական տարածք, ապա ո՞ր սահմաններով: Առաջին հայացքից կարող է թվալ, թե խոսքը ԼՂԻՄ-ի սահմանների մասին է: Սակայն դժվար չէ նկատել, որ այդպես չէ. որևէ խոսք չկա ոչ միայն Շահումյանի շրջանի, այլև Մարտունու և Մարտակերտի շրջանների գրավյալ տարածքների մասին: Ավելին, եթե անգամ նշված լիներ, որ խոսքը ԼՂԻՄ-ի վարչական սահմանների մասին է, ապա դա ևս չէր կարող ընդունելի լինել, քանի որ **ա)** ԼՂԻՄ-ը կազմավորելիս դրանք գծվել են կամայականորեն, **բ)** այդ պատճառով դրանք բացարձակապես անպաշտպանելի են և անկախ որևէ երաշխիքից միշտ պահպանվելու է Ադրբեջանի նոր ագրեսիայի վտանգը՝ անգամ ԼՂՀ միջազգայնորեն ճանաչվելուց հետո, **գ)** ներկայիս իրավիճակը ստեղծվել է Ադրբեջանի ագրեսիայի հետևանքով, որի ընթացքում ԼՂՀ-ն կրել է հսկայական վնասներ և Ադրբեջանը պետք է փոխհատուցի այդ վնասները՝ միջազգային իրավունքի համաձայն:

2. Միջանկյալ կարգավիճակ Լեռնային Ղարաբաղի համար՝ ապահովելով անվտանգության և ինքնակառավարման երաշխիքներ:

Այս կետը, ինչպես և վերջինը, հետևանք է այն բանի, որ համանախագահների հիմնական գաղափարներից մեկը ԼՂՀ կարգավիճակի սահմանման արհեստական հետաձգումն է:

3. Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը կապող միջանցք:

Այս կետը դիտարկվում է առաջին կետի հետ համատեղ: «Միջանցք» սնորոշ բառի օգտագործումով համանախագահներն իրենց համար խուսանավումների հնարավորություն են ստեղծել՝ կողմերից յուրաքանչյուրի հետ գոնե ինչ որ ժամանակահատվածում տարբեր ձևով մեկնաբանելու համար:

4. Լեռնային Ղարաբաղի ապագա իրավական կարգավիճակի սահմանում՝ իրավականորեն պարտավորեցնող կամարտահայտության միջոցով:

Կարգավորման գործընթացի առանցքային՝ ԼՂՀ կարգավիճակի միջազգային ճանաչման հարցը, ըստ ներկայացված սկզբունքների և հարցերի լուծման հերթականության, վերջինն է: Դա որևէ ողջամիտ հիմնավորում չունի: Համանախագահները երբևէ որևէ հիմնավորում չեն բերել, թե ինչու չպետք է հաշվի առնվի 1991թ. անթերի անցկացված հանրաքվեի արդյունքը: Ավելին, այս կետի առկայությունը բանակցությունների օրակարգում՝ ինքնորոշման իրավունքը որպես կարգավորման հիմնատարր (այս կետի համար՝ որպես հիմք) արձանագրելու պայմաններում, պարզապես ջախջախում է գործընթացի տրամաբանությունը. ինքնորոշման իրավունքը դրա հիմքն է ճանաչվում, բայց ինքնորոշվող ԼՂՀ-ի ներկայացուցիչը չի մասնակցում բանակցություններին: Համանախագահների ներկայացրած այս ձևակերպումը ոչ միայն բացարձակապես համատեղելի չէ փաստերի, միջազգային իրավունքի նորմերի ու տարրական տրամաբանության հետ, այլև չափազանց վտանգավոր է: Բոլոր ձևակերպումները հեղհեղուկ են. ո՞վ է սահմանելու կարգավիճակը, ո՞ւմ համար այն պիտի լինի պարտավորեցնող, եթե պետք է անցկացվի նոր հանրաքվե(դա ուղղակիորեն չի բխում այս կետի ձևակերպումից), ո՞ր տարածքում է անցկացվելու, ի՞նչ հարցադրումով, ո՞ւմ կամքն է արտահայտվելու և այլն: ԼՂՀ-ն իր համար ճակատագրական այս հարցերի

ընդունելի պատասխանները պետք է տեսնի հստակ և ուղիղ արձանագրված և բոլոր իրավունքներն ունի չհավատալու որևէ մեկի հավատիացումներին, խոստումներին կամ մեկնաբանություններին:

5. Բոլոր ներքին տեղահանված անձանց և փախստականների՝ իրենց մշտական բնակության նախկին վայրերը վերադառնալու իրավունք:

Ընդհանուր առմամբ այս ձևակերպումը կարող է հակամարտության կարգավորման սկզբունք համարվել, եթե օգտագործվի «բոլոր» բառի ընձեռած հնարավորություններն ու օրակարգում ներառվի հայ փախստականների խնդիրը· Պահանջվում է տևական հետևողական աշխատանք ու մանրամասների ճշգրտում՝ այս խնդրի լիարժեք լուծումն ապահովելու համար: Արտգործնախարար Նալբանդյանը հայտարարել է, որ փախստականների՝ ԼՂՀ վերադարձի հարցն ընդհանրապես չի քննարկվել: Սակայն ձևակերպումը պարունակում է վերապահում չենթադրող «բոլոր» բառը: Ավելին, համանախագահներն իրենց բազմաթիվ հայտարարություններում այս կետի իրագործման հետ են կապել կարգավիճակի որոշման խնդիրը, համարելով, որ դա պետք է արվի Լեռնային Ղարաբաղ փախստականների վերադարձից հետո: Սկզբունքների հրապարակումը բացահայտում է, որ դա պարզապես աճպարարություն է՝ հակամարտության առանցքային հարցի լուծումը հետաձգելու համար:

6. Անվտանգության միջազգային երաշխիքներ, այդ թվում և խաղաղապահ առաքելություններ:

Խաղաղապահ առաքելությունների փորձը վկայում է, որ դրանք չեն ապահովում անվտանգության երաշխիքներ, այլ միայն միջոց են ինչ-որ լուծումներ պարտադրելու համար: 15 տարի շարունակ հրադադարի հաստատման և ԼՂՀ անվտանգության երաշխավորը եղել է ԼՂՀ Պաշտպանության բանակը: Այն խաղաղապահ, այդ թվում և միջազգա-

յին առաքելություններով փոխարինելը իրական վտանգ է ստեղծում ապագա զինված բախումների համար: Այս «սկզբունքի» կարիքը բացարձակապես չկա Ղարաբաղյան հակամարտության կարգավորման պարագայում: Այն առաջանում է որպես այն բանի հետևանք, որ, ըստ 4-րդ կետի, արհեստականորեն հետաձգվում է ԼՂՀ կարգավիճակի սահմանումը: Անվտանգության երաշխիքները պետք է դիտարկվեն 1-ին, 3-րդ և 4-րդ կետերի լուծումների շրջանակներում՝ որպես ԼՂՀ անկախ կարգավիճակ, պաշտպանելի սահմաններ, Հայաստանի Հանրապետության հետ լիարժեք սահմանակցություն:

Այսպիսով, որպես մադրիդյան սկզբունքներ ներկայացված վեց ձևակերպումները չեն կարող հիմք լինել Ղարաբաղյան հակամարտության կարգավորման համար, քանի որ թերի են, պարունակում են բազմաթիվ անորոշություններ և սահմանում հարցերի լուծման չհիմնավորված հերթականություն: Դա հաստատում են նաև միջազգային փորձագետների գնահատականները: Եվրասիական հարցերով ամերիկյան հայտնի փորձագետ Ա. Կոհենը հետևյալ գնահատականն է տվել հրապարակված սկզբունքներին. «Ութնյակը ցանկանում է այն (հակամարտությունը) լուծել, ընդ որում, լուծել՝ հաշվի առնելով Ադրբեջանի կենսական շահերը: Հարցն այն է... ի՞նչ կարող են առաջարկել «ութնյակի» ղեկավարները Հայաստանին: Օրինակ, կարող են առաջարկել ավելի խորը ինտեգրացիա Եվրամիության հետ, ընդհուպ մինչև անդամակցություն... Եվ ինչպես կվերաբերվի դրան Ռուսաստանը»: Փոխհատուցում են առաջարկում նրան, ով հարցի լուծման արդյունքում լուրջ կորուստներ է ունենում:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արշաքանքը

Պաշտոնական Ստեփանակերտի արձագանքը Լ'Աքիլայի հայտարարությանը միանգամայն համարժեք էր և հետևողական: Նախ, ԼՂՀ նախագահ Բ. Սահակյանը ևս մեկ անգամ արձանագրեց անկախության ընտրության անշրջելիությունը և Արցախի ժողովրդի կամքը՝ սեփական ճակատագիրն ինքնուրույն տնօրինելու վճռականությունը: Ապա ԼՂՀ արտգործնախարար Գ. Պետրոսյանը ձևակերպեց ԼՂՀ իշխանությունների մոտեցումը գաղտնազերծված մադրիդյան սկզբունքների, ինչպես նաև բանակցությունների ձևաչափի վերաբերյալ.«Մենք չենք մասնակցել հիշյալ փաստաթղթի քննարկմանը և որևէ պատասխանատվություն չենք կրում դրա նկատմամբ: Լեռնային Ղարաբաղի իշխանությունները բազմիցս հայտարարել են, որ առանց ԼՂՀ կամքի և համաձայնության՝ ցանկացած որոշում անհիմն է»: Հուլիսի 15-ին հրապարակվեց ԼՂՀ Արտաքին գործերի նախարարության հայտարարությունը բանակցային գործընթացի վերաբերյալ.«**Բանակցություններում իրական առաջընթացի հնարավոր է հասնել միայն բանակցային գործընթացի բոլոր փուլերին ղարաբաղյան կողմի լիարժեք մասնակցությամբ»:** Նույն օրը հրապարակվել է նաև ԼՂՀ կուսակցությունների հայտարարությունը՝ նույնատիպ շեշտադրումներով:

Ակնհայտ է, որ ԼՂՀ թե իշխանությունները, թե քաղաքական ուժերը խիստ կոռեկտ, բայց վճռականորեն պնդում են, որ իրենք այլևս չեն ցանկանում, որ որևէ մեկն իրենց ներկայացնի բանակցությունների ընթացքում և միայն իրենց անմիջական մասնակցությամբ է հնարավոր իրական առաջընթաց: Այս իրավիճակում Հայաստանի Հանրապետության իշխանությունները պարտադրված են հայտարարելու, որ բանակցություններում ԼՂՀ շահերը այլևս պետք է ներկայացնեն ոչ թե իրենք, այլ ԼՂՀ ընտրովի մարմինները: Դա կլինի ոչ միայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և ինքնորոշման իրավունքի նկատմամբ հարգանքի տուրք, այլև արժանապատիվ քայլ Հայաստանի իշխանություն-

ների համար: Առավել ևս, որ Մինսկի խմբի համանախագահ երկրների նախագահները իրենց հայտարարության մեջ արձանագրել են ինքնորոշման իրավունքը՝ որպես հակամարտության կարգավորման սկզբունք, հետևաբար ոչ մի իրավական ու բարոյական հիմք չեն ունենա այդ քայլը շահարկելու համար: Ավելին, դրան ընդդիմանալու դեպքում համանախագահ երկրները ցույց կտան, որ միջազգային իրավունքի նորմերն իրենց համար պարզապես աճպարարության գործիքներ են, իսկ ինքնորոշման իրավունքի մասին իրենց հայտարարությունները՝ սոսկ ծուղակ հայկական կողմերի համար:

ԼՂՀ իշխանությունները արձագանքը հուլիսի 10–ի հայտարարությանը պարզապես հիանալի հնարավորություն են ստեղծել ՀՀ իշխանությունների համար Մինսկի խմբի համանախագահ երկրների նախագահների հայտարարությունն արդյունավետորեն օգտագործելու և իրավիճակը շտկելու համար:

Հայաստանի Հանրապետության արձագանքը

Ըստ ամենայնի, պաշտոնական Երևանի համար սկզբունքների հրապարակումն անակնկալ էր: Ամենայն հավանականությամբ հենց դա էր պատճառը, որ արտգործնախարարության առաջին արձագանքը հայտարարությանը բացասական էր՝ Ստեփանակերտում գտնվող փոխարտգործնարարն այն որակեց որպես ադրբեջանական քարոզչության հետևանք: Հայաստանի իշխանությունների համար հայտարարության անակնկալ լինելու անուղղակի վկայություն է Միացյալ Նահանգների Պետքարտուղարի առաջին տեղակալ Ջ. Սթայնբերգի այցը Հայաստան հուլիսի 11-ին: Հատկանշական է, որ դա վերջին տարիների ընթացքում Պետքարտուղարության ամենաբարձրաստիճան պաշտոնյայի այցն է Երևան: Այցի ընթացքում արտգործնախարար Նալբանդյանը ողջունեց հայտարարությունն՝ առանց սկզբունքների, հայաստանյան

կողմի դիրքորոշումների և բանակցությունների ընթացքի մանրամասն մեկնաբանության, ինչը նման իրավիճակում պարզապես պարտադիր էր: Ըստ CNN-Turk-ի, հայտարարությունը և սկզբունքները միանշանակ դրական է գնահատել նաև պաշտոնական Անկարան, ընդ որում, շատ նման ձևակերպումներով, մինչդեռ Բաքվի արձագանքը շատ ավելի զուսպ էր:

Հայաստանյան փորձագետների ու քաղաքական ուժերի մեկնաբանությունները տարաբնույթ էին, սակայն դրանք հաստատեցին նախորդ մի քանի հրապարակումներում արտահայտված այն մտավախությունները, որ հայաստանյան քաղաքական միտքն այնքան տկար է, որ անգամ չափազանց կարևոր փաստաթղթերի քննարկումների ժամանակ, չնչին բացառություններով, ոչ միայն չի անդրադառնում փաստաթղթերի խորքային նշանակությանն ու մանրամասներին, այլև դուրս չի գալիս մակերեսայնության ու շահարկումների հարթությունից: Նման մոտեցումների դրսևորումն անգամ երկրի համար կենսական նշանակություն ունեցող հարցերում հղի է աղետալի հետևանքներով, քանի որ արձանագրում է միայն հատվածական շահերի առկայություն: Երբ ճակատագրական նշանակության հարցերի քննարկման ժամանակ ոչ միայն քաղաքական ուժերն, այլև մամուլն ու փորձագետներն են բաժանվում իշխանական ու ընդդիմադիր բանակների՝ որդեգրելով ծայրահեղ իրարամերժ դիրքորոշումներ, սպասելիքները չեն կարող հուսադրող լինել: «Իշխանականները» համարում են, որ ամեն ինչ լավ է՝ հաճախ ցանկալին ներկայացնելով իրականության փոխարեն, նրանց հակառակորդները՝ որ ամեն ինչ արդեն կորած է և միակ անելիքը արտգործնախարարի կամ նախագահի պաշտոնանկությունն է: Բանավեճի առարկան դառնում է սոսկ պատրվակ իշխանության համար պայքարում միմյանց ոչնչացնելու համար, որի ընթացքում անկախ և անաչառ փորձագիտական գնահատականները պահանջված չեն, քանի որ նպատակը հիմնախնդրի լուծման համար ելքերի ու լուծումների որոնումը չէ:

Ամփոփում

Հուլիսի 10–ի հայտարարությունը՝ մադրիդյան սկզբունքների պաշտոնական հրապարակումը, կարևոր փուլ է սկսում Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում: Այն ոչ միայն սրբագրում է համանախագահների և բանակցությունների մասնակիցների բազմաթիվ հայտարարություններ, այլև նոր հարցադրումների ու քայլերի բացառիկ հնարավորություն է ստեղծում, ինչը պահանջում է կենտրոնանալ ոչ թե մինչ այժմ թույլ տրված սխալների, այլ իրավիճակի և հետագա անելիքների վրա: Թեև համանախագահներն արձանագրել են, որ ներկայացված հիմնարար սկզբունքների հիմքում Հելսինկյան եզրափակիչ ակտի սկզբունքներն են, սակայն խուսափել են կոնկրետացնել, թե որ սկզբունքը հակամարտությանն առնչվող որ խնդրի լուծման հիմք պետք է լինի: Արդյունքում խեղվել է այդ սկզբունքների բովանդակությունը և կարգավորման հիմնական խնդիրը՝ ԼՂՀ կարգավիճակի միջազգային ճանաչման հարցը արհեստականորեն դարձել է գործընթացի վերջին քայլը: Այդուհանդերձ, **ինքնորոշման իրավունքի արձանագրումը որպես խնդրի կարգավորման հիմնատարր, հնարավորություն է ստեղծում լուրջ սրբագրումներ անելու ոչ միայն գործընթացում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը վերադարձնելով բանակցությունների լիարժեք կողմի կարգավիճակը, այլև հիմնարար սկզբունքներում՝ դրանք համապատասխանեցնելով միջազգային իրավունքի նորմերին ու ԵԱՀԿ հիմնարար սկզբունքներին:**

Իրավիճակը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քայլերը միանգամայն բարենպաստ են ստեղծված եզակի հնարավորությունը օգտագործելու և այդ խնդիրները լուծելու համար: Դրա համար Հայաստանի իշխանություններին անհրաժեշտ է երկու բան՝ միջազգային իրավունքի լավագույն իմացություն և կամք՝ անձնական ու խմբակային հավակնություններից վեր կանգնելու կարողություն: Արդյո՞ք Հայաստանի Հանրապետության իշխանություններն այդ կամքն ու հասունությունը կդրսևորեն: Դա հավասարազոր կլինի հրաշքի: Ինչպես ցանկացած հրաշքի, այնպես էլ այս դեպքում հավանականությունը շատ փոքր է:

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՄԻԱՅՆ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ[17]

- ՄԱԿ-ի կանոնադրությունը, մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը անվերապահորեն սահմանում են ազգերի ինքնորոշման իրավունքը, իսկ ի՞նչ կերպ է միջազգային փաստաթղթերում ներկայացված տարածքային ամբողջականության սկզբունքը, որն այսօր այդչափ կարևորվում է ԼՂՀ-ի հակամարտության բանակցային գործընթացում:

-90-ականների սկզբից Հայաստանում ձևավորվեց մի կարծրատիպ, թե տարածքային ամբողջականության սկզբունքը գերակայություն ունի ինքնորոշման իրավունքի սկզբունքի նկատմամբ: Այս մոտեցման անցանկալի հետևանքն եղավ այն, որ երկար տարիներ Հայաստանում իշխեց մի սխալ մոտեցում, թե հայկական կողմերը չպետք է խոսեն ինքնորոշման իրավունքի մասին, որովհետև Ադրբեջանը կարող է դրան հակադրել տարածքային ամբողջականության սկզբունքը և այդ դեպքում, իբրև թե մեր դիրքերը կթուլանան: Մինչդեռ ճիշտ հակառակն է: Տարածքային ամբողջականության սկզբունքը պետք է դիտարկել երկու կազմակերպությունների հիմնարար փաստաթղթերի՝ ՄԱԿ-ի կանոնադրության և ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտի շրջանակներում, իսկ երկուսում

17 Հարցազրույց «Հայաստանի զրուցակից» շաբաթաթերթին, No 20(91), 29 մայիսի, 2009թ

էլ ձևակերպումը հետևյալն է՝ ՄԱԿ-ի և ԵԱՀԿ անդամ երկրները հարգում են միմյանց տարածքային ամբողջականությունը: Ակնհայտ է, որ այս նորմը չի կարող կիրառվել ինքնորոշման իրավունքի իրացման դեպքերում, ավելին՝ չի կարող հակադրվել ինքնորոշման իրավունքին, որովհետև այդ դեպքում գործ ունենք ՄԱԿ անդամ երկրի և դեռևս չճանաչված պետության, այլ ոչ թե ՄԱԿ անդամ երկու պետությունների միջև հարաբերությունների կարգավորմանը: Ցավոք, Ադրբեջանն այս տարրական ճշմարտությունը վաղուց է հասկացել, մինչդեռ Հայաստանում դեռևս տիրապետող է 90-ականների սկզբի մոլորությունը: Ադրբեջանը հիանալի գիտի իր աքիլլեսյան գարշապարը, ահա թե ինչու տարիներ շարունակ ջանք չի խնայում հակամարտությունը Հայաստանի ու Ադրբեջանի միջև որպես տարածքային վեճ ներկայացնելու ...

- ... և Հայաստանին, այսպես կոչված, «օկուպանտ» որակելու համար:

- Այո, և եթե Հայաստանի իշխանությունները լրջորեն չվերանայեն իրենց ռազմավարությունն ու մարտավարությունը, իրենց հայտարարություններն ու քայլերը չհամապատասխանեցնեն միջազգային իրավունքի նորմերին, հայկական կողմերի դիրքերը դառնալու են ավելի ու ավելի խոցելի: Բերեմ մեկ մասնավոր օրինակ: ՀՀ իշխանությունները հայտարարում են, որ ԼՂՀ-ի դեպքում առանցքային խնդիրը ինքնորոշման իրավունքի կիրառումն է: Միանգամայն ճիշտ մոտեցում է: Բայց երբ դրան զուգահեռ ստորագրում են Մոսկովյան հռչակագիրը, արձանագրելով, որ խնդիրը պետք է կարգավորվի Հայաստանի և Ադրբեջանի նախագահների բանակցություններով ՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների աջակցությամբ, աննախադեպ ծանր հարված են հասցնում ինքնորոշման իրավունքի կիրառմանը: Ինքնորոշման իրավունքը պատկանում է ԼՂՀ ժողովրդին, և որևէ մեկը, այդ թվում և Հայաստանը, չի կարող դրան միջամտել և չի կարող փոխարինել ԼՂՀ ներկայացուցիչներին: 2008-ի նախագահական ընտրությունները լավ հնարավորություն էին կարգավորման գործընթաց վերադարձնելու միջազգային

հանրության կողմից ի սկզբանե հակամարտության կողմ ճանաչված Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչներին, բայց ցավոք այն չօգտագործվեց: Ցավոք, նաև այդ պատճառով այսօր միջազգային իրավունքի սկզբունքները Մինսկի խմբի համանախագահների ձեռքում դարձել են սոսկ աճպարարության գործիք: Մեծ ջանքերի գնով Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում ինքնորոշման իրավունքի կիրառման անհրաժեշտության մասին 2005-ից սկսեցին խոսել նաև համանախագահները: Կարգավորման գործընթացում սա սկզբունքային շրջադարձ էր, բայց այսօր սոսկ դրա արձանագրումը ոչ միայն բավարար չէ, այլև տարատեսակ սպեկուլյացիաների հնարավորություն է ստեղծում: ԼՂՀ ուղիղ մասնակցությունը կարգավորման գործընթացին ապահովելուց զատ Հայաստանի իշխանությունների երկրորդ կանորագույն խնդիրը այդ գործընթացը միջազգային իրավունքի հարթություն տեղափոխելն է, ինչի արդյունքում թե հակամարտության կողմերը, թե համանախագահները պետք է խոսեն նույն «լեզվով»: Մասնավորապես, համանախագահները և հակամարտության կողմերը պետք է հստակ ձևակերպեն, թե տարածքային ամբողջականության, ինքնորոշման իրավունքի և ուժի չկիրառման սկզբունքների կիրառում ասելով ի՞նչ են հասկանում Հայաստանն ու Ադրբեջանը: Հակառակ դեպքում ստեղծված անորոշությունը գործընթացը վերածում է պահմտոցի: Շատ կարևոր է հստակեցնել, թե որ սկզբունքը ինչ ենթախնդրի լուծման դեպքում է կիրառելի: Այսպես, տարածքային ամբողջականության սկզբունքը կարող է կիրառվել Հայաստան-Ադրբեջան հարաբերություններում, որովհետև հակամարտության ընթացքում երկու երկրների միջև խնդիրներ են առաջացել: Օրինակ, Արծվաշենի հարցը. այս տարածքը լինելով Հայաստանի մի մասը, այսօր գտնվում Ադրբեջանի վերահսկողության տակ: Ինչ վերաբերում է ԼՂՀ-Ադրբեջան հարաբերություններին, ապա այն պետք է կարգավորվի միմիայն ինքնորոշման սկզբունքի հիման վրա: Երբեմն ասվում է, թե հիմնարար փաստաթղթերում ինքնորոշման սկզբունքի ձևակերպումը ընդհանրական ձևով է տրված: Մինչ-

դեռ ամեն ինչ շատ հստակ է: Վիեննայի հռչակագիրը ինքնորոշման իրավունքի սկզբունքը հռչակում է որպես անվերապահ ու բարձրագույն իրավական ուժ ունեցող նորմ: Եվ այդ իրավունքի կիրառումը որևէ կերպ սահմանափակել, դրան այլ բան հակադրել՝ հնարավոր չէ: Երկրորդ, ՄԱԿ-ը ունի միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագիր, ուր հստակ սահմանված է, որ ինքնորոշման իրավունքը կարող է կիրառվել երեք ձևով. երբ՝ տվյալ տարածքն անջատվում և միանում է որևէ այլ երկրի (ԼՂՀ-ի դեպքում՝ Հայաստանին), 2-րդ՝ անջատվում է և հռչակում անկախ պետականություն, և 3-րդ՝ ընտրում է այլ քաղաքական կարգավիճակ: Ընդ որում, այս երեք տարբերակներից որևէ մեկի ընտրությունը միայն ինքնորոշվող ժողովուրդինն է, առանց որևէ կողմի միջամտության:

-Իսկ Ադրբեջանն այսօր համանախագահների վզին է փաթաթել ԼՂՀ-ի ինքնորոշման սեփական տարբերակը, թե Ղարաբաղն իր ինքնորոշման իրավունքը կարող է կիրառել ինքնավարության ձևով՝ Ադրբեջանի կազմում:

- Ցավոք, իրավիճակն արդեն ավելի վատ է: Վերջին ամիսներին նույն շեշտադրումներով սկսել են խոսել նաև համանախագահները, և Ալիևի այդ հայտարարությունը նույնիսկ ձեռքբերում համարեցին: Բանակցություններում անորոշ է մնում նաև ԼՂՀ-ի կողմից ինքնորոշման իրավունքի իրացման՝ հանրաքվեի իրականացման հարցը: Ընդ որում, հայկական կողմերը այդ հարցի վերաբերյալ քննարկումները պետք է սկսեն 1991-ին անցկացված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հանրաքվեից: Եթե համանախագահների համար հանրաքվեի անցկացման վերաբերյալ հայտարարությունները աճպարարություն չեն, ապա նրանք պետք է պարզ և հիմնավոր պատասխան տան հետևյալ հարցադրմանը. միջազգային և խորհրդային իրավական բոլոր նորմերին համապատասխան անցկացված հանրաքվեն ինչո՞ւ այսօր չպետք է հաշվի առնվի: Հայտարարությունները, թե այն ժամանակ Լեռնային Ղարաբաղից այնտեղ բնակվող ադրբեջանացիները հեռացել

էին, որևէ հիմք չունեն: Հանրաքվեի արդյունքները վկայում են, որ կային, ընդ որում, նրանց մի մասը Բաքվի կոչով չմասնակցեց հանրաքվեին: Այնպես որ 1991-ի հանրաքվեն մերժելու և նոր հանարքվե անցկացնելու համար լուրջ հիմքեր են անհրաժեշտ: Ի դեպ, կա ևս մեկ բացառիկ նշանակություն ունեցող խնդիր: Դա հակամարտության ծագման, ընթացքի և առանցքային իրադարձությունների վերաբերյալ ճիշտ տեղեկությունների ապահովումն է խնդրով հետաքրքրվողների համար, ադրբեջանական աղավաղումների ու ենթգափոխումների բացահայտումն ու դրա դեմ պայքարը: Այսօր շատերը մոռացել են, թե ինչպե՞ս ծագեց հակամարտությունը, ի՞նչ պատմություն ուներ, ո՞վ՝ ո՞ւմ դեմ կազմակերպեց ռազմական ագրեսիա, ո՞վ ունի փախստականներ, ի՞նչ տեղի ունեցավ Սումգայիթում, Բաքվում, ի՞նչ կատարվեց Շահումյանում. . խնդիրները բազմաթիվ են: Ցավոք, Ադրբեջանին հաջողվում է աստիճանաբար պատկերը գլխիվայր շուռ տալ, և դա խիստ վտանգավոր է, չէ՞ որ հակամարտության բաղադրիչները կարևոր նշանակություն ունեն, երբ որոշվում է թե այս կամ այն հակամարտությունը պետք է կարգավորվի ինքնորոշման իրավունքի կիրառմամբ, թե ոչ:

- Փաստորեն, հիմնարար փաստաթղթերում, եթե անգամ խոսվում էլ է տարածքային ամբողջականության մասին, ապա այն ոչ մի առնչություն չունի մի որևէ ժողովրդի կողմից իր ինքնորոշման իրավունքի կենսագործման հետ: Մինչդեռ ԼՂՀ կարգավորման գործընթացում համանախագահներն ակնհայտորեն առավելությունը տալիս են տարածքային ամբողջականությանը. սա միջազգային իրավունքի նորմերի խախտում չէ՞:

-Ինչ վերաբերում է համանախագահներին, ապա թեև նրանք փորձում են անորոշ ձևակերպումներով ու ժամանակ առ ժամանակ հակասական հայտարարություններով քողարկել իրենց հետապնդած նպատակները, սակայն չպետք է մոռանալ, որ նրանք ներկայացնում են կոնկրետ երկրներ և հաճախ հենց այդ երկրների շահերն են հետապնդում: Քաղաքական շահերը նման խնդիրների լուծման ժամանակ հա-

ճախ փորձ է արվում վեր դնել միջազգային նորմերից: Տվյալ դեպքում Հայաստանն ու ԼՂՀ-ն են շահագրգիռ, որ գործընթացը գտնվի միջազգային իրավունքի շրջանակներում: Հետևաբար հենց հայկական կողմերը պետք է ջանքեր գործադրեն դա ապահովելու համար: Սակայն այդ ջանքերը կարող են լինել արդյունավետ միայն այն դեպքում, եթե հայկական կողմերը լավատեղյակ են միջազգային իրավունքի նորմերին և կարող են արդյունավետորեն պաշտպանել այդ դիրքերը: Հակառակ դեպքում միշտ էլ կգտնվեն կողմեր, որոնք առաջ կմղեն իրենց շահերը:

- Իսկ առհասարակ, համանախագահները լիազորվա՞ծ են դատողություններ անել տարածքների պատկանելության կամ սահմանների վերաբերյալ: Այդ առումով նրանք չե՞ն գերազանցում իրենց վերապահված լիազորությունները:

-Համանախագահների լիազորությունների խնդիրը ևս խիստ կարևոր է, սակայն, ցավոք, մեր կողմից աչքաթող է արվում: ԵԱՀԿ-ն համանախագահների համար սահմանել է գործունեության և լիազորությունների հստակ շրջանակ: Բայց Հայաստանը երբևէ չի փորձել նրանց ուշադրությունը հրավիրել իրենց իրական լիազորությունների վրա: Համանախագահները պետք է հասկանան, որ այդ շրջանակից դուրս որևէ քայլ անելու իրավունք չունեն: Ժամանակ առ ժամանակ հնչող երկչոտ դժգոհությունների փոխարեն անհրաժեշտ է համանախագահներից պահանջել, որ նրանք գործեն խստորեն իրենց լիազորությունները սահմանող փաստաթղթի շրջանակներում:

-Այսօր հաճախ է խոսվում փոխզիջումների և այսպես կոչված «գրավյալ տարածքների մասին»:

Եթե խոսք է գնում փոխզիջումների մասին, ապա ԼՂՀ-ն արդեն իսկ գնացել է մի շարք զիջումների. նախ համաձայնել է խոսել նոր հանրաքվեի հնարավորության մասին, երկրորդ, համաձայնել է, որ իր շահերը ժամանակավորապես ներկայացնի Հայաստանի Հանրապետության նախագահը, երրորդ՝ ինքնորոշման իրավունքի իրացման համար ընտրել է անկախ պետականության հռչակումը, թեև լիովին իրավունք ուներ

միավորվելու Հայաստանի Հանրապետության հետ: Իսկ ի՞նչ զիջումներ է արել Ադրբեջանը այդ ամենի դիմաց՝առայժմ ոչինչ: Հետևաբար զիջումներ անելու հերթը Ադրբեջանինն է: Ինչ վերաբերում է ԼՂՀ սահմաններին, ապա դրանք պետք է որոշվեն՝ հաշվի առնելով թե Ադրբեջանի ագրեսիայով սկսված պատերազմի հետևանքները, և թե ԼՂՀ լիարժեք անվտանգությունը: Խորհրդային տարիներին գծվել է արհեստական և պաշտպանության համար բոլորովին անբարենպաստ սահման: Որևէ մեկը, այդ թվում համանախագահները կարո՞ղ են երաշխավորել, որ եթե անգամ Ադրբեջանը ինչ-որ ժամանակ անց ճանաչի ԼՂՀ անկախությունը, ապա դրանից հետո նոր ագրեսիա չի ձեռնարկի ԼՂՀ-ի դեմ: Ուրեմն, վերադարձը ԼՂԻՄ-ի սահմաններին անընդունելի է: Ադրբեջանը մեկ անգամ չէ, որ ապացուցել է, որ ցանկացած պահի կարող է հրաժարվել իր խոստումներից: Քանի որ Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը «քաղաքակիրթ» է և հեզ, իրական գրավյալ տարածքների՝ Շահումյանի շրջանի, Մարտունու ու Մարտակերտի շրջանների գրավյալ հատվածները վերադարձնելու խնդրի փոխարեն այսօր օրակարգում է բոլորովին այլ խնդիր: Վերջապես մի բան պետք է հասկանալ. նման պահվածքի գինը սոսկ արարողակարգային ժպիտներն ու ձեռքսեղմումներն են:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՄԻՆՉ 2008Թ. ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ՌՈՒՍ-ՎՐԱՑԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ[18]

Չափազանց կարևոր է, որ այս լսումներին մասնակցում են ոչ միայն խորհրդարանի անդամներ և կուսակցությունների ղեկավարներ, գիտական շրջանակների ներկայացուցիչներ, այլև քաղաքացիական հասարակության բոլոր հատվածները: Կարևոր է նաև, որ մասնակցում են տարբեր երկրների և միջազգային կազմակերպությունների դիվանագիտական ներկայացուցիչներ, քանզի այս խնդիրն ունի բացառիկ նշանակություն ոչ միայն երկկողմ հարաբերությունների, այլև տարածաշրջանային զարգացումների տեսակետից: Եվ ահա այս առումով ես ուզում եմ մեծապես գնահատել այն դերը, որ մեր խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը ունեցավ այս լսումները կազմակերպելու ընթացքում:

Ուզում եմ հիշեցնել, որ նման մի քննարկում մենք ունեցել ենք այս դահլիճում՝ նվիրված Լեռնային Ղարաբաղի խնդրին, և կյանքը ցույց տվեց, որ դա ոչ միայն անհրաժեշտ, այլև չափազանց օգտակար քննարկում էր:

Ավելին, կարծում եմ, որ այսօրվա լսումներով մենք ոչ թե պատասխանելու ենք բոլոր հարցերին կամ վերջակետ ենք դնելու հայ-թուրքական հարաբերությունների խնդրին, այլ ճիշտ հակառակը: Իհարկե մեր

18 ՀՀ Ազգային ժողովի լսումներ հայ-թուրքական հարաբերությունների հարցերով, 19 դեկտեմբերի, 2007 թ

երկրում տարբեր շրջանակներ մշտապես կազմակերպում են բազմաթիվ հանդիպումներ, բազմաթիվ քննարկումներ՝ նվիրված հայ-թուրքական հարաբերություններին, սակայն այս լումները այդ հարթությունում ևս ունեն առանձնահատուկ նշանակություն՝ որպես այս խնդրին նվիրված առաջին խորհրդարանական քննարկում: Սրանով, կարծում եմ, բացվում է լայն քննարկումների մի նոր դուռ և հնարավորություն: Եվ ես հուսով եմ, որ այս երկու օրվա ընթացքում մենք հստակորեն կձևակերպենք այն հարցադրումները և մոտեցումները, որոնք կան այս հարաբերությունների առնչությամբ, որպեսզի հետագայում հնարավոր լինի արդյունավետ աշխատել առկա խնդիրների լուծման ուղղությամբ

Ավելին, խորհրդարանը պատրաստ է հետագայում ևս նման միջոցառումներ կազմակերպել, ինչպես նաև միջոցառումներ, որոնք կբխեն այս լումներից: Խորհրդարանը պատրաստ է նաև միջազգային հարթությունում իր կարևոր դերակատարությունն ունենալ երկու երկրների հարաբերությունների կարգավորման տեսակետից· Այս առումով ես ևս մեկ անգամ ուզում եմ կարևորել այս լումները, և վստահ եմ, որ այն ունենալու է իր շարունակությունը.

Հայ-թուրքական հարաբերությունները, ինչպես ցանկացած քիչ թե շատ բարդ այլ խնդիր, ունի տարբեր շերտեր, տարբեր բաղադրիչներ տնտեսական, քաղաքական, մշակութային, նաև՝ հոգեբանական, սակայն ակնհայտ է, որ ժամանակի ընթացքում թերևս առաջին պլան է մղվել հենց քաղաքական բաղադրիչը, որը, ևս մեկ անգամ ուզում եմ ընդգծել, ունի ոչ միայն երկկողմ հարաբերությունների նշանակություն, այլ նաև տարածաշրջանային: Նկատի ունեմ ոչ միայն մեզ և մեր անմիջական հարևաններին, այլև այն մեծ տարածաշրջանը, որի մեջ գտնվում են Հայաստանը և Թուրքիան: Եվ նման բարդ խնդիրներ քննարկելիս ամենակարևոր հարցը, որ պետք է լուծել, հետևյալն է՝ այդ խնդիրները ո՞ր արժեքային համակարգում են քննարկվելու և ո՞ր գլոբալ երևույթների կամ գործընթացների ենթատեքստում:

Կարծում եմ սա այն բանալին է, որը կարող է մեզ տանել դեպի հա-

ռաբերությունների կարգավորում, որովհետև, երբ նման հստակեցում չկա և «խաղի կանոնների» տեսակետից մոտեցումները պարզ չեն, տարատեսակ խնդիրներ են ասպարեզ գալիս և դրանք, մեկը մյուսի վրա բարդվելով, հանգեցնում են բավական դժվարին մի կացության. թվում է, թե կողմերից յուրաքանչյուրն ունի հարցադրումներ, որոնք ինքնին չափազանց կարևոր են ու էական, հաճախ՝ մյուս կողմի մոտեցումների նկատմամբ հակոտնյա, ու այդ լուրջ խոչընդոտների պարագայում խնդիրների լուծումը գործնականում դառնում է անհնար: Այս պարագայում, կարծում եմ, մենք ունենք հիանալի հնարավորություն այդ արժեքային համակարգը ձևակերպելու և այն հարթությունը ձևակերպելու, որտեղ հայ-թուրքական հարաբերություններին առնչվող խնդիրները կարող են և պետք է լուծվեն, և դա կլինի իրապես այն հնարավորությունը, որը լիարժեք և անկեղծ օգտագործելու դեպքում կօգնի կարգավորելու հարաբերությունները:

Մեր երկիրը բազմիցս հայտարարել է, որ եվրոպական ինտեգրացիան իր համար արտաքին հարաբերություններում գերակա ուղղություն է: Մենք և Թուրքիան Եվրոպայի խորհրդի անդամ երկրներ ենք: Թուրքիան նպատակ ունի անդամակցելու Եվրամիությանը: Կարծում եմ, ակնհայտ է, որ այն հարթությունը, որը երկուստեք ընդունելի է և որտեղ մենք կարող ենք քննարկել առկա խնդիրները, եվրոպական ինտեգրացիայի հարթությունն է, իսկ այն սկզբունքներն ու արժեքները, որոնք պետք է օգտագործենք առկա խնդիրների լուծման համար, դժվարին հանգույցները քանդելու համար, եվրոպական արժեքներն ու սկզբունքներն են:

Ահա սա է այն կարևոր հանգամանքներից մեկը, որը հաշվի առնելով մենք մշտապես, տարիներ շարունակ հայտարարել ենք, որ Թուրքիայի ձգտումը դեպի Եվրամիություն մեզ համար ցանկալի է, և կուզենանք, որ Թուրքիան դառնա Եվրամիության անդամ՝ հարգելով այդ արժեքներն ու սկզբունքները: Կարծում եմ տրամաբանությունը շատ պարզ է. ցանկացած երկիր կուզենա, որ իր հարևանը գործի հստակ արժեքային համա-

կարգի ու սկզբունքների շրջանակներում, լինի կանխատեսելի, և հարաբերությունները լինեն անվտանգ ու ապահով:

Շատ կարևոր է նաև մեկ այլ հանգամանք: Ցանկալի է, որ միջազգային հանրությունը, եվրոպական կառույցները պարզ ու հստակ դիրքորոշում ունենան՝ մեր հարաբերությունների հետ կապված: Ոչ թե մեր հարաբերություններին միջամտելու կամ մեր փոխարեն խնդիրները լուծելու առումով, բացարձակապես, բայց պարզ ու հստակ դիրքորոշում արտահայտելու՝ այդ հայտնի սկզբունքների ու արժեքների համակարգում: Դա կօգնի, որ մեզանից յուրաքանչյուրն իրեն հաշիվ տա. մենք գործո՞ւմ ենք այն արժեքային համակարգում, որն ընդունել ենք՝ անդամակցելով Եվրախորհրդին, հայտարարելով եվրոպական ինտեգրացիան գերակա ուղղություն, թե՞ ոչ: Ահա այստեղ է, որ հստակվելու է յուրաքանչյուրի ցանկությունների անկեղծությունը:

Հանրահայտ է, որ մեր հարևաններն, ի տարբերություն մեր երկրի, նախապայմաններ են թելադրում հարաբերությունների բարելավման համար, սակայն մի՞թե հարևան երկիրը շրջափակման ենթարկելը, նախապայմաններ առաջադրելը, անգամ դեռևս չանդրադառնալով դրանց բովանդակությանը, տեղավորվում է եվրոպական մոտեցումների, եվրոպական ինտեգրացիայի կամ հայտնի սկզբունքների ու արժեքների շրջանակներում:

Ուզում եմ հիշեցնել մեկ օրինակ, որը, կարծում եմ, չափազանց խոսուն է: Եվրամիության հիմքերը դրվեցին 1949 թվականին: Մի դժվարին ժամանակահատվածում, երբ նոր էր ավարտվել Երկրորդ համաշխարհային պատերազմը, սակայն բոլորը կարծում էին, որ անխուսափելիորեն սկսվելու է ֆրանս-գերմանական մի նոր պատերազմ: Առկա խնդիրների պատճառը հանրահայտ էր՝ տարածքային վեճեր· Եվ այդ ժամանակ հրաշք տեղի ունեցավ: Անհաշտ թշնամիները դրեցին եվրոպական ինտեգրացիայի և ապագա Եվրամիության հիմքերը՝ առկա խնդիրները մի կողմ թողնելով, դրանց լուծումը հետաձգելով ապագային, որովհետև չափազանց կարևորեցին տարածաշրջանային զարգացումը, Եվրոպա-

յի ապագան՝ շատ լավ հասկանալով տարածաշրջանի առջև ծառացած մարտահրավերները և հավաստելով իրենց նվիրումը եվրոպական արժեքներին ու սկզբունքներին: Եվ, իհարկե, հասկանալով, որ ազգային խնդիրների լուծման ու վեճերի կարգավորման ամենակարճ ճանապարհը հենց դա է: Սա չափազանց կարևոր օրինակ է ու հաստատումն այն բանի, որ բարդ խնդիրների լուծման առավել կարևոր նախադրյալը քննարկումների ճիշտ հարթության, ճիշտ արժեքների ու սկզբունքների ընտրությունն է:

Երբ Հայաստանը հայտարարում է, որ պատրաստ է առանց նախապայմանների հաստատել դիվանագիտական հարաբերություններ, խորացնել համագործակցությունը, ապա դա անում է ոչ այն պատճառով, որ որևէ խնդիր չի տեսնում: Ո՛չ, բնավ: Այդ խնդիրների մասին խոսվել է, այսօր էլ այստեղ խոսվելու է, և շարունակվելու է խոսվել, բայց մենք հենց այդ խնդիրների լուծման տեսակետից ենք կարևորում այն հարթությունը, որտեղ պիտի հարաբերությունները կարգավորենք. Մենք վստահ ենք, որ, ինչքան էլ դժվար լինի, միայն առանց նախապայմանների է հնարավոր հաստատել երկխոսություն, հաստատել հարաբերություններ, և վստահություն՝ հետագայում առկա խնդիրներին անդրադառնալու և լուծումներ գտնելու անհրաժեշտ հիմքեր ստեղծելու նպատակով: Սա է միակ ճանապարհը:

Եթե անդրադառնանք Թուրքիայի առաջադրած նախապայմաններին, ապա կարծում եմ, ակնհայտ կդառնա, որ դրանք, իսկապես, չեն կարող դառնալ երկու երկրների հարաբերությունների կարգավորման հիմք:

Թուրքիան առաջարկում է մոռանալ Ցեղասպանությունը, բայց անգամ Օսմանյան Թուրքիան այդ երևույթը իր դատարաններում քննեց և մահապատժի դատապարտեց մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների, ովքեր ղեկավարել էին այդ ոճրագործությունը: Դժվար է գտնել որևէ հայ ընտանիք, որը կորուստ ունեցած չլինի: Մի՞թե ակնհայտ չէ, որ եթե Ցեղասպանության հարցը դառնար նախապայման, ապա դրա մասին Հայաստանը պիտի խոսեր: Բայց Հայաստանը դա չի անում: Միա-

ժամանակ մեզ առաջարկվում է, որ օտար երկրներում ապրող մեր հայրենակիցներից պահանջենք չխոսել Ցեղասպանության մասին: Բայց նրանց ճնշող մեծամասնությունն օտար երկրներում է հայտնվել հենց այդ ողբերգական իրադարձությունների հետևանքով ու այդ ամենը դատապարտում է ոչ միայն որպես մերժելի երևույթ, այլ որովհետև դա ապրել է որպես անձնական ողբերգություն:

Հայաստանը չունի օտար երկրներում ապրող մեր հայրենակիցներին լռեցնելու որևէ բարոյական, իրավական կամ մեկ այլ իրավունք: Ավելին, մեր բազմաթիվ հայրենակիցներ տարբեր, այդ թվում և Եվրամիության անդամ երկրների քաղաքացիներ են և նույնքան իրավունք ունեն տարբեր խնդիրների քննարկմանը մասնակցելու, որքան այդ երկրների մյուս քաղաքացիները, անկախ այն հանգամանքից, թե ինչ ծագում ունեն իրենք, առավել ևս, որ մեր հայրենակիցները այդ երկրների օրինապաշտ քաղաքացիներ են: Այսինքն՝ այստեղ ևս եվրոպական արժեքների հարթությունում որևէ նախապայման դնելու հիմք չկա:

Մյուս նախապայմանը վերաբերում է Լեռնային Ղարաբաղի խնդրին: Մի՞թե որևէ մեկը կարող է լրջորեն պնդել, որ հակամարտությունների կարգավորման ճանապարհը այլ բարդ խնդրի հավելումն է դրան: Առավել ևս, երբ այդ խնդիրն առնչվում է մի երրորդ երկրի: Երեկ աչքովս ընկավ մի ադրբեջանցի վերլուծաբանի կարծիք, որ Թուրքիայի և Հայաստանի հարաբերությունների կարգավորումը կօգնի Ղարաբաղի խնդրի կարգավորմանը: Անկեղծորեն պետք է ասեմ, որ ինձ համար շատ անսպասելի էր դա: Բայց պետք է հուսալ, որ եթե շատ ավելի քիչ քաղաքական ավանդույթներ ունեցող Ադրբեջանում արդեն դա սկսել են հասկանալ, ապա Թուրքիայում ևս որոշ ժամանակ անց դա կգիտակցվի:

Մենք հրավիրել էինք և մեր գործընկերներին, և Թուրքիայի գիտական շրջանակների ներկայացուցիչների՝ մասնակցելու այս լսումներին: Ցավոք, գեթ մեկն այսօր այս դահլիճում չէ: Իսկ ինչպե՞ս պետք է գտնել որևէ խնդրի լուծումը, եթե ոչ երկխոսության միջոցով:

Ամփոփեմ:

Իսկապես, մենք տեսնում ենք խնդրի լուծումը եվրոպական ինտեգրացիայի հարթությունում, այդ արժեքների ու սկզբունքների հիման վրա: Սա չափազանց կարևոր է և մեր փոքր տարածաշրջանի համար, և՛ եվրոպական ընտանիքի համար: Եվ այստեղ ակնկալում ենք եվրոպական կառույցների շատ ավելի ակտիվ աջակցությունը՝ մասնավորապես Եվրոպայի խորհրդի, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի: Ի վերջո, մեր երկու երկրներն այդ կառույցի անդամներ են, և շատ կարևոր է, որ ընդհանուր բարի ցանկությունների մասին հայտարարություններից զատ այդ շրջանակում լինեն նաև կոնկրետ քայլեր ու նախաձեռնություններ:

Երկրորդ՝ ուզում եմ ևս մեկ անգամ կրկնել, որ, այո, մեզ համար ցանկալի է, որ մեր հարևանը՝ Թուրքիան լինի Եվրամիության անդամ՝ բավարարելով բոլոր պայմանները, որոնք նման ձգտումներ ունեցող երկրների համար սահմանված են: Վստահ եմ, այդ ժամանակ ավելի հեշտ կլինի բազմաթիվ խնդիրներ լուծել:

Եվ երրորդ՝ տարիներ շարունակ մենք պնդել ենք և շարունակելու ենք պնդել, որ մենք պատրաստ ենք շրջափակումը վերացնելուց հետո առանց որևէ նախապայմանի հարաբերություններ հաստատել, հաստատել երկխոսություն, և դա է լինելու խնդիրների լուծման ճանապարհը:

Մենք ունենք անհրաժեշտ կամք և քաջություն՝ միջպետական խնդիրների լուծումը պատմաբանների վրա չբարդելու համար: Պատմաբաններն ունեն իրենց գործը, ոչ ոք իրենց չի խանգարում դա անել, բայց քաղաքական խնդիրների կարգավորումը քաղաքական ուժերի, քաղաքական գործիչների գործն է, և պետք է այդ կամքն ու կարողությունը դրսևորել:

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԽՆԴՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ. ԻՐԱՎԻՃԱԿԸ, ԱՆԵԼԻՔՆԵՐԸ, ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ [19]

Ակնհայտ է, որ Ղարաբաղյան խնդրի վերաբերյալ լսումներ անցկացնելու գլխավոր նախադրյալը կարող է լինել նոր իրավիճակը, իսկ նպատակը՝ արդի խնդիրների ճշգրտումն ու դրանց համար առավել արդյունավետ լուծումների համատեղ որոնումը: Այդ պարագայում անհրաժեշտ է դառնում յուրաքանչյուր կուսակցության մասնակցությունը նման միջոցառումներին և տեսակետների հստակ ներկայացումը՝ հաշվի առնելով Ղարաբաղյան խնդրի կենսական նշանակությունը մեր երկրի և ժողովրդի համար: Ըստ այդմ, ես կներկայացնեմ Հանրապետական կուսակցության մոտեցումները քննարկվող հարցի վեաբերյալ:

Առաջին հարցը, որ հստակ ու ճշգրիտ պատասխան է պահանջում և որոշիչ նշանակություն ունի քննարկման ընթացքի ու արդյունավետության տեսակետից, հետևյալն է. որո՞նք են դրա դրսևորումները, յուրահատկությունները, մարտահրավերները և որոնք պետք է լինեն մեր արձագանքները:

Մենք կարծում ենք, որ նոր իրավիճակ իսկապես ստեղծվել է և դրա ակներև դրսևորումներն են.

-հարցի հանրայնացումը թե՛ Ադրբեջանում, և թե՛ Հայաստանում,

19 ՀՀ Ազգային ժողովի լսումներ Ղարաբաղյան խնդրի կարգավորման հարցով, 29 մարտի, 2005թ

-հարցի քաղաքական շահարկումները թե Հայաստանում, թե Ադրբեջանում,

-Ադրբեջանի մարտավարության փոփոխությունը միջազգային ասպարեզում,

-տարբեր միջազգային կազմակերպությունների հետաքրքրության կտրուկ մեծացումը Ղարաբաղյան խնդրի նկատմամբ:

Վերջինս ունի երկու բաղադրիչ՝ այն կազմակերպությունները, որոնց Հայաստանն անդամակցել է վերջին տարիներին (Եվրոպայի խորհուրդ, ՆԱՏՕ-ի Խորհրդարանական վեհաժողով և այլն) կամ որոնց հետ կտրուկ ակտիվացել են հարաբերությունները (Եվրամիություն), իսկապես ավելի մեծ հետաքրքրություն են ցուցաբերում, ինչը եթե անգամ ցանկալի չէ, սակայն ակնհայտորեն անխուսափելի է: Ավելին, Եվրախորհրդի և Եվրամիության պարագայում դա անգամ կանխատեսելի էր: Հույսերը՝ ամեն կերպ դրանից խուսափելու վերաբերյալ, կարող են միայն անհիմն լավատեսության հետևանք լինել կամ այդ կազմակերպությունների հետ հարբերությունների վերաբերյալ սխալ պատկերացումների: Եվրոպայի խորհուրդն իր անդամ երկրին առնչվող ցանկացած խնդիր համարում է իր խնդիրը և այն անպայման դառնում է քննարկման առարկա: Հետևաբար շատ ավելի ողջամիտ է ոչ թե խնդրի քննարկմանն տապալման անհեռանկար երազանքը, այլ աշխատանքը հանուն հնարավոր առավել բարենպաստ արդյունքի: Ինչ վերաբերում է Եվրամիությանը, ապա այս կազմակերպության հետաքրքրությունները կմեծանան Հայաստանի անդամակցության վերաբերյալ հարցադրումների լրջության մեծացմանը զուգընթաց: Այս ամենը ոչ միայն ակներևորեն երևում է նմանատիպ խնդիրների (Կոսովո, Կիպրոս և այլն) հետ կապված զարգացումներից, այլև առողջ տրամաբանության միակ հետևությունը կարող է լինել :

Քանի որ վերը նշված չորս գործոններից երկուսը վերաբերում են միջազգային ասպարեզին, հետևաբար դրանց հետ կապված խնդիրները բացահայտելու և մեր արձագանքները քննարկելու տեսակետից

կարևոր է ճշտել Ղարաբաղյան խնդրի միջազգային ընկալման միտումները:

Ղարաբաղյան խնդրի միջազգային ընկալումը անցել է մի քանի փուլ՝ խորհրդային շրջան, պատերազմական շրջան, ետպատերազմյան շրջան և արդի շրջան: Դրանցից յուրաքանչյուրն ունեցել է իր առանձնահատկություններն ու շրջադարձերը: Այդուհանդերձ, ես կանդրադառնամ միայն վերջին շրջանին, որը հարկ է դիտարկել երկակի տրանսֆորմացիայի ենթատեքստում: Մի կողմից փոփոխվում է հակամարտությունների ու դրանց հնարավոր լուծումների ընկալումն ընդհանրապես, մյուս կողմից ՝ կոնկրետ Ղարաբաղյան խնդրի հետ կապված: Առաջինը առանձնանում է նրանով, որ վերջին տարիներին գերակշռող է դառնում հակվածությունը դեպի վիճարկվող տարածքների անկախության ճանաչում: Ընդ որում, դա վերաբերում է ոչ միայն արդեն հանգուցալուծում ստացած մի քանի հակամարտությունների (Էրիթրեա, Արևելյան Թիմոր), որոնք բավականին հեռու են Եվրոպայից, այլև եվրոպական հակամարտությունների հետ կապված իրադարձությունների զարգացմանը: Մասնավորապես, խոսքը վերաբերում է Կոսովոյին: Իհարկե, չպետք է աչքաթող անել այն հանգամանքը, որ նախկին Խորհրդային Միության տարածքում ծագած հակամարտությունների առումով, բացառությամբ Ղարաբաղի, միտումները հակառակն են: Այս տեսակետից, թեև Ղարաբաղյան խնդիրն ունի նաև տարածաշրջանային նշանակություն, սակայն հետագա զարգացումների առումով չափազանց կարևոր է այն հանգամանքը, որ մշտապես պետք է հստակորեն տարանջատել Ղարաբաղյան խնդիրը նախկին ԽՍՀՄ տարածքի այլ հակամարտություններից՝ դրանք բնութագրող բոլոր գործոններով: Ավելին, եթե Խորհրդային Միության շրջանում այդ չճանաչված հանրապետությունների հետ միասնականության դրսևորումները ինչ որ դրական բան կարող էին տալ, ապա այսօր իրավիճակը բոլորովին այլ է: Այդ հակամարտությունների տարածքները ուղղակիորեն հանդիսանում են Ռուսաստանի հետաքրքրությունների գոտիներ և նաև այդ տեսակետից դրանց ընկալումը բոլո-

րովին այլ երանգներ ունի: Մյուս կողմից, այդ տարածքների ճակատագիրը շատ ավելի քիչ արժեք ունի, քան Ռուսաստանի շահերը, որոնք տարբեր իրավիճակներում կարող են նաև աննպաստ զարգացումներ թելադրել :

Ինչ վերաբերում է բուն Ղարաբաղյան խնդրի միջազգային ընկալման առնչությամբ զարգացումներին, ապա այստեղ նկատելի է երկու հակոտնյա հոսանքների միջև լարվածության մեծացում: Անշուշտ վերջին շրջանում զգալի է Ադրբեջանի մարտավարության փոփոխությունը և սա ճիշտ չի լինի սոսկ արտաքին գերատեսչության ղեկավարի փոփոխությունով բացատրել: Այդ երկիրը փորձում է ակտիվորեն սադրել խնդրի քննարկումներ տարբեր միջազգային ատյաններում: Համոզված եմ, ադրբեջանցիներն այնքան միամիտ չեն, որ կարծեն, թե դրանով այսօր կարող են լուծել խնդիրն իրենց օգտին: Նպատակն այլ է և ունի երկու թիրախ.

-առաջին. այդ ակտիվությանը գումարել իրենց հատուկ աղավաղումների և նենգափոխումների արդեն ավանդույթ դարձած ձեռագիրը և Ղարաբաղյան խնդիրն օգտագործել ներքին հարցերի լուծման համար: Իլհամ Ալիևը, նախագահի պաշտոնը ժառանգելով չէր կարող ժառանգել հոր ազդեցությունը և մշտապես կանգնած է ներքին վերադասավորումների և վերաբաժանումների բարդ խնդիրը լուծելու մարտահրավերի առաջ: Միջկլանային պայքարը շարունակվում է թե՛ կառավարությունում, թե բանակում: Որոշ նախարարներ և գեներալներ պաշտոնանկ են արվել, սակայն խնդիրը ոչ միայն դեռ լուծված չէ, այլև լարվածությունը չի իջնում: Նույն հարթությունում պետք է դիտարկել նաև Ադրբեջանի ռազմատենչ հայտարարությունները:

-Ադրբեջանի երկրորդ թիրախը միջազգային ատյաններում հայկական և ադրբեջանական կողմերի համար համապատասխանաբար ագրեսորի ու զոհի կերպարների ձևավորումն է՝ օգտագործելով այդ ատյաններում Թուրքիայի և մի շարք այլ երկրների փորձը, կապերն ու հնարավորությունները: Ագրեսոր-զոհ երկվության ձևավորման նպատա-

կաղրումով է պայմանավորված Ադրբեջանի սևեռումը ԼՂՀ հարակից շրջանների վրա՝ հրադադարից ավելի քան տասը տարի անց, հուսալով, որ ժամանակի ընթացքում իր նախաձեռնած ագրեսիայի հետևանքների վերաբերյալ հուշերը խամրել են միջազգային հանրության հիշողության մեջ: Սա մեզ համար հիմնական մարտահրավերներից մեկն է միջազգային ատյաններում:

Այսուհանդերձ, կարծում եմ միջազգային ասպարեզում սկսել է ամրապնդվել ԼՂՀ անկախության ճանաչման հոսանքը: Դրա ամենավառ ապացույցը, ինչքան էլ որոշ մարդիկ ու խմբեր չեն ուզում կամ չեն կարողանում դա տեսնել, ԵԽԽՎ 1416 բանաձևի երկրորդ կետն է, որտեղ ամրագրված են ԵԽԽՎ սկզբունքները հակամարտության ընդունելի և մերժելի ուղիների վերաբերյալ: Բառացիորեն ասված է հետևյալը. «Վեհաժողովը վերահաստատում է, որ ռեգիոնալ տարածքի անկախությունը և անջատումը որևէ պետության կազմից կարող է տեղի ունենալ միայն օրինական և խաղաղ գործընթացի մջոցով, որը հիմնված է տվյալ տարածքի բնակիչների ժողովրդավարական աջակցության վրա...»: Նույն կետում Վեհաժողովը զգուշացնում է, որ տարածքի միացումը այլ երկրի դատապարտելի քայլ է: Այսպիսով, ըստ էության, վեհաժողովն արձանագրում է, որ ԼՂՀ ընդունելի կարգավիճակ կարող է լինել անկախությունը և ոչ թե վերամիավորումը Հայաստանի Հանրապետության հետ: Կարծում եմ այս փաստաթղթի, հատկապես այս կետի կարևորությունը Հայաստանում դեռևս լիարժեքորեն չի գիտակցվել խնդրի զգայնության և զանազան սպեկուլյացիաների ստեղծած որոշ ֆոնի պատճառով: Համոզված եմ, որ ժամանակն ամեն բան իր տեղը կդնի: Սակայն չեմ կարող չհարցնել. հնարավո՞ր է ցույց տալ Ղարաբաղյան խնդրի վերաբերյալ միջազգային ատյանների կողմից ընդունված մեկ այլ փաստաթուղթ, որում Լեռնային Ղարաբաղի համար անկախությունը որպես կարգավիճակ ընդունելի համարող դրույթ կա: Ցավոք սրտի՝ ոչ: Ավելացնեմ, որ թեև համոզված եմ՝ այստեղ ներկաներից թերևս ոչ ոք չի կասկածում, որ դա այդպես է, սակայն ահռելի աշխատանք կա անելու, ապացուցելու

համար, որ ԼՂՀ-ն ընտրել է հենց այդ, փաստորեն Եվրոպայի խորհրդի համար ընդունելի անկախացման ճանապարհը: Ի դեպ, ցանկանում եմ ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ եվրոպական մամուլում գրեթե միաժամանակ մի քանի հրապարակումներ եղան հանրաքվեի միջոցով խնդրի լուծման տարբերակի վերաբերյալ, ընդ որում ոչ պատահական դեմքերի կողմից: Իհարկե, Եվրոպայի խորհուրդը Ղարաբաղյան խնդրով զբաղվող հիմնական կազմակերպությունը չէ: Անշուշտ այստեղ ԵԱՀԿ-ն իր Մինսկի խմբով ունի բացառիկ դերակատարություն՝ հատկապես խնդրի լուծման տեսակետից, ինչն իհարկե միշտ ընդգծում են մյուս միջազգային կազմակերպությունները: Սակայն ես ցանկանում եմ ուշադրություն հրավիրել 1416 բանաձևի ևս մեկ առանձնահատկության վրա: Այն, որպես լուծումը նախապատրաստող առաջիկա քայլեր, առաջարկում է այնպիսի մոտեցումներ, որոնք բացարձակապես հակոտնյա են Ադրբեջանի մոտեցումներին, որը հետևյալն է: Նախ խնդրի լուծում, իհարկե իրենց համար ցանկալի ելքով, ապա միայն հանդիպումներ, շփումներ, առկա մթնոլորտի բարելավում: Եվրոպայի խորհրդի և համոզված եմ մյուս կազմակերպությունների տեսակետը ճիշտ հակառակն է:

Ընդհանուր առմամբ սա է միջազգային ատյաններում Ղարաբաղյան խնդրի հետ կապված ընկալումների դիլեման և դրա հետ կապված զարգացումների ընթացքը:

Ակնհայտ է, որ Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծումը կամ Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող ցանկացած հարցի լուծում առաջին հերթին կախված է մեր միասնականությունից, մեր կամքից ու բոլոր ուղղություններով գործադրած մեր ջանքերից: Սակայն պարզ է նաև, որ դրանք այնքան ավելի հեշտ կլուծվեն, ինչքան ավելի համահունչ լինեն միջազգային ասպարեզում տեղի ունեցող գործընթացներին: Այդ առումով բացառիկ նշանակություն ունի եվրոպական ինտեգրացիան: Հայաստանը հիանալի հնարավորություն ունի եռանդուն աշխատանքի դեպքում տարեվերջին կամ հաջորդ տարվա սկզբին

ավարտելու Եվրոպայի խորհրդի առջև ստանձնած պարտավորությունների կատարումը, դրանով իսկ լուրջ հայտ ներկայացնելով նաև Եվրամիության հետ ապագա ավելի խորը համագործակցության համար, քան «Նոր հարևաններ» ծրագրի շրջանակում սկսվողն է: Կարծում եմ ակնհայտ է, որ ժողովրդավարության հետագա խորացումը և եվրոինտեգրացիան Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի համար ունեն առանձնահատուկ նշանակություն հետևյալ նկատառումներով.

-այն չափազանց կարևոր նախապայման է հետագա զարգացման համար,

-այն մի ասպարեզ է, որտեղ Հայաստանն ու Ղարաբաղն ունեն զգալի առավելություն Ադրբեջանի նկատմամբ և մեծ պոտենցիալ՝ վերջինից որակապես տարբերվելու համար,

-այն մեծ հեռանկարներ ունի նաև խնդրի լուծման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու տեսակետից,

-և վերջապես, սա մի ասպարեզ է, որտեղ շատ հեշտ է ցույց տալ , որ Ղարաբաղին առաջարկվող լայն ինքնավարությունն ու մարդու իրավունքների հարգման խոստումները սնանկ են և Ղարաբաղի համար անդառնալիորեն անցած փուլ:

Այս ամենի պարագայում միանգամայն բնական հարց է ծագում. արդյո՞ք մենք կարիք ունենք մարտավարության ճշգրտումների, որոշ ուղղությունների ուժեղացման, որո՞նք են գլխավոր խնդիրներն ու, ի վերջո, որո՞նք են կարգավորման հիմնական շեշտադրումների մեր պատկերացումները:

Իհարկե, թե բարոյական, թե քաղաքական, թե իրավական ու պատմական առումով մենք իսկապես արդար ենք, սակայն դժբախտաբար մեր պատմության ընթացքում բազմաթիվ առիթներ ենք ունեցել համոզվելու համար, որ դա բացարձակապես բավարար չէ խնդրի արդար լուծում ակնկալելու համար: Ավելին, վնասակար է կեղծ հայրենասիրությունը, որի դրսևորումներն են սրան նրան ծախվածի, հայատյացի, թուրքասերի պիտակներ կպցնելը, տղայական հոխորտանքն ու սպառ-

նալիքները կամ խղճահարության աղիողորմ կոչերը՝ մեզ սպառնում է երկրորդ ցեղասպանություն, փրկեք քրիստոնեության դարպասների պահապանին և այլն: Զարմանալի է, որ այսօր դրան տուրք տվողներն ավելի շատ են, քան 1988-ին էր, երբ չունեինք պետություն, բանակ, Ղարաբաղի փաստացի լիակատար անկախություն և անվտանգության գոտիներ: Սա է այսօր Ղարաբաղյան խնդրին սպառնացող ամենամեծ վտանգը. խնդրի քաղաքական շահարկում իշխանության համար կամ նախընտրական պայքարում, հատվածական շահերի գերադասում ընդհանրականի ու համազգայինի նկատմամբ, ազգային միասնության ջլատում, ամենօրյա, շարունակական աշխատանքի փոխարինում կեղծ հայրենասիրական կեցվածքով ու ցուցամոլությամբ: Բարեբախտաբար այսօր այդ վտանգը դեռ չի վերածվել լուրջ սպառնալիքի, սակայն այն չտեսնելն անթույլատրելի է:

Խնդիրն իսկապես բարդ է , ինչպես բարդ է համազգային նշանակության ամեն մի խնդիր: Սակայն մի՞թե բարդ ու երբեմն էլ անհնարին չէր թվում այն, ինչ այսօր ունենք հենց նույն Ղարաբաղի հարցում: Եվ որևէ հիմք չկա ոչ վայնասունի, ոչ աղիողորմ շիվանի, ոչ էլ բանդագուշանքի, ինչով ցավոք սրտի զբաղվողներ կան: Դա ազնիվ չէ ոչ մեր ժողովրդի, ոչ Ղարաբաղի, ոչ էլ այն հազարավոր նվիրյալների հիշատակի նկատմամբ, որոնք հայ բազկի զորությամբ մեր Հայրենիքն ու արժանապատվությունը պաշտպանելու համար ոչինչ չխնայեցին: Այսօր հայ մտքի զորությունն ապացուցելու ժամանակն է :

Այդ առումով ցանկանում եմ անդրադառնալ նաև մեզ համար ավելի ու ավելի մեծ կարևորություն ստացող՝ խնդրի իրավական լուծմանը մեր պատրաստ լինելու հարցին: ԼՂՀ անկախության իրավական հիմնավորվածության անհերքելիության մասին խոսելիս մենք պարտավոր ենք ունենալ ցանկացած մակարդակով քննարկման համար ներկայացնելու պատրաստ հիմնավորում- վերլուծություններ: Հետևաբար կարևոր է ունենալ 1988 և, ինչու ոչ, 20-ական թվականներից սկսած բոլոր ատյաններում՝ ղարաբաղյան կառույցներից մինչև միջազգային կազմա-

կերպություններ, մինչ օրս ընդունված փաստաթղթերի լիակատար փաթեթ և դրա համապարփակ վերլուծություն: Անհրաժեշտ է ունենալ դրա վրա աշխատող մշտական գործող խումբ, որը միաժամանակ էական աջակցություն կարող է ցուցաբերել տարբեր ատյաններում աշխատող խմբերին:

Ամփոփելով, ցանկանում եմ արձանագրել հետևյալը.

Մենք կարծում ենք, որ

-Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը առաջնային է հակամարտությանն անչվող մյուս հարցերից, որոնց լուծումները պետք է բխեն կարգավիճակի ճշգրտումից, քանզի սկզբնական հիմնախնդիրը եղել է հենց դա, իսկ մնացյալը սոսկ զարգացումների հետևանք են:

-Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի համար մեզ համար ընդունելի տարբերակներից ներկայումս առավել հեռանկարային է ԼՂՀ անկախության ուղին: Իհարկե, մենք երբեք չենք հրաժարվելու մեր Հայրենիքն ամբողջական տեսնելու մեր իղձերից և համոզված ենք, որ դա իրականանալու է: Սակայն, այսօր ԼՂՀ անկախությունը շահեկան է թե միջազգային ընկալման առումով, թե Հայաստանը տարատեսակ մեղադրանքներից զերծ պահելու առումով:

-Խնդրի կարգավորման իրավական կողմը ստանում է ավելի ու ավելի մեծ նշանակություն և դա պահանջում է նոր որակի աշխատանք այդ ուղղությամբ:

-Խնդրի ծագման և զարգացման միջազգային ընկալման առումով անհրաժեշտ է լայնածավալ աշխատանք բոլոր ուղղություններով:

-Կարևորելով արդյունավետ համագործակցությունը միջազգային կազմակերպությունների ու տարբեր երկրների հետ, այդուհանդերձ խնդրի արդարացի և վերջնական լուծման գրավականը մեր կարծիքով համազգային կարողությունների կենտրոնացումն է և այն ուղեկցող գործընթացներում տարատեսակ շահարկումների ու հատվածական շահերի դրսևորումների բացառումը:

-Խնդրի լուծման մոտեցման, պատերազմի վերսկսումից խուսափելու և լուծման համար առավել բարենպաստ պայմաններ ստեղծելու տեսակետից բացառիկ նշանակություն ունի Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի ավելի ու ավելի ընդգրկումը եվրոինտեգրացիայի գործընթացներում:

ԻՆՉՈՒ ՊԱՏԱՀԵՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՃԱՆԱՉՎԻ՞ ԱՐԴՅՈՔ ԱՅՆ[20]

Պատմությունը օր մը ամենքս ալ պիտի դատե
և ամենուս ալ թերության ու հայրկության վրա
իր անաչառ վճիռը պիտի արձակե
Արշակ Չոպանյան

Հնարավո՞ր էր արդյոք խուսափել 1915-ի արհավիրքից, չկորցնել Ազգի ու Հայրենիքի զգալի մասը: Այս հարցը պարբերաբար արծարծվել, սակայն այսօր էլ չի կորցրել իր արդիականությունը: Պատասխանները եղել են բազմազան՝ այս կամ այն կուսակցության դեմ ուղղված մեղադրանքներից մինչև կրավորական դիրքորոշման որդեգրման անհրաժեշտության մատնանշում: Կրավորական դիրքորոշումը որպես ազգամիջյան խնդիրների լուծման բանալի առաջարկողներն իրենց տեսակետը հիմնավորում են պնդումով, որ ազգային-ազատագրական պայքարներն ինչ-ինչ նպատակներով հրահրում են օտարները՝ սեփական խնդիրների լուծման համար: Անշուշտ, ցանկալի է խուսափել օտարների միջամտությունից, բայց, այնուամենայնիվ, պետք է նշել, որ երբեք հնարավոր չի լինում այն լիովին բացառել, քանի որ ազատագրական պայքարի վերջին՝ զինված փուլի համար ամենապատեհ ժամանակը հզոր պետու-

20 1915 վերագնահատումներ և խնդիրներ Ազգայնական մատենաշար, թիվ 8, էջ 8-15, 1997թ

թյունների աշխարհաքաղաքական շահերի բախման ու նոր աշխարհակարգի հաստատման շրջանն է:

19-րդ դարի երկրորդ կեսը Եվրոպան նշանավորեց տնտեսության, գիտության և մշակույթի աննախադեպ վերելքով՝ Վերածննդի դարաշրջանից հետո: Դա ունեցավ իր երկակի ազդեցությունը հայության կյանքի հետագա ընթացքի վրա: Հայ երիտասարդության համար զգալի հնարավորություններ էին ստեղծվում կրթություն ստանալու, նոր գաղափարներ առաջադրելու, Ազգը ստեղծված ծանր կացությունից դուրս բերելու համար: Եվրոպայում կրթություն ստացող հայ երիտասարդությունն այնտեղ զգում էր նաև արագորեն զորացող ազգայնականության շունչը: Պատահական չէին փառավոր անցյալի ու հերոսների ոգեկոչումները, որոնք ավելի մեծ ընդգրկում ստացան հետագայում: Թվում էր, թե հայությունը հաստատ քայլերով գնում է դեպի ազատություն, որովհետև ոգու արթնացումը ուղեկցվում էր հայ քաղաքական մտքի ձևավորմամբ: Սակայն, ինչպես ցուց տվեց դեպքերի հետագա զարգացումը, ընդամենը մի քանի տասնամյակը, որ մեզ տրված էր այդ խնդիրների լուծման համար, օգտագործվեց ապարդյուն:

Միաժամանակ, եվրոպական հզոր պետությունների համար անհանդուրժելի էր դառնում Օսմանյան կայսրության տիրապետող դերը առևտրատնտեսական մայրուղիների խաչմերուկում և Ռուսաստանի առաջխաղացումը Օսմանյան կայսրության թե՛ արևելքում, և թե արևմուտք: Պատահական չէ, որ չափազանց կարճ կյանք ունեցավ 1878-ի Սան Ստեֆանոյի պայմանագիրը, որը հաստատագրում էր Ռուսաստանի հաջողությունները: Նույն տարում Բեռլինում հրավիրվեց միջազգային վեհաժողով, որի ընթացքում կնքված դաշնագրի 61-րդ հոդվածը, նվիրված հայկական հարցին, դարձավ Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի անգլիական խմբագրումը՝ զգալիորեն վատթարացնելով Արևմտյան Հայաստանի վիճակը: Այն Ռուսաստանին պարտավորեցնում էր վերադարձնել գրավված Ալաշկերտի հովիտն ու Բայազետը: Ավելին, Բեռլինում, որտեղ որոշվում էր Օսմանյան կայսրու-

թյան տիրապետության տակ գտնվող ժողովուրդների բախտը, հայկական պատվիրակությանը չլսեցին իսկ: Եվ չնայած պատվիրակության ղեկավար Խրիմյան Հայրիկը միանգամայն իրավացիորեն նշում էր, որ նման հավաքներին պետք է գնալ պատերազմներում թրծված շերեփով, սակայն դեռ երկար պիտի շարունակվեին սին հույսեր փայփայող հայկական պատվիրակությունների այցերը դարի հզորներին:

Բեռլինի վեհաժողովը դրեց Օսմանյան կայսրության քայքայման սկիզբը և պարզ էր, որ այն ազդանշան դարձավ թուրք իշխանություններին՝ թուրքական պետության հետագա գոյության նախադրյալները ստեղծելու համար: Բնական է, որ ամենամեծ խոչընդոտն Արևմտյան Հայաստանն էր՝ այնտեղ ապրող հայության գերակշիռ թվաքանակով: Աչքի առաջ ունենալով բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարը և քաջ գիտակցելով, որ հայությունը, եթե ոչ այսօր, ապա վաղն անպայման ոտքի է կանգնելու, սուլթանական Թուրքիայի կառավարողներն այդ տարածքում թրքության և թուրքական պետության գոյության ապահովությունը տեսան հայ ազգի չգոյության մեջ և հղացան ու մշակեցին նրա ֆիզիկական ոչնչացման ծրագիր, որի իրագործումը միայն պատեհ առիթի ու ժամանակի հարց էր:

Դժբախտաբար հայ քաղաքական միտքը չունեցավ իրատեսության ու սթափության անհրաժեշտ պաշար: Բեռլինում անգլիական դիվանագիտության հաղթանակը ռուսականի նկատմամբ նրան Ռուսաստանից մղեց Անգլիայի գիրկը: Եվ այստեղ ու այնտեղ ծայր առան ապստամբություններ, որոնք միայն խաղաքարտ էին ծառայում եվրոպական տերությունների ձեռքին: Իհարկե, խորին հարգանքի են արժանի այն հերոսները, որոնք զենքը ձեռքին իրենց տունն ու Հայրենիքն էին պաշտպանում տասնապատիկ թվային գերակշռություն ունեցող թշնամուց և հաստատում էին հայ ժողովրդի՝ իր ազատության համար պայքարելու ձգտումն ու ներուժը: Սակայն ակնհայտ է, որ այդ ապստամբություններն ի սկզբանե դատապարտված էին:

Դժբախտաբար բացակայում էր ամբողջ երկիրն ընդգրկող ընդհա-

նուր ղեկավարությունն ու համախմբվածությունը, զիված պայքարի մանրակրկիտ նախապատրաստումը: Դրա ամենացայտուն ապացույցն է 1894թ. Սասունի ապստամբությունը: Իհարկե, ասվածը չի բացառում թշնամու հարձակման ժամանակ զինված դիմադրությունը, ինչպիսին, օրինակ, Զեյթունի 1895թ. հերոսական պաշտպանությունն էր, սակայն միասնականության բացակայությունը, ձևավորվող կուսակցությունների միջև արդեն գոյություն ունեցող հակասությունները բացառում էին այնպիսի հաղթանակների հնարավորությունը, որոնք թույլ են տալիս հանդես գալ որպես բանակցող ու թելադրող, այլ ոչ թե օտարի ողորմածությունը հայցող կողմ:

Զարմանալի է, որ հարցի լուծման այն արատավոր ճանապարհը, որը հիմնված է «բողոքների», ցույցերի ու «քաղաքակիրթ աշխարհի» ուշադրությունը հրավիրող այլ գործողությունների վրա (դրա պսակը դարասկզբին եղավ «Բանկ Օտոման»-ի գրավումը), այդպես էլ չփոխվեց: Մինչդեռ ավարտվում էր 19-րդ դարը: Եվրոպական երկրները տենդագին նախապատրաստվում էին աշխարհի նոր վերաբաժանմանը, իսկ Ռուսաստանում հեղափոխությունն օրակարգի հարց էր դարձել: Թուրքիան նույնպես պատրաստվում էր փոփոխությունների: Ձևավորվում էր այն քաղաքական շրջանակը, որը փոխելու էր երկրի՝ իրեն սպառած սուլթանական դեմքը: Իսկ հայ քաղաքական գործիչները, տարված Եվրոպայում ու Ռուսաստանում փչող հեղափոխական հովերով, մի դեպքում Պոլսում սուլթանի տապալման նախապատրաստական աշխատանքներին էին մասնակցում, մյուս դեպքում՝ Թիֆլիսում, Բաքվում ու Պետերբուրգում՝ ցարի: Սեփական ծրագրի ու ազգային գաղափարախոսության բացակայությունը հայ քաղաքական գործիչներին ու կուսակցություններին եվրոպական ու ռուսաստանյան հիասթափություններից հետո դաշնակիցների որոնման ճանապարհին մղեց դեպի «նոր» թուրքերը:

Իզուր էր դեռ 1878-ին Ռաֆֆին գրում. «Մեզանում կան մի տեսակ կարճատեսներ, դժբախտաբար դրանց թիվը մեծ է, որոնք մտածում են, թե այժմյան բարբարոսությունները, հարստահարությունները մի օր

կվերջանան, երբ թուրքը կքաղաքակրթվի, այն ժամանակ, ասում են, հայը քաղաքացու հավասար իրավունք և ազատ կյանք կվայելե:

Այդ ցնորք է:

Թուրքը այսօր անկիրթ բարբարոս է, բայց քաղաքակրթվելուց հետո կդառնա կրթյալ ավազակ և այն ժամանակ ավելի վտանգավոր կդառնա... Ով որ ուրանում է պատմությունը, առաջ ինքն է կնքում իր դատապարտության դատակնիքը»:

Ո՞վ էր լսողը:

Դաշնակցական պատվիրակությունը հրավիրվեց Փարիզում գումարված(1907թ.) «օսմանցի ազատականների» համագումարին, որը կազմակերպել էին «երիտթուրքերը»: Հայկական հարցի նկատմամբ այնտեղ արտահայտված ու հետագայում դույզն ինչ չփոխված «երիտթուրքերի» դիրքորոշումն էլ դաշնակցականներին ետ չպահեց նրանց հետ 1908թ. գործակցելուց: Եվ հատուցումը շատ չուշացավ: Թավշյա հեղափոխությամբ իշխանության եկած «երիտթուրքերը» երկրում հաստատեցին «ազատական» ռեժիմ, հրապարակեցին սահմանադրություն ու ... Պոլսի հայ քաղաքական գործիչների դեմքին սառեց արբեցումի ժպիտը՝ Կիլիկիայում սկսվեցին ջարդերը:

Վատնվում էր թանկարժեք ժամանակը, որը թեև պարգևում էր նոր հերոսներ, սակայն բերում էր նոր հուսախաբություններ, նոր կորուստներ ու գլխապտույտ արագությամբ մոտեցնում էր արհավիրքը:

Թուրքիայի արևմտյան ու հարավային սահմաններում կրկին բռնկվեցին պատերազմներ: Նախ Իտալիան ծնկի բերեց Թուրքային(1911-1912թ.թ.), ինչը նոր թափ հաղորդեց բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժմանը (1912-1913թ.թ.), որի տրամաբանական ավարտը եղավ որոշ երկրների անկախացումը: Ոգևորվեց նաև հայությունը: Սակայն ժամանակն անդառնալիորեն կերսված էր:

Եվ ահա թուրքը վերջապես ստացավ պատեհ առիթն ու բաղձալի պահը: Սկսվեց առաջին համաշխարհայինը, որտեղ պատերազմող կողմերից յուրաքանչյուրն իրեն ազատ էր զգում՝ նպատակին հասնելու հա-

մար ցանկացած միջոց կիրառելիս, քանի որ հատուցում պահանջող չէր լինելու: Իրականանում էր թուրքի ինքնարյուրամյա երազանքը: Արևմտյան Հայաստանը «մաքրվում» էր հայությունից: Եվ դա այն ժամանակ, երբ թվում էր, թե ևս մեկ-երկու տասնամյակ ու թուրքական տարրը համաշխարհային թատերաբեմից կքաշվի մի անկյուն՝ այլևս իր համեստ գոյությունը քարշ տալու:

Ժամանակի հայ քաղաքական գործիչների ու կուսակցությունների խղճին ծանրացավ Ազգի ու Հայրենիքի զգալի հատվածների կորուստը: Ժողովուրդն անգլուխ էր ու անտեր: Իհարկե, կային անհատներ(Հրայր Դժոխք, Նիկոլ Դուման և այլք), ովքեր ժամանակին տեսնում էին փրկության ճանապարհն ու մատնանշում այն: Սակայն նրանք, ինչպես նաև այս ու այնտեղ կազմակերպված ինքնապաշտպանական հերոսական կռիվներն ու հայդուկային խմբերի հաջողությունները, որ միայն առանձին անհատների ռազմական տաղանդի ու անսահման հայրենասիրության արդյունք էին, չկարողացան փոխել դեպքերի ընթացքը:

Զարհուրելի է ու պատկերացումից դուրս, որ մեկուկես միլիոն հայ զոհվեց ու հնարավոր չեղավ գոնե պաշտպանվել ու գոյատևել հայրենի տարածքներում: Միլիոնանոց ժողովուրդը կարող էր հարյուրհազարանոց բանակ կազմել ու դիմակայել թեկուզ իրեն տասնյակ անգամներ գերազանցող թուրքական բանակին: Սակայն դա ի զորու էր անել այն ժողովուրդը, որի ղեկավարները իրեն ներարկել էին վճռական մենակի հոգեբանությունը: Մինչդեռ հայության քաղաքական հոսանքների մտայնության մեջ գերիշխող էր հոտային հոգեբանությունը և որպես հետևանք՝ կողմնորոշումների գաղափարը: «Այս հոսանքներն արդեն արտահայտություն են ստացել մեր կյանքում՝ իբրև ռուսական կամ արևմտյան օրիենտացիայի-խոսք կա անգամ Տաճկաստանի մասին- ձգտող խմբավորումներ, որոնց խելակորույս, ազգային տեսակետից անիմաստ բախումների հետևանքով մեծապես դյուրացվեց Հայաստանի անկումը և բաժանումը Ռուսիո և Թուրքիո միջև»,-գրում էր Նժդեհը: Որքան անո-

ողք, նույնքան էլ անաչառ ու ընդգրկուն է հայ քաղաքական ուժերի գործունեության այս գնահատականը:

Ինչքան էլ ցավալի է, բայց 1915-ն էլ վերջնականորեն չսթափեցրեց հայ քաղաքական հոսանքներին: Նույն ախտն էր պատճառ, որ փաստորեն անկախացած Կիլիկիան իրեն հովանավոր ընտրեց Ֆրանսիան և հետագայում դարձավ առևտրի առարկա՝ վերջինիս և Թուրքիայի համար: Նույն ախտն էր պատճառը, որ թույլ տրվեց անգլիական զորքերի մուտքն Արցախ, ինչը վերջինիս կորստյան պատճառներից մեկը եղավ: Այդ ախտն էր պատճառը, որ Պողոս Նուբարը ոչ միայն միացյալ Հայաստանի ստեղծման գաղափարն էր կապում օտարների հովանավորության հետ, այլև նրա վարչապետի, այսինքն՝ իր համար նստավայր էր ընտրել Փարիզը: Այդ ախտն էր պատճառը, վերջապես, որ Հայրենիքի համար օրհասական պահին անգամ ստեղծվում էին արևմտահայերի ու արևելահայերի առանձին դիվանագիտական խմբեր (Նուբար փաշայի ու Ա. Ահարոնյանի գլխավորությամբ 1919թ. ամռանը Փարիզում և Վ. Թեքեյանի ու Ս. Վրացյանի գլխավորությամբ՝ նույն թվականի վերջին Երևանում), որոնք այդպես էլ փոխըմբռնման չեկան:

Ժամանակն անպտուղ վատնված էր ու հայությունից պահանջվում էին ահռելի ջանքեր՝ ետ վերադարձնելու համար կորցրածը: Ստեղծված իրավիճակում, երբ Արևմտյան Հայաստանը լիովին զրկվել էր հայ բնակչությունից, իսկ Արևելյան Հայաստանը գտնվում էր ԽՍՀՄ կազմում, դրա հնարավոր ճանապարհը Ցեղասպանության ճանաչումն էր:

* * *

Հայոց ցեղասպանության նկատմամբ աշխարհի ուշադրությունը հատկապես սրվեց 90-ականներին: Ռուսաստանի խորհրդարանում՝ Պետական Դումայում առաջին անգամ օրակարգի հարց դարձավ այն և արվեց դատապարտող հայտարարություն: ԱՄՆ նախագահը հանդես

եկավ նմանատիպ մի հայտարարությամբ: Ֆրանսիայում կոմունիստները փորձեցին հարցը քննարկման առարկա դարձնել խորհրդարանում և նույնպես հայտարարություն արեցին այդ առիթով: Եվ, օ զարմանք, Իսրայելի իշխանությունները դատապարտեցին Ցեղասպանությունն ու «հանձն առան» թույլ չտալ, որ երբևիցե այն մոռացվի:

Սակայն ի՞նչ է պատահել: Արթնացել է մարդկության խ՞իղճը, մոտ է արդարության հաղթանակի ժա՞մը: Բնա՛վ, երբեք:

70-ական թվականների երկրորդ և 80-ականների առաջին կեսերին նույնպես քաղաքական շրջանակներում մեծացել էր Ցեղասպանության հարցի նկատմամբ հետաքրքրությունը: Միացյալ Նահանգներում նախագահական ընտրարշավների մասնակիցները խոստանում էին հաղթանակի դեպքում ամեն ինչ անել, որ Ցեղասպանությունը պետականորեն ճանաչվի ԱՄՆ-ում և ողջ աշխարհում, սակայն հաղթանակից հետո սկսում էին տառապել հիշողության կորստով: ՄԱԿ-ի համապատասխան հանձնաժողովները մի քանի անգամ լսեցին հարցը, սակայն Թուրքիայի ջանքերի շնորհիվ և այլոց աջակցությամբ այն փակվեց: Վերջապես, Եվրախորհրդարանը ճանաչեց Ցեղասպանությունը, ինչը մինչ օրս մնում է խնդրո առարկայի վերաբերյալ ամենամեծ ձեռքբերումը: Սակայն այն ժամանակ արդեն բացահայտ էր, որ օտարները միայն շահարկում են հարցը՝ այն ծառայեցնելով իրենց այս կամ այն խնդրի լուծմանը: Եթե Միացյալ Նահանգները ՄԱԿ-ում հարցի քննարկումները «քնեցնելու» դիմաց զգալիորեն ընդլայնեցին իրենց ռազմական հենակետերը Թուրքիայում, ապա եվրոպական երկրները Եվրախորհրդարանի որոշումով չափավորեցին Եվրամիությանն անդամակցելու Թուրքիայի ախորժակը:

Մեր օրերում, երբ այդ երկիրը նորից չի թաքցնում իր ակնկալիքները ԱՄՆ-ից, Իսրայելին, ավելի քան երբևէ, պետք է չկորցնել սերտ հարաբերությունները մուսուլմանական աշխարհի գոնե մեկ ներկայացուցչի հետ և լուծել ոռոգման ջրի հիմնահարցը, երբ Ռուսաստանը պետք է սանձնահարի Թուրքիայի նկրտումները ոչ միայն նեղուցների միանձն-

յա տիրոջ դերի, այլև նախկին ԽՍՀՄ-ի մուսուլմանական շրջաններում հաստատվելու վերաբերյալ, նորից այդ երկրները հիշում են Ցեղասպանությունը: Ընդ որում, եթե դատապարտվում են թուրքական վայրագությունները, ապա «մոռացվում» է Հայրենիքի՝ այսօր Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հատվածի վերադարձի խնդիրը: Եվ դա բնական է, քանի որ օտարներն ակնկալում են միայն Թուրքիայի հատուցումը՝ հարցն ավելի չխորացնելու դիմաց: Պատահական չէ, որ այսօր չի լսվում գորշ գայլի կատաղի ոռնոցը, թուրքը զբաղված է հնարավոր նվազագույն գնով իր պահանջատերերի «բերանը փակելու» ճանապարհների որոնումներով:

Այո, կատարվածը բնական է և արդեն ոչ մեկ անգամ փորձված: Անբնականը մեկ այլ բան է: Անկախության վերականգնումից հետ Հայաստանը Թուրքիայի նկատմամբ որդեգրել է այնպիսի քաղաքականություն, որը ստվերում է թողնում Ցեղասպանության փաստը: Մինչ օտարները բազմիցս շահարկեցին այն, Հայաստանի իշխանությունները փորձում են բարիդրացիական հարաբերություններ հաստատել արևմտյան հարևանի հետ: Ցավոք տարիներ պահանջվեցին հասկանալու համար, որ այդ քաղաքականությունը սնանկ է և անգամ չի կարող մեղմել Թուրքիայի լկտիությունը: Իրադարձությունների ընթացքը հաստատեց նաև, որ սնանկ էր նաև այն պնդումը, թե Ցեղասպանության հարցի արծարծումը կարող է խանգարել Ղարաբաղյան խնդրի լուծմանը: Պատահական չէ, որ մի քանի ծանր հարվածներ ստանալուց և, ի վերջո, ԵԱՀԿ լիսաբոնյան գագաթաժողովում 53 երկրների դեմ մենակ մնալուց հետո Հայաստանի դիվանագիտությունը՝ որպես դաժան պայքարում վերջին խաղաթուղթ, փորձում է օգտագործել Ցեղասպանությունը: Ըստ փոխարտգործնախարար Վարդան Օսկանյանի, Հայաստանը 1997-ին ՄԱԿ-ում արծարծել է Ցեղասպանության ճանաչման խնդիրը: Սակայն չպետք է մոռանալ, որ հարցի արծարծումն ինքնին հաջողություն չի կարող ապահովել: Որպեսզի այն ոչ միայն լուծվի, այլև նպաստի Ղարաբաղյան խնդրի հաջող ելքին, անհրաժեշտ է ճշգրտորեն սահմանել պա-

հանջները և իրականացնել հսկայածավալ նախապատրաստական աշխատանք: Ղարաբաղյան խնդրի վիճակը վկայում է, որ Հայաստանի դիվանագիտությունը նախընտրում է «կես քայլերի» քաղաքականությունը և անպատրաստ է ներկայանում վերջնական հավաքներին, որտեղ ոչ թե վճռվում են հարցերն, այլ միայն վավերացվում են նախօրոք պատրաստված վճիռները: Դժվար է ասել, արդյոք դառը փորձը դաս կլինի, սակայն ակնհայտ է, որ լուծվում են հայության համար բախտորոշ հարցեր և հետագա վարանումը կարող է հանգեցնել անդառնալի կորուստների: Հայաստանը պետք է գործի վճռականորեն և պահանջի ոչ միայն Ցեղասպանության ճանաչում, այլև բռնազավթված տարածքների վերադարձ: Միայն այդ դեպքում է իմաստալից խնդրի արծարծումը և միայն Հայաստանի անզիջում դիրքորոշման ու համապատասխան մարմինների լայնածավալ, հետևողական աշխատանքի դեպքում է հնարավոր թե՛ Ցեղասպանության ճանաչումը, թե Ղարաբաղյան խնդրի լուծումը, որոնք, ի վերջո, նույն նպատակի՝ հայրենատիրության գործընթացի երկու անբաժանելի բաղադրիչներն են:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընդունվել է 29.04.2008

Արտահայտելով իր անհանգստությունը Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորմանն առնչվող վերջին շրջանի զարգացումների վերաբերյալ,

Խաղաղ, բանակցությունների միջոցով կարգավորումը համարելով հակամարտության կողմերի ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակում միակ ընդունելի ուղին,

Խիստ վտանգավոր համարելով հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի խափանման նպատակ հետապնդող՝ Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնյաների շարունակական ռազմատենչ, հայատյաց քարոզչությունը և դրա կապակցությամբ միջազգային հանրության արտահայտած մտահոգության անհասցեականությունը և անհետևողականությունը,

Դատապարտելով ադրբեջանական բանակի կողմից հրադադարի խախտմանն ուղղված սադրիչ գործողությունները, մասնավորապես, մարտի 4-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածք ադրբեջանական զինուժի ներխուժման փորձը,

Նկատի ունենալով Ադրբեջանի անբաքույց քայլերը՝ հակամարտու-

թյան խաղաղ կարգավորման բանակցությունների գործընթացը խափանելու, նավթային ֆինանսական հոսքերի հաշվին ռազմական գերակշռության հասնելու և պատերազմի միջոցով խնդիրը լուծելու ուղղությամբ,

Ադրբեջանի կողմից կարգավորման գործընթացի տապալման ակնհայտ փորձ որակելով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների նկատմամբ իրականացվող շանտաժը՝ անվստահություն արտահայտելու և խնդրի կարգավորման քննարկումներն այլ կազմակերպություններ տեղափոխելու վերաբերյալ սպառնալիքների ուղեկցությամբ,

Վտանգավոր համարելով Մինսկի խմբի շրջանակներում խնդրի կարգավորման սկզբունքների հատվածական հրապարակումները՝ որպես տարատեսակ շահարկումների հնարավորություն,

Անսակարկելի եւ միջազգային իրավունքի սահմաններում անթերի համարելով Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը, դրա իրացումը և այդ սկզբունքի անվերապահ կիրառման անհրաժեշտությունը խնդրի կարգավորման ժամանակ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

Հայաստանի Հանրապետության Նախագահին և կառավարությանն առաջարկում է՝

- Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորմանն ուղղված հայաստանյան քաղաքականությանը հաղորդել ավելի նախաձեռնողական բնույթ.

- ակտիվացնել եւ ընդլայնել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի վերաբերյալ միջազգային հանրությանը լիարժեք տեղեկացնելուն ուղղված միջոցառումների մշակման և իրականացման ջանքերը՝ այդ նպատակով ներգրավելով համահայկական ներուժը, հնարավորություններն ու միջոցները.

- միջազգային իրավունքի շրջանակներում մշակել այն իրավական հիմքերը, որոնք կապահովեն առավել արդյունավետ համագործակցություն Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հան-

ռապետության միջև, ինչպես նաև Ադրբեջանի կողմից ռազմական ագրեսիայի կամ այլ բռնի միջոցների կիրառման դեպքում Հայաստանի Հանրապետությանը՝ որպես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անվտանգության երաշխավորի, հնարավորություն կտան ապահովելու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության լիարժեք անվտանգությունն ու պաշտպանությունը.

- բանակցությունների արդյունավետության ապահովման նպատակով ամեն ջանք գործադրել՝ վերականգնելու համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ներկայացուցիչների լիարժեք մասնակցությունը այդ գործընթացին՝ որպես հակամարտության միջազգայնորեն ճանաչված կողմ.

- նախապատրաստել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության միջազգային ճանաչման այլընտրանքային հնարավորություններ, որոնք պետք է գործադրվեն Մինսկի խմբի շրջանակներում ընթացող բանակցությունների տապալման դեպքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Տ. ԹՈՐՈՍՅԱՆ
29.04.2008
Հ-2

ДЕКЛАРАЦИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ, АЗЕРБАЙДЖАНСКОЙ РЕСПУБЛИКИ И РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ

Президенты Республики Армения, Азербайджанской Республики и Российской Федерации, встретившись 2 ноября 2008 года в Москве по приглашению Президента Российской Федерации,

предметно и содержательно обсудив в атмосфере конструктивности состояние и перспективы урегулирования нагорнокарабахского конфликта политическими средствами, путём продолжения прямого диалога между Арменией и Азербайджаном при посредничестве России, США и Франции в качестве Сопредседателей Минской группы ОБСЕ,

1. Заявляют, что будут способствовать оздоровлению ситуации в Южном Кавказе и обеспечению установления в регионе обстановки стабильности и безопасности путем политического урегулирования нагорнокарабахского конфликта на основе принципов и норм международного права и принятых в этих рамках решений и документов, что создаст благоприятные условия для экономического развития и всестороннего сотрудничества в регионе.

2. Подтверждают важнос значение продолжения Сопредсе-

дателями Минской группы ОБСЕ посреднических усилий с учётом их встречи со сторонами в Мадриде 29 ноября 2007 года и последующих дискуссий в целях дальнейшей разработки основных принципов политического урегулирования.

3. Соглашаются, что достижение мирного урегулирования должно сопровождаться юридически обязывающими международными гарантиями всех его аспектов и этапов.

4. Отмечают, что президенты Азербайджана и Армении договорились продолжить работу, в том числе в ходе дальнейших контактов на высшем уровне, над согласованием политического урегулирования нагорнокарабахского конфликта и поручили своим министрам иностранных дел активизировать дальнейшие шаги в переговорном процессе во взаимодействии с Сопредседателями Минской группы ОБСЕ.

5. Считают важным поощрять создание условий для реализации мер по укреплению доверия в контексте усилий по урегулированию.

Москва, 2 ноября, 2008г.

JOINT STATEMENT OF THE MINISTRIES OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA, THE REPUBLIC OF TURKEY AND THE SWISS FEDERAL DEPARTMENT OF FOREIGN AFFAIRS

Turkey and Armenia, together with Switzerland as mediator, have been working intensively with a view to normalizing their bilateral relations and developing them in a spirit of good-neighborliness, and mutual respect, and thus to promoting peace, security and stability in the whole region.

The two parties have achieved tangible progress and mutual understanding in this process and they have agreed on a comprehensive framework for the normalization of their bilateral relations in a mutually satisfactory manner. In this context, a road-map has been identified.

This agreed basis provides a positive prospect for the on-going process.

Geneva, 23 April 2009

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՇՆԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանը և Թուրքիան, Շվեյցարիայի միջնորդությամբ, ինտենսիվ աշխատանք են տարել, նպատակ ունենալով կարգավորել իրենց երկկողմ հարաբերությունները և զարգացնել դրանք փոխադարձ հարգանքի ու բարիդրացիության ոգով՝ այսպիսով խթանելով խաղաղությունը, կայունությունը և անվտանգությունը ողջ տարածաշրջանում:

Այդ գործընթացում երկու կողմերը ձեռք են բերել շոշափելի առաջընթաց և փոխըմբռնում: Նրանք համաձայնության են հանգել իրենց երկկողմ հարաբերությունների կարգավորման համապարփակ շրջանակի շուրջ երկու կողմերին գոհացնող կերպով: Այս համատեքստում սահմանվել է ճանապարհային քարտեզ:

Այս համաձայնեցված հիմքերը դրական հեռանկար են ստեղծում գործընթացի շարունակման համար:

Ժնև, 23 ապրիլի, 2009թ

STATEMENT BY THE OSCE MINSK GROUP CO-CHAIR COUNTRIES

L'AQUILA, Italy, 10 July 2009 - The countries of the Co-Chairs of the OSCE Minsk Group released the following today:

Joint Statement on the Nagorno-Karabakh Conflict by U.S. President Obama, Russian President Medvedev, and French President Sarkozy at the L'Aquila Summit of the Eight, July 10, 2009.

We, the Presidents of the OSCE Minsk Group's Co-Chair countries France, the Russian Federation, and the United States of America affirm our commitment to support the leaders of Armenia and Azerbaijan as they finalize the Basic Principles for settlement of the Nagorno-Karabakh conflict.

We are instructing our mediators to present to the Presidents of Armenia and Azerbaijan an updated version of the Madrid Document of November 2007, the Co-Chairs last articulation of the Basic Principles. We urge the Presidents of Armenia and Azerbaijan to resolve the few differences remaining between them and finalize their agreement on these Basic Principles, which will outline a comprehensive settlement.

Fact sheet

The ministers of the US, France, and Russia presented a preliminary version of the Basic Principles for a settlement to Armenia and Azerbaijan in November 2007 in Madrid.

The Basic Principles reflect a reasonable compromise based on the Helsinki Final Act principles of Non-Use of Force, Territorial Integrity, and the Equal Rights and Self-Determination of Peoples.

The Basic Principles call for inter alia:

—return of the territories surrounding Nagorno-Karabakh to Azerbaijani control

—an interim status for Nagorno-Karabakh providing guarantees for security and self-governance,

—a corridor linking Armenia to Nagorno-Karabakh;

—future determination of the final legal status of Nagorno-Karabakh through a legally binding expression of will;

—the right of all internally displaced persons and refugees to return to their former places of residence;

and — international security guarantees that would include a peacekeeping operation.

The endorsement of these Basic Principles by Armenia and Azerbaijan will allow the drafting of a comprehensive settlement to ensure a future of peace, stability, and prosperity for Armenia and Azerbaijan and the broader region.

ԵԱՀԿ ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մենք, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների՝ Ֆրանսիայի, Ռուսաստանի Դաշնության և Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահներս, հաստատում ենք մեր նվիրվածությունը՝ աջակցելու Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարներին Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հիմնարար սկզբունքները վերջնական տեսքի բերելու գործում:

Մենք հանձնարարում ենք մեր միջնորդներին՝ Հայաստանի և Ադրբեջանի նախագահներին ներկայացնել 2007թ. նոյեմբերի Մադրիդյան փաստաթղթի լրամշակված տարբերակը՝ Հիմնարար սկզբունքների նոր շարադրանքը համանախագահների կողմից: Մենք հորդորում ենք Հայաստանի և Ադրբեջանի նախագահներին լուծել իրենց միջև մնացած սակավաթիվ տարաձայնությունները և ավարտուն տեսքի բերել այդ հիմնարար սկզբունքների վերաբերյալ իրենց համաձայությունը, ինչը կուրվագծի համապարփակ կարգավորում:

Փաստական հավելված

ԱՄՆ, Ֆրանսիայի և Ռուսաստանի նախարարները 2007թ. նոյեմբերին Մադրիդում Հայաստանին և Ադրբեջանին ներկայացրեցին կարգավորման Հիմնարար սկզբունքների նախնական տարբերակը:

Հիմնարար սկզբունքները արտահայտում են ողջամիտ փոխզիջում, որը հիմնված է Հելսինկյան եզրափակիչ ակտի հետևյալ սկզբունքների

վրա՝ ուժի չկիրառում, տարածքային ամբողջականություն, ժողովուրդների հավասար իրավունքներ և ինքնորոշում:

Հիմնարար սկզբունքները սահմանում են

1.Լեռնային Ղարաբաղի հարակից տարածքների վերադարձ Ադրբեջանի վերահսկողության ներքո,

2. Միջանկյալ կարգավիճակ Լեռնային Ղարաբաղի համար՝ ապահովելով անվտանգության և ինքնակառավարման երաշխիքներ,

3. Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը կապող միջանցք,

4. Լեռնային Ղարաբաղի ապագա իրավական կարգավիճակի սահմանում՝ իրավականորեն պարտավորեցնող կամարտահայտության միջոցով,

5. Բոլոր ներքին տեղահանված անձանց և փախստականների՝ իրենց մշտական բնակության նախկին վայրերը վերադառնալու իրավունք,

6. Անվտանգության միջազգային երաշխիքներ, այդ թվում և խաղաղապահ առաքելություններ:

Լ'Աքիլա, Իտալիա, Ութնյակի գագաթաժողով, 10 հուլիսի, 2009թ.

ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԸ ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ.

Լեռնային Ղարաբաղի հակամարտություն, հայ-թուրքական հարաբերություններ

Պատվեր՝ 1033. Տպաքանակ՝ 300·
Չափսը՝ 60x84/16 7 75 տպ մամուլ

Տպագրված է **«Տիգրան Մեծ»** հրատարակչության տպարանում

Տիգրան Սուրիկի ԹՈՐՈՍՅԱՆ

Տնտեսագիտական գիտությունների թեկնածու:
Հեղինակ է ավելի որոշակի վերաբերող 10 գրքերի և ավելի քան 30 գիտական աշխատությունների:

Միջազգային գիտությունների դոկտոր:
Հեղինակ է «Հանրապետական հասանելության հեռահաղորդակցային տեղեկատվությունը»(2006թ.), «Լեռնային Ղարաբաղի հանրապետության կառավարումը միջազգային իրավունքի շրջանակներում»(2008թ.), "Combat solution in the framework of the International Law."(2008թ.) մենագրությունների, երեք ստեղծագործ վիճակում և երկու հայրենիքի ազգի վերածնման հոդվածների, որոնք հրատարակվել են հայաստանյան և օտարերկրյա սարքերգրագրքերում և ժողովածուներում:
Միջազգային սեռական հանցագործության սարտոփոիր դոկտոր:

2006-2008թթ. ՀՀ Սկզբային ժողովի նախագահ:
1999-2006թթ. ՀՀ Սկզբային ժողովի փոխնախագահ:
2001-2006թթ. Սկզբային ժողովի Էկոնոմիկան ինտեգրացիայի հարցերի հանձնաժողովի հանձնաժողովի նախագահ:
1999 թվականից Հայաստանի Հանրապետության Սկզբային ժողովի պատգամավոր է:

2003-2007թթ. Էկոնոմիկայի խորհրդի խորհրդատվական վերանայողական(ՀԽՎԷ) Հայաստանի պատվիրակության դիտորդ:
2004-2007թթ. ԵԽՎԷ Էկոնոմիկայի ժողովրդագրության խնդրի փոխնախագահ:
2006-2007թթ. ԵԽՎԷ անդամ սեռերության հանձնաժողովների և սարքավորությունների կառավարման վերահսկող (մոնիտորինգի) հանձնաժողովի փոխնախագահ:

Պարգևատրվել է. Հայաստանի Հանրապետության «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» առաջին աստիճանի մեդալով.
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Սուրբ Սեղրոպ Մաշտոց» շքանշանով.
ՀՀ Պաշտպանության նախարարության «Գարեգին Նժդեհ» մեդալով: